— 152. Ներսէս կրոնավոր, որդի Յովիաննէսի. մայրն է Աւագատիկին. Եղբայրներն են Ստեփաննոս քահանա և Աւետիս վարդապետ. երեքն էլ միաբան Խիզանի Ս. Խաչ վանքի՝ հիշված են 1402, 1413 և 1420 թվերին:—Նօտարք 17, 42, 43, 63:

— 153. Ներսէս քահանա, շինել է մի ջրհոր՝ Բագուի Բղովնա գյուղում, 1421 թ.—Մերատեանց, Սաղիան 173:

— 154. Ներսէս բարունի, առաջնորդ Գամազիէլի վանքի, 1427 թ.—Նօտարք 83: (Հմմտ. վիրը № 151):

— 155. Ներսէս փիլիսոփա՝ Կողուց վանքում, 1428 թ.—Տաշեան, Ցուց. 583:

— 156. Ներսէս մահտասի, նորոգնեց, կազմեց և մի հիշատակարան գրեց այն Աւետարանի մեջ, որ Հայրապետ կրոնավորը գնեց 1431 թ.—Նօտարք 97:

— 157. Ներսէս արեղա, որդի Սարգսի. դիմեց Թովմա Մեծոփեցուն և նրա աշակերտ Մկրտիչ, Յովիաննէս և Զաքարիա վարդապետներին զրել տվեց ժամագիրքը՝ 1432 թ. և Պատարագամատոյցը 1427 թ. Մեծոփում և Խերծայում (Զեռ. Միւնի. 19—20):—Նույն է Ներսէս արեղա Մեծոփեցին, որ արտադրել է Պատարագամատոյցը 1427—32 թվերին (Տաշեան, Ցուցակ 686): Տես և Զեռ. Վիեն. 15 թ, ուր հիշվում է Թովմայի աշտկերտ Ներսէս վարդապետի նախագաղափար ժամագիրքը:

— 158. Ներսէս կրոնավոր, Թովմաս կրոնավորի հետ ստացավ Մատթէոս քահանայի օրինակած ժողովածուն, որ միասին նորոգեցին և կազմեցին՝ 1432 թ.—Manus. Եթի. ութ. էջ 155:

— 159. Ներսէս քահանա, որդի Ուժիկի. մայրն է Թաճիսթուն. իր Եղբայրների (Գրիգոր, Յորդանան և Ստեփաննոս) հետ Ուրանց գյուղում, Թումայ կրոնավորին զրել տվեց մի Աւետարան 1433 թ.—Զեռ. Վասպ. 364—6:

— 160. Ներսէս «զեռարոյ», երեկ Եղբարորդին էր Յովիաննէս սարկավագի, որ Արղնոյ Բագուր գյուղում օրինակեց Մաշտոցը 1434 թ.—Թորոս աղբ. Բ. 413:

— 161. Ներսէս քահանա, որդի Շնոֆոր պարոնի, Մերամբայում գրել տվեց մի ձաշոց 1438 թ.—Զեռ. Մեր.—ՀԱ 1926, 243—4:

— 162. Ներսէս քահանա, հայր Բարթուղիմէոս Աստղեալի

վանոց առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսի, որ ստացած մի Յայսմաւուրք 1438թ.—Զեռ. Թաւր. 41:

— 163. Ներսէս վարդապետ, հայ թարգման Ֆլորենտիայի պապական ժողովի պատգամավորների. մասնակցել է ժողովի նիստերին, որի վճիռներն էլ լատիներենից հայերենի թարգմանելով ստորագրեց. Սրանով հայ եկեղեցին ուրանում է իր գովանանքը և ընդունում է լատին գավանանքը. որով հրաժարվելով իր անկախությունից դառնում է հրու հպատակ Հռոմի պապին. Ներսէսի անունը հիշված է միայն պապական հրովարտակում (1439թ.)—Զամէ. Գ. 481, Պալճեան 93, 134, 137:

— 164. Ներսէս արեղա, Երզնկայի Աւագ վանքում, 1439թ.—Տաշեան, Ցուց. 49:

— 165. Ներսէս կրոնավոր, միաբան Երզնկայի Ս. Կիրակոս վանքի. գրել է մի Յայսմաւուրք, 1446թ.—Թորոս աղբ. Բ. 296:

— 166. Ներսէս քահանա, մի խումբ գրիչների գրել ավեց Յայսմաւուրքը և Նվիրեց Նորգեղկայ Ս. Կիրակոս վանքին (Երզնկա), 1446թ.—Նօտարք 148—9, 151:

— 167. Ներսէս արեղա, մասնակցեց նախորդ Յայսմաւուրքի խմբական օրինակության, որ կազմակերպեց Ներսէս քահանան Երզնկայում 1446թ.—Նօտարք 149:

— 168. Ներսէս սարկավագ, որդի Յակոբ քահանայի, եղբայր Յովհաննէս քահանա գրչի (№ 1094), որ Թուրքանդա տիկնոջ համար սկսեց մի Աւետարան արտագրել 1448թ. Հաջորդ օրը մեռագ իր եղբայրը Ներսէս, որի համար հետեւյալ սրտառոչ տողիրն է նվիրում գրիչը.—«Եկիզբն արարի սուրբ աւետարանին ի Պէտք ամէն, յաւուր չորեքշարթի յարութեան Զատկին, որ և ի միւս աւուրն սուգ արտառութեան և դառնակսկիծ աղէտ հհաս ինձ և ծերացեալ ծնաւղի իմոյ. Վասն զի հրաման հնաս յԱրքուն փոխիլ առ Տէր լիրդահատոր եղբաւը իմոյ հարազատ՝ Ներսէսի, 20 ամեայ, լի չնորհաւք սարկաւագ, լցեալ աստուածային իմաստութեամբն, խոնարհ և հեղ բարուք, քաղցրատես և սիրուն յաչս ամենեցուն. ևս առաւել Արարչին իւրոյ, նման սրբոյն Ստեփաննոսի նախասարկաւագին. Վասն որոյ ոչ արժան համարեցաւ զայնպիսի պատուական եղբայրս ինձ մեղաւորիս. այլ փոխեցաց աստի, ի դառն և մեղսաւէր աշխարհէս, ուր ինքն կամեցաւ Բայց զի թեպէտ և նորա հանգիստ էր և ընդ հրեշտակս ցնծութիւն՝ այնպիսի անմեղութեամբ մահն, այլ ծնաւղին իւրոյ և ինձ անչափ արտառութիւն և դառն կսկիծ. Վասն որոյ յոյժ

արտառութիւնը և արտասոււրից աչօք գրեցի»:—Զեռ. Վասպ.

402 (Մնացյալը տես Յովհաննէս № 1094):

— 169. Ներսէս վարդապետ, առաջնորդ Արպելանայ ուխտին, 1449թ.—Նօտարք 161, Manus. brit. mus. 95թ:

— 170. Ներսէս քահանա, մեծ հայր Վարդան գրակապի, որ Արճէշում, Յովհաննէս գրչին գրել ավեց Աւետարանը 1450թ.—Զեռ. Թաւր. 66թ:

— 171. Ներսէս սարկավագ, եղբոր կամ քրոջ որդի Կարտապետ միայնակնցի, որ Ծիպնայ-Դաստակ վանքում գրել ավեց մի Աւետարան 1450թ.—Զեռ. Վասպ. 405:

— 172. Ներսէս, եղբայր Կարտապետ միայնակնցի, որ Ծիպնայ Դաստակ վանքում գրել ավեց մի Աւետարան 1450թ.—Զեռ. Վասպ. 405:

— 173. Ներսէս կրոնավոր, միաբան Խլաթի Ս. Յովհաննէս վանքի, 1450թ.—Նօտարք 164:

— 174. Ներսէս, հայր Առաքել Բաղիշեցի տաղասացի. հիշքած է 1453թ.—Տաշեան, Ցուց. 795, Հայապ. 126:

— 175. Ներսէս կրոնավոր, միաբան Խլաթի Ս. Յովհաննէս վանքի, որդի Ստեփաննոսի, եղբայր Ատոմ քահանայի, որ Աղթամարում Գրիգոր քահանային գրել ավեց մի Աւետարան, 1454թ.—Զեռ. Բուլգ. (ՀԱ. 1937, 580):

— 176. Ներսէս, որդի Յովհաննէսի՝ հորեղբոր տանուտեր Մանկաւագի, որ Մցի գյուղում գնեց մի Աւետարան, 1455թ.—Զեռ. Վենետ. Ա. 582:

— 177. Ներսէս սարկավագ, հանգուցյալ միաբան մի վանքի, որի անունը չէ հիշատակած 1456թ.—Զեռ. Վասպ. 426:

— 178. Ներսէս վարդապետ, որ Վանում, Վարդան երեցին գրել ավեց մի Ճաշոց 1458թ.—Նօտարք 190:

— 179. Ներսէս սարկավագ, որդի Յակոբ քահանայի, մայրն է Սալչուկ խաթուն, եղբայրն է Յովհաննէս քահանա գրչի, որ հիշում է ներսէսին իրը դպիր 1443թ. իրկ իրեն վաղամեռիկ սարկավագ, Բաղէշում, 1459թ.—Նօտարք 132, 191:

— 180. Ներսէս արքեպիսկոպոս, որդի Գուրջիբէկի, մայրն է Էմայ խաթուն, եղբայր Ստեփաննոս Գ կաթողիկոսի Աղթամարայ: Հոգեոր մայրն էր Փայլակ խաթուն. Դեռ արեղալ էր, երբ օրինակց Աղթամարում Աւետարանը 1448թ., ապա 1457թ. ապա 1460թ. և ապա 1461թ. ավելի ուշ զարձել է եղիսակոպոս:—Նօտարք 159, 185, 196. Զեռ. Վասպ. 433—4, 436:—

Հիշված է Թորոս աղբ. Բ. 446 նաև ԶեԴ=1495 թ. որ Ակինեան, Գւղգիրք 115 ուղղում է ԶԺԴ=1465.

— 181. Ներսէս եպիսկոպոս, որդի Ստեփաննոս քահանայի. Տիրիկում, Զաքարիա քահանային դրել տվեց մի Աւետարան, 1462 թ.—Սմբատեանց, Գևորգըունի 51.

— 182. Ներսէս «բանասէր», «սպասաւոր բանի», գրել է մի տաղ (ուղերձ) Յովհաննէս եպիսկոպոսի նահատակության վրա 1463 թ. (հրտա. Նօտարք 213—4). Հրատարակիչը՝ Փիրոցալէմեան, կարծում է թե այս Ներսէսը Աղթամարցի Ներսէս եպիսկոպոսն է (աշակերտ Թովքյա Մինասենց վարդապետի), ընտիր դրիչ և գանձասաց, որ ծաղկեց Աղթամարում, Զաքարիա Պ կաթուղիկոսի ժամանակի.

— 183. Ներսէս սարկավագ, որդի Յակոբ քահանայի և եղբայր Յովհաննէս զրչի, որ Արծիկում օրինակեց Աւետարանը 1463 թ.—Զեռ. Վենետ. Ա. 621.

— 184. Ներսէս, մեկն է նրանցից, որ. Խորձենայ Խլպաշի վանքում Ստեփաննոս եպիսկոպոսին գրել տվին մի Աւետարան 1464 թ.—Թորոս աղբ. Բ. 342.

— 185. Ներսէս քահանա, կինն է Խաթուն Մելիք. ծնողներն են գրիչ և տաղասաց Յակոբ Նետրարենցի, որ հիշում է նրան՝ արդին իրեն վախճանալաւ 1464 թ.—Նօտարք 219.

— 186. Ներսէս վարդապետ, գրիչ օրինակել է մի Մաշուց, որ Սամուէլ մահտեսին նվիրել է Յովհաննավանքին, 1464 թ.—Այրարատ 172.

— 187. Ներսէս արքեպիսկոպոս Անկիւրիոյ, հիշված 1447 թ.—հաջորդել է Յովսէփ արքեպիսկոպոսին և իրեն էլ հաջորդել է Արքահամ արքեպիսկոպոս 1466 թ.—Հացունի, Կարենը ինդ. էջ 271.

— 188. Ներսէս հերպետ Առքերդոյ վանից 1466 թ.—Նօտարք 225.

— 189. Տիր Ներսէս, որի «առաջնորդութեամբ» Կանձառը վանքին մի հող են նվիրել Այդին և Խիմշայ՝ որդիք Աթարակի 1467 թ.—Շահե. Բ. 375, Զալալ. Ա. 185, Նօտարք 229.

— 190. Ներսէս փոքր երեց, միաբան Գամաղելի վանից, 1468—9 թ.—Զեռ. Վասպ. 452, 455.

— 191. Ներսէս արեղա, մահաեսի, որդի Աստուածատուր քահանայի, պատճառ եղաղ որ Ստեփաննոս գրիչը Տիրիկի Վաւ-

ար գյուղում արտադրեց մի Աւետարան, 1469 թ.—Զեռ. Վենետ. Ա. 752=Թորոս աղբ. Բ. 364.

— 192. Ներսէս քահանա Բիւրականի, 1461 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1114.

— 193. Ներսէս ոմն հիշված Բիւրականում 1469 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1114:

— 194. Ներսէս առաջնորդ Եկեղեց զավասի Իւանիսսի վանից, հիշված է 1470 և 1473 թ.—Թորոս աղբ. Բ. 305, 328, (Հմտ. № 210):

— 195. Ներսէս քահանա Ամասիացի. Պոլսում, Ամբրոզիաթիթքի քաջկի ինդիրքով օրինակեց Միլայէլ Ասորաւ Ժամանակադրությունը 1480 թ.—Միլի աս. էջ ա:

— 196. Ներսէս եպիսկոպոս Տիրիկի՝ 1480 թ.—Թորոս աղբ. Ա. 231.

— 197. Ներսէս Գ կաթողիկոս Աղուանից. հաջորդեց Արիստակէս Ա-ին 1478 թ. (հաստատեցաւ յաթուն իւր Զիէ). իրեն էլ հաջորդեց Շմաւոն Ա-ը 1481 թ.—Զամրո 78, Բարիսու. Պատմ. աղվ. Բ. 17, Զեռ. Դագենն, Ա. 89 թ:

— 198. Ներսէս ոմն, որ հիշված է Ահարոն քահանայի հետ մի խաչքարի արձանագրության մեջ 1481 թ.—Ազդագր. հանգ. է, 50:

— 199. Ներսէս կրոնավոր, նվիրակ Սարգիս կաթողիկոսի ի Կամենից՝ 1485 թ.—Կամենից, էջ 135.

— 200. Ներսէս եպիսկոպոս Սկանի, որդի Դանիէլ վարդապետի և ուսուցիչ Արտահամ քանդակագործի, որ ծաղկեց Սկանի գոււը 1486 թ.—Յովսէփեան՝ Անահիտ 1932, էջ 25 (ավելին անս Արրանամ № 87), Սմբատեանց՝ Գեղարքունի 120:

— 201. Ներսէս, որդի Ոստանի Աւետիս քահանայի 1486 թ.—Զեռ. Վասպ. 502:

— 202. Ներսէս քահանա Ոստանի 1486 թ.—Զեռ. Վասպ. էջ 502:

— 203. Ներսէս արեղա, գրիչ. իջ առաջին գործն է եղել օրինակել մի Աւետարան՝ «Ասիլ մելիք տատի» համար, 1488 թ.—Զեռ. Վասպ. 240:

— 204. Ներսէս արքեպիսկոպոս, որդի Գուաշիրէկի, եղբայր Ստեփաննոս Դ (1465—89) կաթողիկոսի Աղթամարայ. Իր եղբայր հետ միասին սովորել է իր առքեղբայր Թովքա վարդապետ Մինասենցի մոտ, որ նշանավոր գրիչ էր. Այս Ներսէսն էլ գրած

ունի երևք Աւետարան՝ 1448, 1457 և 1458 թ. Աղթամարում և մի Մաշտոց թագաւորօրնէք (Ալիքնեան՝ Գւշնդիրք 108—9, 118)։ Հսու Ազգայ. 2201, 2211—2 հաջորդեց իր եղբոր Ստեփանառսին, իբրև կաթուղիկոս Աղթամարի, գահակալելով «1487 թ» (կամ քիչ հետո) և կարճ կյանք ունեցավ. (Զի ընդունում Ալիքնեան, Գւշնդիրք 120):

— 205. Ներսէս եպիսկոպոս, առաջնորդ Կարսոյ 1487—88 թ.— Քուեան, Բարձր Հայք, Ա. 103:

— 206. Ներսէս մալազ, թուղթ էր կոկում Բարերդի Բերդակ անապատում և օգնեց Մովսէս արեղային՝ գրելու Յայսմաւարքը, 1489 թ.— Manus. brit. mus. 165 թ:

— 207. Ներսէս երեց, «խարազնազգեաց ճգնաւոր, ծագկեալ ալեաւք», միարան Սեբաստիոյ Ս. Խշան վանքի, 1489 թ.— Զեռ. Սեր.՝ ՀԱ. 1926, 240:

— 208. Ներսէս քահանա Բարերդցի, զրել տվեց մի Յայսմաւարք՝ Մովսէս արեղային և նվիրեց Բարերդի Ս. Աստուածածին եկեղեցուն, 1489 թ.— Manus. brit. mus. 165 թ:

— 209. Ներսէս քահանա, որդի եղդանբաղչի և եղբաւոր խոջա Դուռաթի, որ Արաշ գյուղաքաղաքում զրել տվեց մի Աւետարան, 1490 թ.— Ամբատեանց՝ Երնջակ 257:

— 210. Ներսէս վարդապետ՝ Համեէնցի, առաջնորդ եկեղեաց գավառի Կապոսի անապատի, 1495 թ.— Զեռ. Վենեատ. Բ. 622; (Հմմու. № 194):

— 211. Ներսէս, որդի Մատթէոս քահանայի, որ Եղեգեաց անապատում զրել տվեց մի Աւետարան, 1496 թ.— Զեռ. Նոր Բայազ. 7 թ:

— 212. Տեր Ներսէս «փիլիսոփայ» (իմա երաժիշտ). հորեղբայր Յովհաննէս վարդապետի, որ Սանահինում զրել տվեց մի գեղեցիկ Շարակնաց, 1497 թ. Երբ Ներսէսը արգեն մեռած էր.— ՀԱ. 1887, 5^o թ:

— 213. Ներսէս, կինն է Խութլումելիք. ծնողներն են նշանավոր տաղասաց Առաքել Բաղիշեցու (ԺԵ դար), № 77.— Զեռ. Հալէպի, Ա. 104 թ:

— 214. Ներսէս Դ. կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Յակոբ Բ.ի և նախորդ Սարգիս ՚Ի.ի (ԺԵ դար).— Հաւաք. 61 (կեղծիք):

— 215. Ներսէս, որդի Մատթանոս քահանայի և թռոն Մանուէլ քահանայի, որ Գեղարքունիք համ գյուղում, Յովհաննէս Արծկեցուն գրել տվեց մի Ճաշոց (ԺԵ դար).— Զեռ. Սեան. 18:

— 216. Ներսէս, առաջնորդ Գանձասարի, հիշված է 1467 թ, 1471 թ, 1493 թ, 1495 թ, 1500 թ.— Շահնաթ. Բ. 374, 375, Նոտարք 228, Արցախ 177 (դնում է 1495 թ), 178—9:

— 217. Ներսէս, աթոռակալ Եղիշէ Բ. կաթուղիկոսի՝ «1506 թ»—Առաք. պատմ. 337; Զամէ. Գ. 509 այս Ներսէսը համարում է Աղթամարի Ստեփանոսո Դ կաթուղիկոսի (1465—89) եղբայրը. (Նույնը անս և Ալիքնեան՝ Գաւազանագիրք 118):

— 218. Ներսէս. կաթուղիկոս Աղթամարի, հիշված 1534 թ. Մոկում գրված մի հիշտատկարանում ԶՀ=1534 թ. «Ի հայրապետութեան Տ. Ներսէսի և յառաջնորդութեան Զաքարիայի» (տես Նախանեան, Արտօսը 148) (Նթե սակայն հայրապետն այս անդ վանահայր չէ):

— 219. Ներսէս կաթուղիկոս Սոսյ, մեռել է 1541 թ. և թաղվել Սեբաստիա. գերեզմանը վերանորոգվել է ՌՄՂ=1841 թ.— Նախանեան, Տեղեկ. Սեր. 98:

— 220. Ներսէս Ե, կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Ստեփանոսո Ը ի և նախորդ Գրիգոր Ը-ի (ԺԵ դար).— Հաւաք. 63 (կեղծիք):

— 221. Ներսէս տաղասաց ԺԶ դարում (այլ է Ներսէս Բեղլուն).— Ցուցիկը Բ. 125:

— 222. Ներսէս վարդապետ Մատթաղ, աշակերտ Գրիգոր Չորթան Արմիշեցու և ուսուցիչ Ներսէս Բաղիշեցու (ԺԶ դար).— Առաք. պատմ. 301, 340, Թորոս աղբ. Բ. 483:

— 223. Ներսէս վրդ. Բաղիշեցի, աշակերտ Ներսէս Մատթաղի և ուսուցիչ Ներսէս Ամկեցու (ԺԶ դար. շուրջ 1540 թ.).— Առաք. պատմ. 301, 340, Թորոս աղբ. Բ. 483.— ունինք սրանից մի տաղ. 1618 թուից, որ տես Զեռ. Հալէպի, Բ. 63 թ (Զեռ. Վենեատ. Բ. 944 կան երեք տաղեր իր անունով, որոնցից երկուսը 1617 թվից):

— 224. Ներսէս վրդ. Ամկեցի, աշակերտ Ներսէս Բաղիշեցու և ուսուցիչ Ցովիաննէս (և 1323) Բրգուտ Ոստանցու (ԺԶ դար, շուրջ 1570 թ).— Առաք. պատմ. 301, 340, Թորոս աղբ. Բ. 62 483:

— 225. Ներսէս վարդապետ Մոկացի, մականուն Բեղլու («իսոյր բեղիք ունեցող»), Ալիքնջաւս Վյուղից. տաղասաց. աշակերտեց Բարսեղ Ֆաւանցուն. ուսավ Ամրդուու վանքում արտաքին փիլիսոփայական ուսմունքները. հաջորդեց իր ուսուցչին (1615 թ), ապա քաշվեց Սիւնեաց երկրի Հարանց անապատը,

ուր ուսուցանում էր: Այնուհետև գնաց հիմնեց Լիմ անապատը, ուր և մեռավ 1627 թ.: Ունի Ռոտանաւոր ողբերգութիւն (Զեռ. Կարին. էջ 4). իր ատղերից մի նմուշ տես Այրարատ 393, 428: Նշանավոր է իր մի տաղը «վիճարանութիւն երկնի և երկրի», որի մեջ յաղթութիւնը երկիրն է տանում: Գրել է նաև Նկարագրութիւն պատկերի Տիրամօրն Հոգեաց վանաց և հոսանաց Տիգրիս գետոյ, որից մի հատված տես Հայապատում 51, Ցուշիկը Ա. 308—310: Ունի նաև Գովիսատ որք եղին սկիզբն Անապատի (Հայապ. 618): Պատմութիւն առմանն Երուսաղէմի ի Սալահադինայ (Զամշ. Գ. 565): Անշուշտ նույնից է «Աղօթք առանձնակի սրտահառաչ ձայնիւ պաղատանք արարեալ Ներսէս վարդապետի ի Լիմ անապատն» (Զեռ. Սկան. 37 ա):— Իր կյանքը Առաք. պտմ. 192—3, 198, 301—9, Սիսական 248: Իր տաղերի ցուցակը և երկու մեծ տաղ հրատարակեց Նորայր վրդ. Ծովական, «Էջմիածին» 1944, № 10—12, էջ 32—35:

— 226. Ներսէս Սեբաստացի, կաթողիկոս Սույ «1648—1653 թ.»: Նախապես առաջնորդ էր Սեբաստիոյ 1637 թ. հաջորդեց Սիմէռնին. իր կաթողիկոսության ժամանակ էջմիածնի Փիլիպպոս կաթողիկոսը գնաց Երուսաղէմ և այնտեղ հրավիրելով նաև Ներսէսին, գումարեց եկեղեցական ժողով, Սույ և էջմիածնի աթոռների իրավասությունը սրոշելու համար «1652 թ.»:— Առաք. պտմ. 254—7, 320: Զեռ. Հալէպի, Բ. 100 ա (ասում է թե ՌՃԴ=1654 թվին! Հալէպ էր գնացել. նաև Զեռ. Հալէպի, Ա. 128 ա 1654 թվին Ներսէսը դեռ կենդանի է հրցվում և գովարանվում. ուստի Ազգապատումի տված 1653 թիվը պետք է դարձնել 1654 թ.): Զեռ. Սեր.= ՀԱ. 1922, 464 և 468—471:

— 227. Ներսէս կաթողիկոս Աղուանից, հիշված է 1666 և 1667 թվերին (Զեռ. Դադեան, Բ. 42 ա).— տարբեր է նախորդից, որ բաժանված է մի դարու անջրպետով:

— 228. Ներսէս Զ. կաթողիկոս Աղթամարի. հաջորդ Յովհաննէս Ը-ի և նախորդ Սաեփաննոս Թ-ի (Ժէ դար).— Հաւաք. 63 (Կեղծիք):

— 229. Ներսէս վարդապետ Երևանցի, Ռուբանեան դպրոցի աշակերտաներից էր. երբ ավարտեց, Գրուպանդայի հրամանով գնաց Լեհաստան և Լեմբերգում, Նիկոլ Թորոսովիչից եպիսկոպոս մենագրվեց, լսու որում Հառումում հայածէս եպիսկոպոս Հըկար. Հոռու վերադառնալու ժամանակ, Խոռու է Վիեննայում, ուր այն ժամանակ ժանտախափ սասարիկ համարաբակ կար: Ներսէսը

անվախ կատարում է իր քահանայական պաշտոնը ժանտախտից վարակվածների մեջ: Մրա համար իբրև վարձատրություն նշանակվում է Բենեֆիցիատոս (Ժառանգավոր) աթոռակալ Վիեննայի Ս. Ստեփաննոս Մայր եկեղեցու: Այս միջոցին Բուդապեշտը Օսմանեան իշխանության տակ էր. Գարբիէլ անուն մի հայ նկարիչ թղթակցում էր Վիեննայի Ներսէս վարդապետի հետ հայերն լեզվով և տաճիկ բանակի զինվորական զաղանիքները հազորում նրան, իսկ նա էլ թարգմանում և հանձնում է էոպողդ կայսեր: Կայսրը այս տեղեկությանց շնորհիվ կարողացավ գրավել Բուդապեշտը 1686 թ. և իմր վարձատրություն իր ժամանականց, Ներսէս վարդապետին տվեց պարոնություն և կարգեց պալատի երեց կամ կապելլան, ապա Ս. Ստեփաննոս եկեղեցը կանոնիկոս: Քրիստոնյա դարձրել և մկրտել է 12,000 թուրք գերի: Մեռել է 1704 թ.— Ալպօյանեան, Առաքելութիւն ի Հապէշ. 66 (ուր նշանակված են նաև աղբյուրները):— Անշուշտ ու է որ հիշված է Սիսական 461 թ:

— 230. Ներսէս վրդ. Պալաթցի, աշակերտ Մատթէոս Սարքի, հաջորդեց Գալլուստ Կայծակին և վարեց Պոլսի պատրիարքական աթոռը՝ Աւետիքի աքսորի ժամանակ («1704 թ.»).— Ազգապ. 2725:

— 231. Ներսէս Դ. Գանձակեցի, կաթողիկոս Աղվանից-ազգականն էր Երիցմանկանց Սիմոն Խստորաշէնցի կաթուղիկոսի, որ հակաթոռն էր Գանձասարի: Երբ մեռավ Սիմոնը, նրան հայորդեց այս Ներսէսը (1706 թ.), իբրև հակաթոռ Գանձասարի Խսայի կաթուղիկոսի Հասան-Զալալիեանց: Երկար կոհիներից հետո հաշտություն կայցաւ այն պայմանով, որ Խսայիի մահից հետո գահակալէ Ներսէսը, իսկ կաթուղիկոսությունը ընդհանրապես մատ Խսայիի ազգականներին իբր ժառանգությունն երբ Խսային մեռաւ (1728 թ.), նրան հաջորդեց այս Ներսէսը, որ Խույնով մասնակցեց Ղարաբաղի պատապական շարժման: 1739 թ. գնաց էջմիածին և Հաղպար Զահկեցի կաթողիկոսից ներսում ստանալով իշխեց մինչև իր մահը՝ 1763 թ.— Արք. Կրիա. 64, 67, 73, 74. Թաքիք, Խամսայի մելիքութ. 34, 44, 51, 52, 111, 114, 116. Ազգապ. 2955. Զեռ. Դադեան, Բ. 20 ա, 26 ա, 46 ա (հիշված 1738, 1754 և 1763 թվերին). Լէս, Հյկ. աղ. Բ. 297. Զամբա. 81—86. Արցախ 43 և 227 (լիշ. 1724 և 1742 թ.). Զեռ. Թաւր. 81 թ (լիշ. 1725 թ.):

— 232. Ներսէս Ե Աշտաբակեցի, կաթուղիկոս հայոց «1843

— 1857 թ. ծնվել էր «1770 թ. եղել էր առաջնորդ Տփղիս
1811 թ. հիմնեց Ներսիսեան պարոցը. ուսւ-պարսկական պատեհ-
բազմի ժամանակ ազդու մասնակցություն ցույց տվեց. Ռուսաց
հաղթության մեջ տևանելով հայ աղդի փրկությունը, Հորդոր
կարդաց հայ ժողովրդին և ինքն էլ անձամբ հայ կամավորների
գլուխն անցած կովի դուրս եկավ Պարսից դեմ «1828 թ. Հաղ-
թական պատերազմից հետո, երբ կաղմակց Հայկական նահանգը,
ինքն էր որ միտք յղացավ դատարկ երկիրը լցնել ներգաղթի
միջոցով. Իր քարողիչների շնորհիվ 40,000 հայ Պարսկաստանից
և 90,000 հայ էլ Կարնոյ շրջանից կովկաս գաղթեցին (1828—
9 թ.). Հալածվելով Պասկեիչ զորավարից՝ իրեն աքսորական
առաջնորդ նշանակվեց Բեսարարիոյ թեմի, Ընտրվեց կաթոլիկ-
իս հայոց և էջմիածինը աշխատեց բարեկարգել. մինչև անգամ
շաքարի և մետաքսի գործարան հիմնեց. ինքն է տնկել էջմիածնի
անտառը և շինել Ներսիսեան լիճը: Մեռավ 1857 թ. 86 տարեկան
հասակում, թողնելով իր ետերը մեծ և ազգասեր հայ դործիչի
համբարիւ—Ազգապ. 3765—3978.

— 233. Ներսէս Վարժապետեան, Պոլսի Խասզիւղ թաղից-պատրիարք Պոլսոյ, հաջորդեց Մկրտիչ Խրիմեանին 1874 թ.-ին և Պոլսի կեղրոնական վարժարանը, որի երախտաղարաններից մեկն էլ տողերիս գրողն է. ընտրվեց Կաթուղիկոս կըմիածնի, բայց մահը վրա հասնելով խափանվեց. † 1884 թ.—Ազգայ. 4322.

— 234. Ներսէս Մհեմափեցի, ծայրագույն վարդապետ. հիշ-
ված է Ա. մաշտ. էջ 330 ա. հայտնի չէ թե ով է և ինչ ժամա-
նակի մարդ է:

*ՆԵՐԻՆԻԹ, ար. անսովոր անուն, որի ձևը անստույգ, թվականն էլ անհայտ է։ Հսա իս Ներմեք անվան մի ուրիշ տարբերակն է, Սրան ապացույց եմ համարում այն, որ Ներմատն անունն էլ գրված է Ներմեքատ (տես Մերկեռ № 2)։ Մի անգամ միայն ուսիրս հիշատակված։

— Ներքնիք, որդի վառուցի, իր Աւագատրոն որդու հետ մի այդի է նվիրիլ Գոշավանքին. — անթվական արձ. Ազգագր. Հանգ. Ժ. 22 (առաջին, երկու անունների, ընթերուստով կասեածեալ).

*ՆԵԽԶՈՒՀՅՈՒՄ (կամ ՆԵՎՈՒԻՆՈՒՐ), իգ. <պր. չ ունենորդ տարաք. այս շահոց է երեան գալ, առաջ գալ, պատահիլ, ծագիլ բռաերից (ակնարկելով մանկան ծնունդը). Այսովհիս անուն չեմ սած, բայց մի անգամ հիշված կա ՆԵՎՈՒԻՆՈՒՐ ոմն, որին ձոն-

զած է Ֆէրլոնի Յաղագս Դաստիարակութեան աղջկանց գիրքը,
թբմ. Ա. Գալֆայեանի, Փարիզ 1856.

* ՆԵԽԻՌԻԿ, իգ. գործածական էր Պոլսում, անցյալ դարում:
ՄէԽԱՎՐԵԱՆԸ (Վիեննայի Միխթարեան) այս անունը հանում էր
Միջներարար. այժ. Munevver անունից, որ նույնպես գործա-
 ծական էր Պոլսում. իրրե թի Մի նախավանից կրնառված և վեր-
 ջում ավելացած իկ փաղաքշական մասնիկը:

*ՆԵՒՐՈՒԴ, ար. <պրս. ԱՅՐԵ ուսցիչ, ուերշ, ուերշ և օր, ամանոր» բառից: Հիշատակված է նախ 1653 թ. (Երեմ. ՃԵԼ-ՕՐՄԱԳՐ. 43) նավոօք ձեռվ. Կա նաև Նարվալ ձեռվ՝ անթվական մի հիշատակուրանում (Չեռ. Վենետ. Ա. 777). անշուշտ գործածական էր Պոլսում, ըստ որում ունինք սրանց նկրուզեան ազգանունը:

* ՆԵՐԱԱՄԱՆ, ար. <պրս. Տէ ո՞ք, ո՞չ բարի՞ս+մէ ամաց տեկալց բառերից (իբր թէ բարի եկալ, բարի գալուստ. հմմտ. Ներանեկ և Դրաստամատ անուննիբր). Հիշատակված է ժեւ բարուս:

— 1. Ներամատ, որդին Նաբրագինի և հորեղբայր տանուտեր Բովհաննէսի, որ Խլաթում գրել տվեց մի Աւետարան 1433 թ. — Ձեռ. Նոր. Քայլազ. 19 ա.

— 2. Ներական առդի Աւագ քահանայի և թոռ Մերչերի. նշանավոր ճարտարապետ. իր գործերից է հատկապես Ամիդի Ս. Թէղորոս եկեղեցին, որ ավարտեց 1447 թ.—Հայապ. 574, Պատմ. 1898, 48 ա (տես և Մերկել Ա. 2).

— 3. Ներամադ, որդի Աստուածապովի և թռո Մելքիոսը
երեցի, որ Աւան գյուղում օրինակեց Գանձարանը, 1453 թ.
Bodleian 134.

— 4. Ներամատ, հիշված է 1389 թվականից ուշ գրքան անթվա-
կան մեջ հշատակառանումը: — Զեռ. Առու. (Արք. 1911, 260):

* ՆԵՐԾԱՌ, իգ. գործածական էր Պոլսում, անցյալ դարում. գրական ձեզ դրվում էր Նեխտառինե. Համա. Նեխտառինե կույտ Ալէքսանդրացի նահատակուչի († շուրջ 307 թ. (Յայսմ. = Աւգիեր. Կիակ. վրբ. սրբ. Զ. 308)): Կա և Նեխտառինու կամ՝ Նեխտառինու հայրապետ Հոռվմայ. Անշուշտ Նեխտառ անունն էլ պետք էր ենթադրիլ հուն. նեշտար «աստուածըմպելիք, Նեկտար» բառից. բայց Նեխտառինե ըստ Աւգիեր. Զ. 314 միայն հայոց է հատուկ. հույն և յատին համապատասխան ձևն է Կատարինե. որով Նեխտառինե համարվում է վրիդակ գրչության արդյունք:

*ՆԵԳՈՂԱԿԱՆ, ար. անսովոր անուն. մի անդամ գտնում են

Կիտառկան ժԴ/ԺԵ դարսած զբան անթվական մի ձեռագրում (Զետ. Լվով. - ՀԱ 1937, 131). Որովհետեւ ձեռագիրը լվովից է, չետաժարաւմ թիւք. այս եւլմազ «գանելը բայից, այլ թիւք. այս եւլմազ «լինելը, դառնալը բայից և մեկնում եմ « ու ու « բնչչ + bolsan «լինեն, դառնանաւ»:

* ԱՅՏՆԵՒՅ, ար. <պր. այնկ, ոնք գլուխ, բարից բառից
ԿՐԻԱՆՔ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Մի անունը առնելով հետո այս անունը

— Նեխիք պարոն, որդի Վասոսի, մայրն է Թամասեր. Կինն
է Սուրբուխ. զավակներն են Աւագ պարոն, Շահապաղին, Ազիզ-
ակիքին. Բերկրիում, Խաչեր քահանային գրել ավեց մի Աւետա-
րան, որ նվիրեց Աղթամարի վանքին 1307 թ.-Զիռ. Վասպ.
151-4.

*ՆիԱԶ, իգ. <պրա. ՆիՅազ անունից, որ բուռ նշանակում է «ազատանք»։ Հմմտ. Niyaz թուրք՝ սպանող Jaimal (Բուռղեհէշ), Niyaz բանաստեղծ Ծիրազեցի (Justi, 229 թ), Նիյազի թիյ՛ Օսմանեան հեղափոխական գործիչներից (1908 թ). Կուտանում ենք հիշատակված 1570 ական Թվերին (Սիստան 69), և մի անգամ էլ 1656 թ. (Տարիան. Ցուց. 1029)։

* ՆիԿԱԶԲԻԿ, ար. հիշատակված 1575 թ. (Սմբատեանց Գեղարք. 809, Կրպտ. եպմ.) Դօփեանք 138).

— 1. Նիգար, թվի թե կին է հիւսն Կարապետի և քեռակին խոջա Խաչատրուրի, որ Արձէշում, Յովհաննէս գրչին դրել տվեց մի Աւետարան, 1462 թ.-24ո. Վասա. 432.

— 2. Նիգար, կին Զանիբէկի և մայր Կիրակոս (№ 141) քահանայի Զօշկանց, որ օրինակեց Ճառընտիրը Բաղէջում, 1467 թ.—Նոտարը 230; (Թեր, Վայում 115, Տ 6, կ. 1, պատճեն 105).

— 3. Նիգար, կին Շապանի և մայր Եղիսա երեցի, որ օրինակեց Աւետարանը՝ Քաջթաղուց Խողանավար գյուղում, 1490 թ.—Զեռ. Սևան. 5 թ.

— 4. Նիգար, եղբայր Խուղաղարի, որ ստացավ մի Անտարքան, Խիզան 1497 թ.—Տաշիան, Ցու., 285.

— Ավելի ուշ ժամանակի հիշատակություններ են՝ Նիգար,
ից. 1603 թ. (2եւ. Սևան. 7 ա), 1644 թ. (2եւ. Վասպ. 276),
1653 թ. (2եւ. Թալր. 45 ա) են.

* ՆիկԱՐԻԱԹՈՒՆ, իդ. <նախորդից. հիշատակված է անթվական մի հիշատակաբանում (Զեռ, Վասպ. 416):

*ՆերկայՄԵԾԼԻԹ, իգ. <պրս. ԱՀ ուգար «պատկեր»+արաբ.
Ալ melek «հրեշտակ» բառերից. ամբողջն է ուգար-Ա-մելէկ «հրեշտակի պատկեր»: Մի անդամ հիշատակված է անթվական մի հիշատակարանում (Զեռ. Վասպ. 144):

* ՆիդԱՄՐԱՋԱ, իգ. <նույն Նիզար անունից+թղթ. paša. Հեշտակված է ԺԵ--ԺԵ դարերում;

— 1. Նիզարիաշա, մորաքույր Սահմաննոս Ղարիպշահի,
որ Լիմ կղզում գրել տվեց մի Յայսմաւուրք 1457 թ.—Զեռ. Թաւը.
103 թ.

— Ավելի ուշ հիշատակված են Նիգարփաշը 1533 թ. (Զետ. Վենետ. Ա. 717), 1618 թ. (անդ 594):

* ՆիկԱնՈՐԱ, ար. <հուն. Νικάνωρ անունից, որ բուն նշանակում է «այրայաղթ»։ Այս անունով հայտնի է Յայսմառուք-քում Նիկանովը նախասարկավագը։ Մի անգամ հիշատակված է մեր մեջ ԺԱ դարում և մի անգամ էլ ուշ ժամանակ հիշատակված է Պոլսում (տես Կարապետեան, Յիշատ. Սամաթ. 306 և 331)։

— ՚իկանըք, քահանա էր Թոնդրակեցոց աղանդից. Ակըսավեց իւ ընկեր Պողիկարպոսի հետ և այս անունն ստացավ (ՓԱԴԱՐ). — Մագ. թղ. Կէ:

* ՆԻԿԵՏԱՄ, ար. <հուն. Νικήτας. կամ Νικήτης անունից, ար բուն նշանակուու է «հաղթական»: Մեր մեջ չի գործածված. այս անունով ունինք՝

— 1. Նիկիտաս, հորեղբորորդի Հերակլ Ա կայսեր հունաց. իր կյանքը տես Հերակլ Ա (610 թ.).

— 2. Նիկետ, որդի Արտաւազդի, որ Կոստանդին Կոպրոնի մոտ կայսեր ձեռքից խլեց Բիւզանդական գահը 741 թ. հոր ձեռքով նշանակվեց սպարապետ իր բանակի. պատերազմեց Կոպրոնի մոսի դեմ, բայց հաղթվելով Նիկոմիդիայի մոտ, կայսեր հրամանով կախաղան բարձրագետ 742 թ.—Զամէ, թ. 405.

— 3. Նեկտաս, հայրն է Վարդ Փոկաս պատրիկի և սրբ քրոջ՝ Մարիամի, Զմշկիկը նախ քան կայսր դառնալը ամուսնացել էր այս Մարիամի հետ, որ մի որդի ընծայեց նրան՝ Յովհաննէս անունով, բայց ինքը ծաղիկ հասակում մեռնելով՝ զաւակից չեղավ իր ամուսնուն, որ կայսր դարձավ 969թ.—Տէր Սահական, Հայ կատնեռ, թ. 131.

* Նիկեֆոր, արք. <հուն. Νικηφόρος (>լտ. Nicephorus, Փրանս. Nicephore) անունից, որ բռւն նշանակում է «հաղթություն բերող, հաղթական» (համազորն է լա. Victor, պր. Պերով): Այս անունով հայտնի են Նիկեֆոր Ա կայսր հաւաց 802—811, Նիկեֆոր Բ կայսր հունաց 963—969, Նիկեֆոր Դ կայսր հունաց 1078—1081 թ., Ս. Նիկեֆոր պատրիարք Կոստանդնուպոլիսոյ 806—815 թ.

-- 1. Նիկեֆոր պատրիկ, հայր Փիլիպպիկոս Վարդան Հայապահի կայսեր հունաց 871 թ.—Յուչիկը, թ. 336:

-- 2. Նիկեֆոր, որդի Արտաւագդ կայսեր և Եղիայի Նիկեփի, որ տես վերբու Երեխ կայսերակից էր իր հոր, որովհետեւ միասին զրամ են կտրել: Հաղթվեց Կոստանդին Կոպրոնիմոս կայսրից և նրա հրամանով կուրացվեց 742 թ.—Ալաջյոնեան, Պատմ. հայ կեռ. Ա. 398:

-- 3. Նիկեփօրս Բ Փոկաս, կայսր հունաց 963—969 թ Վարդ պատրիկի որդին էր. եղավ զորավար հունական բանակի և այնպիսի քաջություններ դործեց Արաբների ղետ պատերազմներում, որ ժողովուրդը բազմաթիվ երգեր հորինեց նրա մասին և կոչում էր նրան «ասալ առաւտօտեան, ծագող արհգակ», պատռեաս Սարակինոսաց: Մոռմանս Բ կայսեր կինը՝ Թէոփանէ կայսրունին սիրահարվեց նրան, և թունավորելով իր ամուսնուն՝ տառսնացավ Նիկեփօրոսի հետ և նրան կայսր դարձրեց: Բայց վեր տարի հետո, նրանից էլ ձանձրանալով՝ միացավ Յովհաննէս Զմշկիկ զորավարի հետ, Նիկեփօրոսին սպանել տվեց և Զմշկիկին կայսր հոչակեց 969 թ:—Այս Նիկեփօրոսը զրել է ուզմազիտական մի զիրք, որի մեջ խոսում է հայ զինվորների հատկությանց մասին, գովելով նրանց իրեն քաջ հարձակող, բայց պարսկում է նրանց իրեն թույլ պահակ:—Աղդապ. 1086, 1126, Տէր Սահակեան, Հայ կայսերք թ. 135—151, 157—168, 215—234.

-- 4. Նիկեփօր, որդի Լևոն (№ 5) Փոկասի եղբոր Նիկեփօրս Բ Փոկաս կայսեր: Եթք Զմշկիկը սպանելով այս վերջինին՝ զահ բարձրացավ (969թ), այս Նիկեփօրին էլ (կայսեր եղբոր-որդուն) աքսորեց Խմբրոս կզգին 970 թ. բայց նա փախավ Խրակիս և իր հոր՝ Լևոնի հետ ապստամբություն կազմակերպեց Զմշկիկի ղեմ: Մատնվեց և կուրացամբ պատժվեց: Վարդ Փոկասը տարիներ հետո ազելի մեծ ապստամբություն կազմակերպեց Վասիլ Բ. կայսեր ղեմ, բայց կայսրը թուսաց օգնությամբ հաղթեց նրան, Վարդը թուսավորժամբ սպանվեց, իսկ կազ

Նիկեփօրը բանտարկվեց (989 թ:):—Տէր Սահակեան, Հայ կայ-սերք, թ. 179—181, 264:

— 5. Նիկեփօր, որդի Վարդ Փոկասի (նշանավոր ապստամբի), թոռն Լևոն (№ 5)՝ Փոկասի, եղբորորդի Նիկեփօրի (№ 4) և եղբորթոռ Նիկեփօրոս Բ (№ 3) կայսեր: Իր հոր մահվան վրեժը լածելու համար, ապստամբը Վասիլ Բ կայսեր ղեմ, միանալով Սերաստիոյ Սենեքերիմ թագավորի հետ, բայց դավաճան մի ըն-կերպ ձեռքով դաշունահար սպանվեց 1022 թ:—Տէր Սահակեան, Հայ կայսերք, թ. 267—9:

— 6. Նիկեփօր, պարոն և տեր Վուկիսոյ. Ներկա եղավ Լևոն Բ.ի թագավորության հանդեսին «1199 թ»:—Մմր. պտմ. 112, Սիս-ուան 471 (դնում է իշխան Վէտին և Վէլուսկու):

— 7. Նիկեփօր պարոն, եղբայր Կոստանդինի՝ տեսան Լագ-ռաւենոյ. Ներկա եղավ Լևոն Բ.ի թագավորության հանդեսին «1199 թ»:—Մմր. պտմ. 112:

* Նիկեփութիւննո՛ս, արք. <հուն. Νικόδημος անունից, որ բռւն նշանակում է «հաղթող գավառի կամ ժողովրդի»: Այս անունով հայտնի է Փարիսեցի Նիկոդիմոսը, որ հավատաց Յիսուսին և նրա մարմինը իջեցրեց խաչից ու թաղեց (Յէ. Ճթ. 39): Մեր մեջ ընդհանրապես գործածական չէ: Ծիչված կա այս անունով մի կաթոլիկ հայ 1781 թ. (Գէրպէրեան, Պատմ. հայոց, էջ 3):

* Նիկովաննո՛ս, արք. <հուն. Νικόλαος (կրթատ Նիկόլաս) ա-նունից, որ բռւն նշանակում է «ժողովրդակաղթ»: Այլ ձևերն են լտ. Nicolaus, գերմ. Nicolaus, Klas, Փրանս. Nicolas, անգլ. Ni-choolas, Nick, առւս. Հիկոլայ, փղքը: Կոլյ ևն: Այս անունով հայտնի են՝ Նիկոդայոս Դամասկոցի, պերիպատիկյան Վիլիսո-փայ՝ ժամանակակից Օգոստոս կայսեր, Նիկոդայոս մեծ հայրա-պետ Միւսոնայ Լիկէացւոց, որին տոնում է Հայոց եկեղեցին (ունի զանձեր, տաղեր, աղոթքներ, շարական), Նիկոդայոս ա-նունով 5 պապ Հռովմայ (Նիկոդայոս Ա սուրբ 858—867 թ., Նի-կոդայոս Բ 1059—1061 թ., Նիկոդայոս Գ 1277—1280 թ., Նիկոդայ-յոս Դ 1288—1292 թ., Նիկոդայոս Ե 1447—1455 թ). շատ տարած-ված է սլավ ժողովուրդների մեջ: Այսպիս Նիկոլա Ա կայսր Ռուս-աց 1825—1855 թ, որ գրավից Երևանը 1828 թ., Նիկոլա Բ կայսր Բուսաց 1894—1917 թ: Կործածվել է մեր մեջ սկսած մի դարից և մինչև այժմ էլ կենդանի է: Բռւն ձևն է Նիկոդայոս, կրթատ Նիկոդոս, Նիկօ, օտարածն Նիկոլ, փղքը. ոռւս. Կոլեա, Անսովոր

ձեւր են Նիկոլայոս 1633 թ. (Զեռ. Վասպ. 884), Նիկիլայոս 1739 թ. (անդ 1041), մյուսները տես տակը:

— 1. Նիկաւ, հորեղբայր Յովհաննէս դրչի, որ Դրազարկում օրինակեց Տաղարանը՝ 1241 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1066, Սիսուան 233 թ.

— 2. Նիկողոս Այասի, որի տանը բնակվել են շատ Զենովացի վաճառականներ, 1274 թ.—Սիսուան 394 թ.

— 3. Նիկաւայոս, որդի Բասիլ քահանայի, քեռորդի Կոստանդին Բ. Կաթողիկոսի. ստացել է Պատարագամատոյցը (Զարք. Թրդմ. 265). ունի մի գրչագիր Մաշտոց՝ մի դարի վերջից (Վենետ. № 1411).—Հացունի, Պատմ. տարագի, էջ 322.

— 4. Նիկողայոս քահանա, գրիչ. օրինակել է մի Ժողովածու (Ժող դար).—Manus. bibl. nat. 70,

— 5. Նիկողայոս եպիսկոպոս Կիպրոսի, անդամ Սոոյ Կիեցական ժողովի, «1307 թ.»—Աղբապ. 1785:

— 6. Նիկաւայոս քահանա Անարդարայի Ս. Աստուածածին Կիեցայու. գրիչ. օրինակել է Պատարագամատոյցը՝ 1314 թ.—Manus. bibl. nat. էջ 41, REA 2, 283, Գաթըրճեան՝ Պարզաւոյցը 83, Սիսուան 243 ա, Զարք. Թրդմ. 265,

— 7. Նիկողոս, միաբան, Խորձեանի Խլպաշի վանից, 1336 թ.—Նախանեան, Արտօսր Հայաստանի 152. (Հմմտ. № 22),

— 8. Նիկողայոս հայ, թվի դեսպան, իր ընկերներով այցելն է Ֆլամանների Գրիւժ քաղաքը 1369 թ.—Սիսուան 359 ծան.

— 9. Նիկեղոս (Կամ Նիկողայոս) արեղա, որդի Եփրեմ քահանայի. Վանում Յովհաննէս երեցին գրել տվեց Վարդանգիրքը (Եղիշէի Պատմ. Վարդանանց) և նվիրեց Խառարաստայ վանքին 1381 թ.—Թորոս աղբ. Բ. 334,

— 10. Նիկողայոս, Եղբայր Վարդան քահանայի, որ Երզնկայում գնեց մի Աւետարան՝ Խոսրովի որդի Վարդան քահանայից, 1397 թ.—Զեռ. Սեր.=ՀԱ. 1926, 46,

— 11. Նիկողոս, մերձնովոր Վարդան քահանայի (որդույ Խոսրովի), որ Երզնկայում գրել տվեց մի Աւետարան և վաճառեց մի ուրիշ Վարդան քահանայի, 1397 թ.—Զեռ. Սեր.=ՀԱ. 1926, 45,

— 12. Նիկողայոս, Կնքավորն է Եղբոր Հայրապետ Կրոնավորի, որ գնեց և կազմել տվեց մի Աւետարան, 1431 թ.—Նօտարք 98,

— 13. Նիկողայոս, Եղբայր Ոնոփրիոս քահանայի, հորեղ-

Մկրտիչ քահանայի Արձիշեցւոյ, որ զրել տվեց մի Ճաշոց 1441 թ.—Թորոս աղբ. Ա. 222,

— 14. Նիկողայոս, դատավոր Հայոց Լեհաստանի, 1444 թ.—REA 7, 71:

— 15. Նիկողայոս, Մեծոփայ վանքի վանահայր Թովմա Պատմիչի աշակերտներից, հիշված 1445 թ.—Նօտարք 147,

— 16. Նիկողոս արեղա, միաբան Մշոյ Ս. Յովհաննու վանից. ուրիշ բազմաթիվ կրոնավորների հետ եկալ Էջմիածին, միաբանակից Կարապետ արեղային ձեռնադրել տալու համար տաշնորդ Եղրդուտի, 1445 թ.—Նօտարք 142,

— 17. Նիկոլ պարոն, վկա իլվովիցի Դաւիթ վաճառականի Կտակի, 1450 թ.—Բժշկեան, Ճնպրհ. ի Լեհ. 115>Նօտարք 163:

— 18. Նիկողոս իշխան, մոռմ է իր տապանաքարը Զ= 1451 թ. Ամափայի Ս. Նիկողայոս եկեղեցում (հաղորդեց Կարապետ Գաղապեան, Ամասիայից 1912 թ. ապրիլ 12).—Զ տասից հետո մի բան պակաս է երկում:

— 19. Նիկողայոս քահանա, մեծ հայր տանուտեր Կիւրեղի, որ Նիկողայոս եպիսկոպոսին Ալիքիրմանում օրինակել տվեց Ճաշոցը, 1460 թ.—REA 10, 64,

— 20. Նիկողայոս, որդի տանուտեր Կիւրեղի, որ Ալիքիրմանում, Նիկողայոս եպիսկոպոսին օրինակել տվեց Ճաշոցը՝ 1460 թ.—REA 10, 64,

— 21. Նիկոլ պարոն, տանուտեր Լեհահայոց 1463 թ.—տես Բժշկեան, Ճնպրհ. ի Լեհ. 87> Նօտարք 210,

— 22. Նիկողոս կրոնավոր, միաբան Խորձեանի Խլպաշի վանքի 1464 թ.—Նօտարք 218, Թորոս աղբ. Բ. 341. (Հմմտ. № 7),

— 23. Նիկողայոս, որդի Վարդան երեց գրչի, որ Վանում օրինակեց Աւետարանը Շահփաշայի պատվերով. Նիկողայոսն էլ օգնում էր իր հոր՝ թուղթ կոկելով. հիշված է նախ 1452—3 թվին, երբ դեռ սարկավագ էր. Ապա հիշատակված է իրրե քահանա՝ գրիշ 1465 թ.—Զեռ. Վասպ. 138, Նօտարք 169, 171, 172, 222,

— 24. Նիկողոս, հայր Մալհամի և աղջոկան Սելչուկի իշխանի, որ Հայրապետ քահանային գրել տվեց մի Մաշտոց, 1466 թ.—Թորոս աղբ. Ա. 232, Բ. 337,

— 25. Նիկողոս քահանա, մերձավոր Մկրտիչ քահանայի, որ Քիւրականում օրինակեց Ժողովածու քերթուածոց, 1469 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1114,

— 26. Nicolo, մին այն չորս գետպաններից, որ Ուզուն Հա-

սահ՝ Պարսից թագավորը ուղարկեց Վենետիկ և Հռոմ (1469—70 թ.), դաշնակցելու համար նրանց հետ՝ ընդդիմ Օսմանցոց (Յակոբեան, Ուղեգրութ. Ա. 156):

— 27. Նիկալ, որդի Փանքիկի և հորեղբայր Խորջահի, որ Յովիանէս Երղնկացուն գրել ավեց մի Աւետարան, 1476 թ.—Rapport Belgeique 34:

— 28. Նիկողայոս եպիսկոպոս Ախրիրմանի, որդի Սիմէոն Երեցի, Ախրիրմանում, աանուտեր Կիւրեղի համար օրինակեց մի Ճաշոց՝ 1459—60 թվերին (REA 10, 61—62). գրել է նաև Երուսաղէմի արքավայրերի մի ցուցակը 1483 թ.—Հայապ. 75:

— 29. Նիկողայոս եպիսկոպոս, Արծէի վանքում գրեց Աւետարանը՝ տանուտեր Ղարիբահի խնդրանոր, նրա որդի վաղամեսիկ Փաշիկի հրատակին, 1486 թ.—Ձեռ. Վասպ. 501:

— 30. Նիկողայոս արքեպիսկոպոս, առաջնորդ Անկիւրիսյ, հաջորդելով Արրանամ արքեպիսկոպոսին, իր օծումն ստացավ էջմիածնում 1469թ. նորոգեց նույն քաղաքի Կարմիր վանքը «1486 թ.»—Ազգապ. 2187. Հացունի, Կարսոր խնդ. 271. Ալպօտանեան՝ Պատմ. հայ Կես. Ա. 583.—Այսուհետև ընտրվել է պատրիարք Կոստանդնուպոլիսի և զանակալել է «1477—1489 թ.» հայորդելով Յավակիմ պատրիարքին:—Ձեռ. Հալէպի, Բ. 38 ա, Ամիրա. անգ. 2. Ազգապ. 2187:

— 31. Նիկողայոս Մտամպույի, գրեց «Ողբ առման Կիպրոսի ի Թուրքաց» 1570 թ. Հրատարակեց Ակինեան, Անտիոք 1931 թ. № 5—6, էջ 69—72, հանելով Վիեննայի Միջթարեանց № 1002 ձեռագրից. նրանից էլ արտատպեց Բակ. «Հայ—Կիպրոս», էջ 262—4:

— 32. Նիկոլ Փրա, Կաթոլիկ քահանա. ուղեկից եպավ Օգոստինոս Բաշեցուն դիպի ներոգա. մեռավ Ռուսաստանի հալուզա Քաղաքում 1609 թ.—Օգոստ. բաջ. 10, 11.—սեռ. Նիկոլին՝ անդ 8:

— 33. Նիկողայոս Մանուկ Տիգրանակերտցի, 15 տարնկան գեղեցիկ պատանի կը. շուկայում նրկու թուրք՝ Մահմետ անով սկսեցին լրբարանել նրա հետ, պատանին սկսեց հայնոյել երկու Մահմետներին էլ. նրանք դիմեցին զատավորին և փաշային՝ չարախոսելով թե պատանին հայոյել է Մահմետ մարգարեին. երկու սուտ վկա հաստատեցին նրանց խոսքը. դատավորը և փաշան առաջարկեցին պատանուն ուրանալ հավաքաքը, խոստանով տալ նրան գեղեցիկ կին, հարստություն, իշխանություն և ամէն բարիք. մինչև իսկ փաշան խոստացավ որդեգրել

նրան: Բայց պատանին մերժեց ամեն ինչ և հաստատ մնաց իը Հավատքին. Տարին հրապարակը, ոտքերը և ձեռքերը կացինով ջարդեցին. մարմի կոճղը արյունաթաթախ փոխադրեցին իր առւնը, ուր երեք օր տանջվելուց հետո՝ մեռավ անմեղ նահատակ պատանին «1642 թ.»—Առաք. պտմ. խդ>նոր վկ. 449—454:

— 34. Նիկոլ Թորոսովիչ, արքեպիսկոպոս Հայոց Լեհաստանի. կաշառքով եպիսկոպոս օծվեց Մելիքսեթ Կաթոլիկոսի ձեռքով իվով քաղաքում, հակառակ ժողովուրդի կամքին «1626 թ.» ժողովուրդը խորհեց նրանից և եկեղեցուց դուրս վոնտեց: Նիկոլը գրեց ճիպիթներին, ընդունեց կաթոլիկությունը և իր հոտն էլ կաթոլիկ դարձնելու խոստումով, նրանց միջոցով և զինվորական օգնությամբ բռնի խլեց եկեղեցիները, զրավից գանձերն ու կալվածները, որ սկսավ ծախել և շուայլ ու անտառակ կյանքով վատնել: 24 տարի ամբողջ՝ ժողովուրդը առանց եկեղեցու և առանց ժիստկատարության մեալուց հետո, ստիպվեց ընդունել Նիկոլին: Եվ այսպես Նիկոլը կամաց կամաց հայ ժողովուրդը կաթոլիկության առաջնորդնեց. որով և ամբողջ Լեհաստանի հայությունը ստարացավ ու լեհ դարձավ:—Մեռել է «1681 թ.»—Սամ. անեց. շար. 178—9. Առաք. պտմ. վկ. իլ. 174, 259, 314, 495, 499. Ալիշան՝ Կամենից 126—7, 138—143, 202—14. Զամշ. Գ. 630—643:

— 35. Նիկողայոս Գրուսացի, մականունն Այվազ. աղքատ գարբին էր Գրուսայում, գեղեցիկ բարձրահասակ երիտասարդ ինհերվ, տաճիկները շարանակ հորդորում էին նրան մահմետական դառնալ, խոստանալով ամեն տեսակ բարիք: Միշա էլ մերժում ստանալով՝ չարախոսեցին զատավորի մոտ, որ արդեն հավաքը ուրացել է և այժմ հետ է դառնում: Նիկողայոսը հաստատուն մեաց իր կրոնին, վճռեցին զիխատել: Հրապարակում երկու դաշնիք փոխ առ փոխ սրբի հարվածներով չէին կարողանում զիխատել նրան. դանակով գառան նման մորթեցին անմեղ նահատակին 1604 թ.—Նոր վկ. 531—538, Ազգապ. 2746:

— 36. Նիկողայոս Մպարկերտցի, կաթոլիկոս Աղթամարի «1735—1751 թ.» հաջորդեց Բաղդասարին. Մպարկերտի Հուար գյուղից էր, Սևոնց Գրիգորի տնից. իմաստուն, հնետոր և կրոնագետ մարդ էր: Ռուղեց ընդպարձակել Աղթամարի թեմը և կարողավ Սուլիմանից հրաման բերել թե վան. Բաղէշ, Մուշ և սրանց շրջակաները պատկանում են Աղթամարին: Այս հրամանագիրն ստանալուց հետո, ըստու է էջմիածնի նվիրակ Յովհաննէս վարդապետին, նրա հավաքած զրամակը բարեմերը և իրեն

էլ վանուում էջմիածնի Ղաղար կաթուղիկոսը բողոքում է Պոլիս, որ հրաման հանում Սուլթանից՝ թե այդ վայրերը պատկանում են էջմիածնին, կողոպաված գումարը յետ է ստանում և Նիկողայոս կաթուղիկոսին նգովում (1746). Աղթամարցիք նեղը մասցած, նյութական ծանր կացության մեջ ընկած, հանրագործ դիմում են Ղաղարին և Նիկողայոսին էլ էջմիածնին ուղարկելով, խոսանաւմ են հպատակվել էջմիածնին. Ղաղարը բանադրանքը վերցնում է և պայման է դնում, որ այսուհետև Աղթամարի կաթուղիկոսները էջմիածնում օծվին (Ակինեան, Գաւազանագիրք 149—151 և Հաւաք. 64). Հաւաքարանը, էջ 47—55 տալիս է նաև Աղթամարի հարկերի քանակը, որ Նիկողայոս կաթուղիկոսը ժողովով որոշել է 1742 թվին:—Հաւաք. 3, 83, Զամբ. 95, Աղգապ. 2954—5.

— 37. Նիկողայոս դպիր, տաղասաց Ժ. դարում.—Տաշեան, Ցուց. 806.

— 38. Նիկողայոս հիւէսէնեան, մոր կողմից Աջպահեան, առաջնորդ Բերիոյ (Հալէպ). ինքնազուխ օծվեց կաթուղիկոս Մսոյ, իրքն հաջորդ հիրակոսի «1866 թ», կոչվելով հիրակոս Գ. Աջպահեան (№ 106). Ազգային վարչությունը բռնի բերել ովեց նրան Պոլիս և ուղարկեց Արմաշի վանքը «1871 թ»:— Աղգապ. 4129, 4269.

* Նիկուն, ար. <հուն. Νίκων անունից, որ բուն նշանակում է հնագթություն»: Մեր մեջ չի գործածված այս անունը. կա միայն՝

— 1. Նիկոն Պոնտացի, մականունն է միտանոյիտես «ապաշխարեց» (այս բառը այնքան էր կրկնում իր քարոզների մեջ, որ իրեն մակդիր դարձրին): Համարվում է հայ. ծնվել է Պոնտոսում, հայ նախարարական տոհմից. 12 տարի սովորել է Պաֆլագոնիոյ Ռսկեքար վանքում. հետո զնացել է Հայոստան և հրկար ատրիներ քարոզելով՝ շատ հայեր հունադավան է գարձերել. Երբ Նիկոնոր Փոկաս հայազգի դորավարը կրեաէ կզզին գրավեց (960 թ), Նիկոնը իսկույն զիմեց այնտեղ, 20 տարի քարոզեց և ամրող կզզին, որ մահմեղական էր, քրիստոնյա դարձրեց. Քարոզել է նաև Յունաստանում և մեռել է Գելոպոնէսում 998 թ. Հնդունված է իրրե սուրբ՝ հույն և լատին եկեղեցիներում. տոնվում է նոյ. 28-ին: Թողել է հունարեն լեզվով սրբու գիրք՝ հայոց կրոնի դեմ. «Ընդդէմ ամբարիչտ կրօնից Հայոց» և «Կարգաւորութիւն վասն դարձին Հայոց»:—Զամշ. Բ. 1024—7 (Հա-

մարում է խարդախանք), Աղգապ. 1186. Տէր Սահակեան՝ Հայ կայսերք, Բ. 113—4.

* Նիկունուցոն, ար. <անյուշտ հունարեն է, բայց մայր ձեռ ինձ անհայտ է: Մի անգամ հիշատակված է՝

Նիկաւրազաւն, որդի Ֆաւանկի, հիշված է Տրապիզոնի Ամենափրկիչ վանքի անթվական մի արձանագրություն մեջ:— Բժշկեան, Պատմ. Պոնտոսի 87:

* Նիկուն, իգ. <Փրանս, Nîmes անունից. Նորամուտ անուն:

* Նիկուն, իգ. <հուն. ենթադրյալ *Նեօֆորս, Նեօֆորա ձեից, որ բուն նշանակում է «Նորաբերք»: Այս անունով ունինք միայն՝

Նիկոփորա (վրաց. Նիկափորա, վար. Միկափորա) Դունեցի, պառավ հայուհի, ապրում էր Երուսաղէմում. Նրա մոտ երկու տարի ծառայեց նունէ առաքելուհին Վրաց, սովորեց մի քիչ հայերեն և Հայաստանի ու Վրաստանի մասին տեղեկություն ստացավ:—սեռ. Նիկոփորյ՝ Պամ. վր. ը. Վրաց աղք. Ա. 22, 169, 172:

ՆիկունԱՅՅ, անսունյզ ընթերցվածով մի անուն, 1493 թվից մի գերեզմանաքարի վրա (Բարիսուտ. Աղուանից երկ. Ա. 202—3):

† ՆՇԱՆ, ար. <հյ. Յշան բառից. ակնարկությամբ խաչի նշանի, որի գանազան տեսակներն են Վարագայ Ա. Նշան, Սեբաստիոյ Ա. Նշան, Հացունեաց Ա. Նշան ևն. Գործածական է այժմ, որից նաև Նրանեան աղդանունը: Նշան անգան հնագույն վկայություններն են՝ Պալաբի Ա. Հըեղառկապեան եկեղեցու մի արձանագրությունը 1730 թ. (Բանասէր 1899, էջ 127) և 1772 թ. (Աղք. մատ. ՀՀ, էջ 349):

* ՆՇԱՆԳԱՅՅ, իգ?<պրս. ՀԱՅ ունցոցի ընկերի նպատակը: մի անգամ գտնում եմ հիշատակված Դարբանդում, Պողոս-Բուլլի գերեզմանատան մեջ, մի գամբանի վրա, 1321թ:—Բարիսուտ. Աղք. Երկիր, Ա. էջ 109—110. (Կասկածելի):

† ՆՇԱՆՈՒՀԻՀԻ, իգ. <հյ. Նշան անգան իգականից կազմված կեղեւ, նորահնար և անսովոր անուն:

ՆՇԱՆՈՐ, իգ. Երեխ սխալ է գրված, փոխանակ Շնաւը-Շնորհաւը. մի անգամ գտնում եմ հիշատակված 1557 թ. (Զեռ. Սահան. 13 թ):

ՆՇԱՆԱՅ, իգ. ծագում անհայտ. մի անգամ հիշատակված անինչ:

— Նշնայ, կին Շարի, իշխանի Գողթան գավառի (Ա. դար)։ — Օրբ. եւ

ՆԵՐԻ, իգ. ծագումն ինձ անհայտ. մի անգամ գտնում եմ հիշատակված՝

— Նշու խարուն, դուստր Թալայի. մնում է իր տապանաքարը Մարմաշէնում 1342 թվից. — Շիրակ 149 (անվանս երկրորդ տարր կասկածելի)։

*ՆՈՅ, ար. Հերբ. ՌՅ Նօխա անվան հուն. Նու տառագարձությունից. մյուսնիրն ունին ասոր. ՆՈԽ, լտ. Նօհի, Փրանս. Նօէ, արար. ՀՅ Նոհի ևն ձեերով (Հիւրշ. 335). Այս անունը հները մեկնում էին երր. հանգիստ. այսպես՝ եերայեցոց լեզուամ կոչի նոյ, իսկ հայովս հանգիստ կամ արդար» (Փիլ. իմաստ. 39). ՀՆՈՅ՝ հանգիստ (Տաթե. հարց. 299). Նոր քննիչները համեմատում են հին բարիկ. Նոհիյա անվան հետ (Gesenius 495): Ewald, Վիշտ. մ. Volks Isr. I. 360 դնում է կորած ոաք արմատից. իրը անոր, նորոգիչ։ Այս անունվ հայունի է Ա. Գրքում նոյ նահապետը, որ ազատվել է իր տապանով մեծ ջրհեղեղից. — Հայերինում նոյ բառը ուժանք հնչում են ոօ, իսկ ընդհանրապես ոու (ինչպես խօյ). Անսովոր անուն է. այժմ անգործածական։

— 1. Նոյ միայնակեաց Սիոնի լեռան վրա, Վայոց ձորում. աեսիլով գուշակեց Ստեփանոս Սիւնեցու եղերական մահը և նրան իրրե պատիժ՝ Վայոց ձորի գլխին զալիք պատուհասը (735 թ.). — Կղինտ. Գ. ժզ. Կիր. 41. Յայս. յուլ. 24. Այրիվ. 21 ար. — Նու՝ Օրբ. լ. — սեռ. Նուի՝ Օրբ. լ.

— Ավելի ուշ հիշատակված են նոյ 1654 թ. (Զեռ. Վասպ. 290), նոյ երեց 1666 թ. (Rapport Arct. էջ 13), նոյ երեց 1695 թ. (Զեռ. Սեբ. = ՀԱ. 1925, 131).

*ՆՈՅԵՇՁԱԼԻ, իգ. համարվում է նոյ նահապետի կոչ անունը. Նոյի կինը իր ժամանակի բոլոր աղջիկների մեջ միակ մաքուր կույսն էր՝ ըստ Անկ. գիրք Հին կտ. 322 (զրված է նոյեմպառա). մեռավ ու թաղվեց Հայաստանում՝ Մարաթի կոչված տեղը (այժմ Պարսկաստանի Ասրպատականում, Թաւրիկ տանող ճանապարհի վրա). Այս պատճառով էլ այդ տեղը սառուցարանում էին «մայր անդա» (Զամշ. Ա. 57). Տես նաև Սամ. անեց. 6. Սի. անեց. թ. Յայս. մայ. 17 (բցո. ի նոյեմպարայ). իսկ Տաթե. հարց. 299 նոյի կոչը կոչվում է Զարա: Հստ Պարսից՝ նոյի կինը կոչվում է առաջական Վահալա. տես ԳԴ, էջ 521 թ. Վահելէլ. է անուն կոչը նահապետին նոյի, զոր մեք կոչեմք նոյեմպարա: Այս անու-

նը այժմ գործածական է Տեր մեջ (Պոլսում). հնագույն հիշատակությունը գտնում եմ 1694 թ. (Այրարատ 236). հիշված է նաև Ներքին Ազուլիսի անթվական մի արձանագրության մեջ նոյեմպար կոյս (Ազգագր. հանդ. ԺԱ. 313). Գրվական կամ կրծատ ձևով ասում ենք նեմպար, նեմպուր: Տես և նոյեմի:

*ՆՈՅԵՇՄԻ, իգ. <երր. ՇՅ> Նա՛ անվան հունական տառագրձությունից: Հունարենի արդի ձեն է Նամբի, բայց եղել են նաև Նօօմբե, Նամբեւ և Նօօմբը ձեն Արուն է Նաոմի, ինչպես պահանջում է հայերենը. Անգլիական պատունական ձեն է Նաոմի, ինչպես ունի Ա. Գրքի New York 1894 թվի հրատարակությունը: Հայերենում ընդունված ձեն է նոյեմի (իսկ բողոքակաների աշխ. հրտու. Պոլիս 1908 ունի նոյեմի և գրք. հրտու. Պոլիս 1895 նոոմի): Երբայցական բառը ծագում է ԸՅ> ո՞՛՛ բարի, բաղցը, հաճելի» արմատից և նշանակում է բաղցրութիւն իմ» (Gesenius 509—510): Դրա համար էլ Հուութ. Ա. 20 ասում է. «Մի կոչեք զիս նոոմին, այլ կոչեցէք զիս Դառնացեալը, նոյեմի անունը անցյալ դարում գործածական էր Պոլսում. կրծատ ձեն էր նոյեմ. այս ձեերը կենդանի են այժմ էլ: Նոյի կոչը անունն է ըստ Վարդանի և յլոց (Սարգիսեան, Ուս. հին կտ. 446 ծան.): ըստ այսմ շփոթված է նոյեմպար անվան հետ, որ բոլորովին տարբեր է: Կանում եմ նոյամի ձեռվ 1658 թ. (Զեռ. Նոր-Բայյազ. 5 թ.):

*ՆՈՅԻՆ, ար. <Նոյ անվան գրվականն է. մի անգամ գտնում եմ հիշատակված 1727 թ. (Զեռ. Հալեպի, թ. 120 թ.): Նույն անձի պապն էլ կոչվում է նոյ (բահանա):

*ՆՈՅՆ, ար. ասորական անուն է. հմմտ. Նունա հպիսկոպոս Կոկիսոնի (Միի. աս. էջ 238), նոյնա եպիսկոպոս Սեւելիոյ՝ Զ դար (Միի. աս. 237), նունա եպիսկոպոս Անտիոքի (Յայս. յունիս 9). սրանց հետ նույն են երր. ՌՅ Նոն կամ Նոն. բարել. Նոնա, Նոնիա անունները, որոնց բուն նշանակությունն է ձնուկ. հմմտ. երր. ՌՅ ոսո, ասուր. ոսոս, ասոր. ոսո ոսոն, արար. այ ոսո ձնուկ, ասոր. Լայ ոսոնան ձնուկ (Gesenius 492): Երր. անունը տառադարձված է հուն. Նախ> հյ. Նաւէ, որ Մովսէսի Հաջորդ Յեսուսի հայրն է (Յեսուս Նաւէայ). բայց և Նօն> հյ. Նուն. այսպես՝ Նուն, որդի եղիսամայ, Սփրեմի ցեղից (Ա. Թաց. է. 27): Տես նաև նունի:

— 1. Նոյն իշխան Միւս Սովոց. ուղեկից եղավ ներսէս մեծին, կեսարիա օծման գնալու ժամանակ 1853 թ.—Բուզ. Դ. գւ.

— 2. Նուն եպիսկոպոս Սիւնեաց, հաջորդ Անանիայի (Եղար). — Օրբ. Ժթ, հա:

— 3. Նոյն, թերես անունն է մի նշանավոր կրոնավորի, որ հայ արհեաներից հալածվելով մեռավ (Եղար). «Զիշեշտականան այրն զծէր՝ նոյն անհանգիստ հալածանօք վախճանեցուցին» Փարպ. թղ. էջ 202. Զեռագիրն ունի զտէր նոյն, (Վերջապեսով). հրատարակիչները հատուկ անուն են զնում Տիր. վերջակետի պատճառով ավելի հավանական է ենթադրել ըստ + Արքահամ Զամբինեանի ըստէր նոյն» (տես Արքա. 1911, 229).

† ՆՈՐԱՁՆ, ար. <հ. նոր և ազն բառերից. ինչպես ունինք Հայկացն. Մի անգամ գտնում եմ հիշված Յո. որդի, ապ. 1643, էջ 395, ստացողի հիշատակարանում. «Ճնօղաց իմոց. նորագին (զ տառը ստուգել եմ) և շահփաշին», (Այժմ պատկանում է Եղեգանի Կուլտ. պատմ. Ինստիտուտին, № 213). Նույն տեղը հիշված հն նաև Վարդեր, Հայպատ, Վարդոսի անունները».

† ՆՈՐԱՄԱՑՅ, իգ, <հ. նոր և մայր բառերից. նորակերտ անուն. լսել եմ Պարսկաստանում:

† ՆՈՐԱՄԻՌ, ար. <հ. նոր+արաբ. այսուհետ ամոց «իշխան» բառերից. ինչպես կան Նորշահ, Նորպարսն անունները: Մի անգամ անինք՝

— Նորամիր, հայր Յովհաննէսի, որ զնեց և աղատեց գերի ընկած մի Աւետարան 1433 թ.— Ձեռ. Վասպ. 364:

† ՆՈՐԱՄՅ, ար. <հ. նոր+այր «մարդ» բառերից, իբր թրգմ. հուն. Νέανδρος անգան: Հնում անսովոր էր բայց իբր անձնանվան օրինակ հիշված է Թր. քեր. 16, Խոր. քեր. 172, Միւն. քեր. 205: Այժմ սովորական գործածություն ունի:

— Նորայր, նահապետ Հայկազանց, հաջորդեց Շաւարշին, Ն. Գ. 1326 թ. (ըստ Զամչ.). — Խոր. Ա. Ժթ. Կղկնտ. Ա. Ժե. Ծիր. քրոն. 31 (Նորայն). Մագ. թղ. Ժթ (վասն զի նոր այրութիւն ցուցանէր). Սամ. անեց. 45. Մի. անեց. գ. Վրդ. է. Մի. այրիզ. 18, 50. Մին. համդ. 9.—(ԲՀ. Կթղ. բ. զնում է հաջորդ Առնակի. այսպես է նաև Վրդ.). — Նուարար՝ Վրաց. աղբ. Ա. 74.

† ՆՈՐԱՊԵՏ, ար. <հ. նոր+պետ բառերից, ինչպես կատար բառով Նորամիր: Մի անգամ հիշատակված է՝

— Նորապետ ոմն, նախ քան 1420 թիվը գրված մի ձեռագրում (Տաշեան, Յուց. 666):

† ՆՈՐԱՏՈՒՆԻ, ար. <հ. նոր և տունի բառերից, իբր թրգմ. հուն. Նեֆստոս անգան. հմատ. «Վկայաբանութիւն որբոյն նեռ-

փիտոսի որ թարգմանի ի հայ լեզուն՝ Նորատունի» (Ձեռ. Վենես. Բ. 129). Այս ձեռվ հիշված է 1589 թ. (Ձեռ. Հալէպի, Ա. 167), 1621 թ. (Ձեռ. Վասպ. 860), 1659 թ. (Սմբատեանց, Գեղարք. 406). Կրմատ ձեռվ՝ Նորտունի, Նօրդունի 1628 և 1664 թ. (Տաշեան, Յուց. 517, 922), Նորտունի՝ որ հիշված է 1477 թից ուշ գրված անթվական մի հիշատակարանում (Ձեռ. Աղուլ. Արքա. 1911, 220): Սրանից է Նորտունիկեան ազգանունը: Անգանս հնագույն հիշատակությունն է՝

— Նորտունի (առանց ա ձայնավորի), պարոն), որդի հիքակասի. գնի միջնորդ եղավ տանուաեր էդիլյանի և Յովհաննէս գրչի միջն, Արծէկ 1463 թ.— Ձեռ. Վենես. Ա. 621.

† ՆՈՐԱՄԵՒԻ, ար. <հ. նոր+արև բառերից. հնագույն հիշատակությունը ժի՞ դարից. սրանից է Նորարևեան ազգանունը:

— 1. Նորարև ոմն, հիշված է 1343 թ.— Տաշեան, Յուց. էջ 489:

— 2. Նորարև ոմն հիշված է նաև Ժի դարի կեսին՝ Դրնդ. էջ 487:

† ՆՈՐԱՄԻԱԳ, ար. <հ. նոր և աւագ բառերից. համազորն է Նորապետ: Հիշված է իբր գրիչ Տաշեան, Յուց. էջ 1136 գ ցանկում, բայց չկա նշանակյալ 558 էջում, ինչպես նաև իզ—լ ընդհանուր աղյուսակում:

† ՆՈՐԷՍ, ար. <հ. նոր բառից՝ ինչ որ և ամանիկով. հիշատակված է 1652 թից ուշ գրված անթվական մի հիշատակարանում (Ձեռ. Վենես. Ա. 740):

† ՆՈՐԻԿ, ար. <հ. նոր բառից. երեխ կրմատված է Նորիկ ձերից. հիշատակված է 1710 թ. (Ձեռ. Հալէպի, Ա. 329 թ.),

† ՆՈՐԻԿ, ար. <հ. նոր բառից՝ իկ փաղաքշական մասնիկով: Հնագույն հիշատակությունն է՝

— 1. Նորիկ Գանձակեցի, գնեց մի Աւետարան՝ Շահանշահի որդի Խութլուշահից՝ իր որդի Յովհաննէսի համար, որ պարաստվում էր քահանայության, 1350 թ.— Ձեռ. Աղուլ. (Արքա. 1911, 388):

— Ավելի ուշ են Նորիկ 1746 թ. (Ռուկեան՝ Եղիա Մուշեղեան, էջ 5), Նորիկ՝ 1488 թից ուշ գրված մի հիշատակարանում (Ձեռ. Վենես. Ա. 492):

† ՆՈՐԻԿՆ, ար. անշուշտ հ. նոր բառից՝ ին մասնիկով? հիշատակված է մի անգամ, անթվական մի հիշատակարանում (Bodleian 201):

† ՆՈՐԽԱԹՈՒԻՆ, իգ. <հ. նոր+խարօւն բառերից, ինչպես կա նօրտիկին, Հիշատակված է ԺԴ-ԺԷ դարերում:

— 1. Նորխարօւն, դուստր Դանիէլի և քույր Մարգարէ գրչի, որ Բերգձոր ղղյակում օրինակել է Հին կտակարանը, 1337թ.- Տաշեան, Ցուց. 696 ա:

— 2. Նորխարօւն, կին Գրիգոր քահանայի և մայր Մարգարէ քահանայի, որ Բալուի Նեխրի գյուղում օրինակեց Աւետարանը՝ 1475 թ.- Զեռ. Վենետ. Ա. 624.

— Ավելի ուշ հիշատակված ունինք Նորխարօւն 1695 թ. (Զեռ. Հալէպի, Ա. 42 թ.):

† ՆՈՐՀԱՏ, ար. <հ. նոր+հատ (հատիկ) բառերից. գործածվել է ԺԴ դարից սկսած. սրանից է Նորխատեան (շրջած նսերատեան) ազգանունը:

— 1. Նորհատ, որդի Մարտիբոսի. հիշված է 1420 թվից առաջ գրված մի ձեռագրում.— Տաշեան, Ցուց. 666.

— 2. Նորհատ քահանա, Նորոգեց Ժ դարում գրլած մի Աւետարանի կազմը. թվականն անհայտ. - Զեռ. Սանաս. 9 ա:

— 3. Նորհատ, հիշված է Գոհարի և Տրկնացի հետ իրեւ նվիրատու Արջոյառինի վանքին. — Անթվական Արձ. Շիրակ 123.

— 4. Նորհատ հիշված է նաև 1659 թ.- Զեռ. Սեբ.=ՀԱ 1926, 546:

† ՆՈՐՄԱՆՈՒԻԿ, ար. <հ. նոր+մանակ բառերից. մի անգամ գտնում եմ գործածված ժե դարում և մի անգամ էլ կըրճատ Նորման ձեռվ ժե դարում:

— 1. Նորմանուկ, որդի Յովանէսի. Տիգրիկի Վաւտըռ գյուղում Մատեֆանոս հայրապետին զրել ավեց մի Աւետարան, որ նվիրեց Աւագվանքին, 1469 թ.- Զեռ. Վենետ. Ա. 751=Թորոս աղբ. Բ. 363:

— 2. Նորման, հիշված է 1605 թվին. — Դիրնդ. 79:

† ՆՈՐԾԱՀ, ար. <հ. նոր+պր. և ՏԱԻ «Քաղաքոր» բառերից. Համա. Նորամիք, Նորպարսն. հիշատակված է ԺԴ-ԺԷ դարերում:

— 1. Նորշահ, ազգական Քաւուն միայնակյացի, որ զրել ավեց մի Աւետարան, 1330 թ.- Զեռ. Վենետ. Ա. 770.

— 2. Նորշահ, որդի Խորայէլ քահանայի, որ Մոկաց Փառայ վանքում օրինակեց Աւետարանը 1455 թ.- Նօտարք 179.

— Ունինք նաև հիշված Նորշահ 1609 թ. (Manus. ԵԱ. Պատ. 34), և անթվական՝ Լազարեան ձեմարանի Աւետարանում, էջ 110 թ և Զեռ. Վասպ. 186:

ՆՈՐՈԴէՍ, ար. ծագումն ինձ անհայտ. արդյոք հյ. նոր կամ նորոգ բառից է: Հիշատակված է ԺԴ-ԺԷ դարերում:

— 1. Նորոգէս, որդի Յովիանէս քահանայի, որ Մինեաց Քարադնիս վանքում գրել ավեց մի Աւետարան 1280 թ.- Զեռ. Վասպ. 104:

— 2. Նորոգէս միայնակյաց, Մուշում, Թորոս գրչին գրել ավեց Նոր-Կատարանը՝ 1284 թ.- Զեռ. Վենետ. Ա. 810.

— 3. Նորոգէ (առանց և վերջաձայնի) քահանա, զրիչ կամ ստացող Աւետարանի, Աւանայի Բաղնեկունք գյուղում, 1292 թ.- Թորոս աղբ. Բ. 436:

— 4. Նորոգէս (սեռ. Նորոգիսի), ստացող. իր եղբորորդի Անանիային գրել ավեց մի Ժողովածու, Եկեղեց գավառի Ս. Կիրակոս անապատում, 1364 թ.- Զեռ. Վիեն. 17 թ.

— 5. Նորոգէս, հիշված է առանց թվականի՝ Զեռ. Վենետ. Բ. 36:

† ՆՈՐՈՒԻԿ, ար. <հ. նոր բառից, ուկ փաղաքշական մասնկով. հմգտ. Նորիկ: Հիշատակված է մի անգամ 1824 թ. տես Իգնատ. ղկ. 500 (տպագրության հիշատակարանում):

* ՆՈՐՈՒԻՁ, ար. <պր. աջայ Նօրդն անվան մի ուրիշ գավառական ձեն է. ավելին տես վերը՝ Նուռուզ. Այս ձեր սակ հիշատակված է մի անգամ 1463 թվից հետո գրված անթվական մի հիշատակարանում (Զեռ. Սեբ.=ՀԱ 1925, 133):

† ՆՈՐԳԱՐՈՒՆ, ար. <հ. նոր և պարսն ձերից. Համա. Նորպատ, Նորշահ անունները: Սրա իգականն է Նորխարօւն: Հիշատակված է ԺԵ-ԺԷ դարերում:

— 1. Նորպարսի, որդի Գրիգորի և եղբայր Կոշկակար Մարտիբոսի, որ Աշոտաց Երկրի Անկիւնաց վանքում գրել ավեց մի Աւետարան, 1470 թ.- Զեռ. Վենետ. Ա. 588, Այրարատ 52:

— Ավելի ուշ հիշատակված են Նորպարոն 1564 թ. (Տաշեան, Ցուց. 848) և 1609 թ. (Զեռ. Սեբ.=ՀԱ 1925, 473):

ՆՈՐՎԱ (սեռական հոլով է. սեռն ու ծագումը անհայտ). հիշատակված է մի անգամ Ներքին Ազուլիսի 1478 թվից մի արձանագրության մեջ (Ազգագր. հանդ. ԺԱ. 318):

† ՆՈՐՎԱՐԻ, ար. <հ. նոր և վարդ բառերից. գեղեցիկ անուն, որ հիշատակված է ԺԷ դարում (Զեռ. Արգ. յովհ. 164):

† ՆՈՐՏԻԿԻՆ, իգ. <հ. նոր և սիլիմ բառերից, հոմանիշն է Նորխարօւն. հիշատակված է ԺԵ-ԺԷ դարերում:

— 1. Նորտիկին, կին Խաչատուրի, Շասպնջականի՝ Ցուցն

վարդապետի, որ Սուրբաթում, Ստեփանոս գրչին գրել տվեց Խոայի և Թուղթք Պօղոսի, 1356 թ.—Զեռ. Բերլինի, և ա.

— 2. Նորտիկին, մերձավոր Ստեփանոս գրչի, որ Մոկաց Ռազմական գանգում օրինակեց Մայր Մաշտոցը 1369 թ.—Թորոս աղբ. Բ. 427.

— 3. Նորտիկին, կին Մոմեղէնի և մայր տանուաեր Թաթարբեզի, որ Նարեկ գյուղում, Գոտկ կամ Իդիտ կրոնավորին գրել տվեց մի Աւետարան, 1420 թ.—Նոտարք 61, Զեռ. Վասպ. էջ 325.

— 4. Նորտիկին, դուստր Ստեփանոսի՝ եղբոր Թուժայ կրոնավորի, որ Մապատ անապատում գրել տվեց մի Աւետարան, 1421 թ.—Զեռ. Վասպ. 332.

— Ավելի ուշ հիշատակված են Նորտիկին 1604 թ. (Զեռ. Վասպ. 816) և 1311 թվից հետո զրված անթշական մի հիշատակարանում (Զեռ. Թաւր. 24 ա).

*ՆՈՒԲԱՐԴ, իգ. <կամ պր. այս ոավարց «ընծա» պարգևա բառից և կամ ավելի լավ՝ այս ոավարց «վարդ», իբր «նորավարդ», նորածիլ՝ նորաբաց վարդ»։ Հմատ. զնդ. ոավարց «ամիլ», թաւսնիլ, զնդ. Հնագեծի մի կոնջ անուն, որ Justii 140 ա մեկնում է իբր զնդ. հս-նագեծ «լավ աճած», իսկ Bartholomeae 1849 «արկի հայացք ունեցող» (հնագեծ «արկ» բառից), Justii 230 թ մեր Նուարդ անունը մեկնում է պրո. ոավարց «հաճելի», սիրելի։ Այս անունը ավանդված է մեզ մի անգամ շատ հնուց, երկրորդ անգամ ԺԲ դարում և ուրիշ վկայություն չունի։ Այժմ դարձել է շատ սովորական և մեր գեղեցիկ ու սիրելի անուներից մեկն է։

— 1. Նուարդ, Արա գեղեցիկի կինը, որին չդավաճանելու համար Արան մերժեց Ասորեստանցոց Շամիրամ առասպելական թագուհու սէրը, դուրս եկավ նրա դեմ պատերազմի, ուր և սպանվեց—բց. ի Նուարդայ՝ Խոր. Ա: ի. (Արա գեղեցիկի և Նուարդի մասին մի սիրուն պոեմա ունի Նար-պէյ, Ստուերք Հայկականք, Պոլիս 1874, էջ 22—34)։

— 2. Նվարդ, կին Ելիկի և մայր Աստուածառուրի, որ մի այդի և մի հնձան է նվիրել Հառիճի վանքին, 1196 թ.—Եիրակ, էջ 159.

- գիս վարդապետը առաջնորդ է Հերմոնի վանքի 1460 թ. (Սբացատեանց՝ Երնջակ 176): Աղելի ուշ կոչվում է բարունապետ Հերմոնի վանքի 1469 թ. (Զեռ. Թաւը. 132 թ) և 1473 թ. (Արցախի 139): Վերջապես հիշված է Զեռ. Սկան. 19, բայց թվականն անհայտ (միայն մե դար): Այսպեսով վարդապատճենը լինում Սարգիս վարդապետի (որ կարող ենք կոչել Հերմոնեցի) 52 տարվա կրոնավորական կյանքը (1421—1473 թ):—Սիսական 126 շատ շնչին բան դիտե այս անձի մասին:
- 438. Սարգիս, թվի եղբայր Գալուստի. Երկուսով մի արձանագրություն են թողել իրենց ծնողների հիշատակին, Աքքիրմանի եկեղեցում 1474 թ.—Մելիքսե-Բեկօք, Արմ. ձրե. 31, Կյուկ-Իօաննեսօվ, Ստար. արմ. հաճ. 32:
- 439. Սարգիս եպիսկոպոս միարան էջմիածնի. գողանալով կուսաւորչի աջը, տարավ Թաւրիզ, ուր հասավ նաև Զաքարիա կաթողիկոս Աղթամարի և տիրանալով աջին, հայտարարեց իրեն ընդհանուր Հայոց կաթողիկոս՝ «1460 թ» (Ազգապ. 2160), Զաքարիայի փախուստից հետո՝ Սարգիսը դարձավ աթոռակալ Գրիգոր Ժ կաթողիկոսի (Ազգապ. 2168), և այս պաշտոնը շարունակեց Արիստակէս Բ կաթողիկոսի ժամանակի. Նրա մահից հետո ինքը եղավ կաթողիկոս՝ Սարգիս Բ Աշատար անունով «1469—1474 թ», իրեն օգնական ընտրելով Յովհաննէս եպիսկոպոսին (Առաք. պտմ. 337, Զեռ. Վասպ. 469, Ազգապ. 2177—82):—Բայց նկատելի է, որ Սարգիսը կաթողիկոս է հիշվում զեւ ավելի երկար. Այսպիս նա հիշված է 1475 թ. (Բիւրակն շարաթաթերթ, 1899 թ. էջ 14 թ, և Յովհէփեան, Խողբակեանը 234).—ապա 1477 թ. (տես Զեռ. Ազուլ.=Արբա. 1911, էջ 219).—ապա 1478 թվին (տես Ամիրդովլաթի Անդիտաց անպէտի մեջ, էջ 2, Զեռ. Հալէպի, թ. 38 ա, Թորգոմեան՝ Ներբող, էջ 16; ինչպես և հրար. Ազաթ. 1909 թ. յոջ. էջ ծ և Սմբատեանց՝ Երնջակ 178).—ապա 1479 թ, երբ Սարգիս և Յովհաննէս միասին կաթողիկոս են հիշված (տես Զեռ. Սեր.=ՀԱ 1925, 262): Սրանք առնում են մեզ 1474 թվից մինչեւ 1479 թ. Բայց Սարգիսը կաթողիկոս է հիշված նաև 1469 թվից երեք տարի առաջ, այն է Զժե=1466 թ. (տես Թորոս աղբ. թ. 479): Այսպեսով Սարգիսի կաթողիկոսությունը տարածվում է 1466—1479 թ, որ անում է 13 տարի:—Սակայն տես նաև № 425:
- 440. Սարգիս, հայր Գոնդուլ փաշայի և պապ Խոջա էջը-

- շահի, որ Կառաց անապատում զրել ավեց մի Աւետարան, 1475 թ., — Զեռ. Վասպ. 472 3.
- 441. Սարգիս քահանա, գրիչ, օրինակեց մի Մաշտոց, 1476 թ.—Զեռ. Սեր.՝ ՀԱ 1926, 339:
- 442. Սարգիս, ստացել է մի Աւետարան 1477 թ.—Զեռ. Սեր.՝ ՀԱ 1925, 261:
- 443. Սարգիս քահանա. Նվեր ստացավ Էմին անունախնոջից մի Աւետարան 1477 թ., որ իր երեցկինը՝ Տինար, Քահանայի մահից հետո վաճառեց. — Բարիսուտ. Ազգանից երկ. 9:
- 444. Սարգիս արքեպիսկոպոս, առաջնորդ Երզնկայի 1477 թ.—Զեռ. Վենետ. Ա. 628:
- 445. Սարգիս ճղնավոր, մահաեսի, Շկրոնավոր և արեղայ, Խոյրարարձ և վակասաւոր. Հայրն է Զաքար, մայրը Դաւիդի, Եղբայրները՝ Էտկար, Զագիկ, Ասպահինչէ, Ամիրիսաս, Դաւիթ սարկաւագ, Ստեփաննոս, քույրը՝ Դիլշատ, հոգեոր Հայրը՝ Շատիկ, Հոգեոր Եղբայրները՝ Մեսրոս արեղա և Կարապետ. Միարան էր Սրբունից Բոլորարերի անապատում. Դաւիթ գրշին զրել է ավել մի ծառընտիր 1478 թ.—Սիսական 130, Խաղակեանք 235:
- 446. Սարգիս քահանա, Եղբայրն է Դրիգոր Եպիսկոպոս Աշտարակեցի դրչի. Թուղթ էր Կոկում 1478 թ.—Այրարատ 274:
- 447. Սարգիս արեղա, զրիչ. օրինակեց Աւետարանը՝ Ղաղարի համար, 1479 թ.—Զեռ. Կեռ. ածած. 47:
- 448. Սարգիս որդի Սասնայի, որ Փառիսոսում կանգնեցրել է մի խաչքար 1481 թ.—Արցախ 307:
- 449. Սարգիս փակակալ Հաւուցթառի. Վրթանէս զրին գրել ավեց մի Շարական 1482 թ.—Այրարատ 357, 443:
- 450. Սարգիս արեղա, միաբան Մուղնու վանքի. Հիշված է 1484 թ.—Զեռ. Սանաս. 25 ա:
- 451. Սարգիս մշակ, մերձավոր Սարգիս քահանայի, որ Բաղեշում գրել ավեց մի Յայսմաւորք, 1484 թ.—Rapport Bel-gique 39:
- 452. Սարգիս ամուսին Շնուռորի՝ քրոջ Զանվիլի, որ Մուղնիսում ստացավ մի օրինակ Գանձարան՝ 1484 թ.—Զեռ. Սանաս. 25 ա:
- 453. Սարգիս քահանա, Բաղեշում Մելքիսէթ քահանային զրել ավեց մի Յայսմաւորք, 1484 թ.—Rapport Bel-gique 39, 40:

- 454. Սարգիս կրոնավոր, որդի Ղաղարի. զրիչ. օրինակեց Գանձարանը՝ Տիւրիկի Կիւրզի վանքում, 1485 թ. Տաշեան, Յուց. 760:
- 455. Սարգիս կաթուղիկոս, հիշված 1485 թ (Արցախ 148), անշուշտ է Սարգիս Դ կաթուղիկոս Էջմիածնի (№ 483). Ճռապելը գրված է Սակնապատում, ուստի կաթուղիկոսը կարող էր յինք Աղթամարի, սակայն նույն ժամանակ Աղթամարի գահակալն է Սաեփաննոս Դ կաթուղիկոսը, որ նստել է 1465—89 թ.
- 456. Սարգիս վարդապետ, զրիչ. պարոն Շահամերի համար գրեց մի Աւետարան, 1487 թ.—Զեռ. Սեր.՝ ՀԱ 1925, 264:
- 457. Սարգիս, զրիչ. Բերկրիի Առեղոս գյուղում. Ցովհանէս քահանայի համար օրինակել է Աւետարանը 1488 թ.—Զեռ. Վասպ. 510:
- 458. Սարգիս, Եղբայր Յավհաննէս (№ 1229) քահանայի, որ Բերկրիի Առեղոս գյուղում գրել ավեց մի Աւետարան, 1488 թ.—Զեռ. Վասպ. 508:
- 459. Սարգիս երեց, կինն է Շահանդաւիտ, որդիքն են Յոհանէս, Եղեկիլ և Ղուկաս. Ստացավ Ասիլմելիք տատից իրեն նվեր մի Աւետարան, որ զրել էր տվել ներսէս արեղային 1488 թ.—Զեռ. Վասպ. 241—2:
- 460. Սարգիս գրիչ. օրինակեց Աւետարանը և վաճառեց Աստուծատուրին, 1488 թ.—Զեռ. Վենետ. Ա. 492:
- 461. Սարգիս Մահամետի, որդի Մատթէոսի, Եղբայր Մաթէոս վարդապետի, որ առաջնորդն էր Սերբաստիոյ 1489 թ.—Զեռ. Սեր.՝ ՀԱ 1926, 239, 240:
- 462. Սարգիս կրոնավոր, որդի Հոռմշահի. իր Եղբայր Մտեփաննոս կրոնավորի հետ միասին շինեցին Ս. Փրկիչը (Աղթամար), Ստեփաննոս Դ կաթուղիկոսի («1465—1489 թ») ժամանակ. — Հաւաք. 43:
- 463. Սարգիս Միայնակեաց Գողթն գավառի Բուռատ անապատում 1489 թ.—Մերատեանց, Երնջակ 275:
- 464. Սարգիս; արհի վարդապետ Անիքորացի, զրիչ. տանուել Մարտիրոսի ծախոսվ գրեց մի Աւետարան, 1489 թ.—ՀԱ 1894, 52 ա:
- 465. Սարգիս որդի Աստուծատուրի և հորեղբորորդի Դովլաթիսթունի, որ Աղթամարում օրինակել ավեց Աւետարանը՝ Հայրապետ արեղային, 1490 թ.—Զեռ. Նոր-Բայազ. 13:

- 466. Սարգիս պապ Լիանոսի, որ ստացավ մի Աւետարան, 1491 թ.—Թորոս ազր. Ա. 120.
- 467. Սարգիս որդի Լիանոսի, որ ստացավ մի Աւետարան, 1491 թ. (սահորդի թոռնորդին է).—Թորոս ազր. Ա. 120.
- 468. Սարգիս, որդի Գրիգորի և եղբայր Վարդանի, որ Շատախում, Իսրայէլ գրչին գրել տվեց մի Աւետարան, 1491 թ. —Ձեռ. Վասպ. 517.
- 469. Տէր Սարգիս, հայրապետ սուրբ Աւետին Գևառմիջոյ 1493 թ.—Արցախ 247.
- 470. Սարգիս, գրիչ. Խաչենածորի Ս. Ստեփաննու վանքում, Պարսնոտէր արքեպիսկոպոսի խնդրանոք գրեց մի Աւետարան, 1493 թ.—Արցախ 247.
- 471. Սարգիս դպիր, որդի Յովհաննէսի և եղբայր Համանգուլ կույսի, որ Այրի վանքում, Ստեփան արքեպային դրել տվեց մի Աւետարան, 1493 թ.—Թորոս ազր. Բ. 304.
- 472. Սարգիս վաթքապետ, ուսուցիչ Աւագտէրի, որի մասին տես առանձին. հիշված է 1473—95 թվերին.—Խաղակիանք 232, 236.
- 473. Սարգիս քահանա, եղբորոդի տանութեր Գևառոսի, որ Վանում, Ազարիա քահանային դրել տվեց մի Աւետարան, 1495 թ.—Ձեռ. Վասպ. 476 (Բիշը սիսալէ դրել 1475).
- 474. Սարգիս, հորեղբայր Ատոմի, որ Ազրակի Երևանի գյուղում գրել տվեց մի Աւետարան 1498 թ.—Ձեռ. Վասպ. 527 (տես և Հարիբ թ. 4).
- 475. Սարգիս, որդի տանութեր Յովհանի, որ Երևանոցմում, Բանձառ գյուղում գնեց մի Գևանձարան, 1498 թ.—Ձեռ. Սեր. =ՀԱ 1927, 433.
- 476. Սարգիս քահանա Դերջանցի. գերությունից աղատեց Շնաւէթի Անյազի Խմաստափականքը և նվիրեց Գևորգ վարդապետին (ժե դմբ).—Տաշեան, Տաւը. 807 թ.
- 477. Սարգիս վարդապետ ոմ, որի գամբարանը գտնվում է Յովհաննավանքում (տես էջմ. Խ 936 ձաւընտրի յիշ. 1687 թ).—Ժե դմբ.
- 478. Սարգիս Յարութիւնցի, աշակերտ Սարգիս վարդապետի Սովորայ վանից և գամբնկեր Թավճառ Մեծոփեցու, ապա Գրիգոր Տաթևացու, երր առ ուսուցանում էր Մեծոփում (ժե դմբ).—Մեծոփ. 52, Աղդամ. 1900.
- 479. Սարգիս Գ, կաթուղիկոս Ազթամարի. հաջորդ եղի-

- շէ Գ-ի և նախորդ Ներսէս Բ-ի (ժե դմբ).—Հաւաք. 61 (կեղծիք).
- 480. Սարգիս Դ կաթուղիկոս Ազթամարի. հաջորդ Ներսէս Դ-ի և նախորդ Յոհան Ե-ի (ժե դմբ).—Հաւաք. 62 (կեղծիք).
- 481. Սարգիս Ե. կաթուղիկոս Ազթամարի. հաջորդ Միքայէլ Բ-ի և նախորդ Կարապետ Ա եկպանցու (ժե դմբ).—Հաւաք. 62 (կեղծիք).
- 482. Սարգիս Եպիսկոպոս, Նվիրակ էջմիածնի. նահատակից Թուրքերի ձեռքով Ամասիա 1506 թ. հոկտ. 17.—ազնիւն տես Յովհաննէս Խ 1305.
- 483. Սարգիս Գ Միւսայլ, կաթուղիկոս հայոց «1484—1515 թ». նախապետ աթոռակալ էր Յովհաննէս է Աշակեր կաթուղիկոսին. երր առ մեկնեց Կամենից «1484 թ», իրեն հաջորդեց Սարգիս Գ-ը, աթոռակալ ունենալով Վըբանէս, Արփատակէս, Թաղէսս և Եղիշէ (Առաք. պտմ. 330, 331, 337, Այրարտ 443), Ազգապ. 2208 թեւ Սարգիս գահակալությունը դնում է «1484 թ», բայց մահվան թվականը սւյսում է կամ անհայտ թողնել և կամ երկարել մինչև «1515 թ»: Հիշված է նույն 1485 թ. (տես Սարգիս Խ 455), ապա Սկանի դռան նշանավոր արձանագրության մեջ 1486 թ. (Միասկան 84, Անահիտ 1932, էջ 25), ապա 1498 թ. (Ձեռ. Դադեան, Բ. 46 ա), 1513 թ. (Rapport Belgique 182), իրեն հաջորդեց Զաքարիա Բ Վազգարշապատիք, —Աղդամ. 2197—2218.
- 484. Սարգիս Ջ պատրիարք Երուսաղէմի, 1507—1517 թ. հաջորդել է Գևորոս Բ-ին (Աղաւնունի):
- 485. Սարգիս Դ Վրաստանցի. կաթուղիկոս Հայոց «1520—1536 թ». նախապետ Վրաստանի առաջնորդ էր. ապա Եղագ աթոռակալ Զաքարիա Բ Վազգարշապատու, որի մահից հետո հաջորդեց իրեն. —Առաք. պտմ. 337. Կամենից 162. Ազգապ. 2223—2232.
- 486. Սարգիս Ա Ղշլաղցի, կաթուղիկոս Աղուանից. հայորդել է Արփատակէս Բ-ին, որ գահ էր Պարձրացել 1516 թ. Սարգիսը նույն Արփատակէսի եղանորդին էր, Արփատակէսի մահվան և Սարգսի գահակալության թվականները հայտնի չեն: Գիտենք միայն որ Սարգիսը մեռել է 1554 կամ 1555 թ. Թում է նրանից մի արձանագրություն 1548 թվեց, որ հրատարակված է Շահնշահ. Բ. 373 և Արցախ 177 (Ձեռ. Դադեան, Ա 89 թ, Ժամրո 58): Այս Սարգիս կաթուղիկոսի դիտենակ Սմբատանց՝ Երնջակ 146. Հիշված է 1554 թ. և մեռած 1555 թ. նույն է Գանձառարում: Համաձայն նախորդ 1546 թվի արձանագրության,

Սարգիսը որդին է Հատիկ-Մէլիքի և թռու Սայառունի (նույնը Բարխուտա. Պատմ. աղջ. Ա. 142). այս Սայառունին էլ որդին է պարուն Ազրաստի, որ հիշված է 1467 թ. Բոլորն էլ սերունդ են Խաչինի իշխան Հասան-Զալալ-Դօլայի, որ նահատակվեց 1261 թ. — Սարգիսին հաջորդեց Գրիգոր Դ:

— 487. Սարգիս վարդապետ. թաղված է Գեղամայ Երկրի Վասակաշէն գյուղում. որա կողքին էլ թաղվեց Յովհաննէս Սարեցին ՌէԲ = 1583 թ. — սեռ. Սարգսի՝ 84նոկ. 192, Առաք. պատմ. 472:

— 488. Սարգիս Ա. Ուլնեցի, պատրիարք Պոլսի «1587—1590 թ» հաջորդեց Թովմաս Ա-ին. Ազարիա Զուդայեցու մեկնելուց հետո կրկին աթոռ բարձրացավ «1592—1598 թ» և 4 տարի նստելուց հետո՝ տեղի տվեց Տիրատուր Սուեցուն: — Ազգապ. 2284—5:

— 489. Սարգիս վարդապետ գիտնական (ժամանակակից)՝ Այրարան 403:

— 490. Սարգիս եպիսկոպոս Գարունակէր. Արագածոտն գտակի Յարենի գյուղից էր. առուշնորդ Սազմսսավանքի. ճկնագորական կյանքը մեր մեջ վերանորոգելու համար գնաց Երուսաղէմ և միանալով Կիրակոս Տրապիզոնցու հետ, միասին ըստրեցին Յորդանան գետի ափին կամ Փորձութեան լեռան մոտ մի հարմար վայր: Հանդիպելով Մովսէս Սիւնեցուն «1607 թ» նրա խորհրդով եկան Սիւնիք և Բարկուշատ գետի ափին, հին Քանահատի վանքի մոտերքը հիմնեցին Հարանց անապատը «1608 թ»: Այս վանքը դարձավ հայ եկեղեցական վերանորոգման համար նշանավոր կենտրոն, որից զուրս եկան բազմաթիվ ուսոյալ կրօնավորներ. ոմանք էլ հեռանալով բաց արին ուրիշ տեղերում նմանօրինակ հաստատություններ. ուրիշներ մինչև կաթողիկոսական գահը բարձրացան: Մեռել է 1620 թ: — Առաք. պատմ. գլուխի ԻԱ և Հ. 201, 218—9, 222, 241, Հայապ. 621. Ազգապ. էջ 2343:

— 491. Սարգիս Մելիքինեցի, նոր վկա. մանկական հասակում մահմեղական էր զարձել: Երկար տարիներ հետո, նորից իր կրօնին է զառնում և հալածանքից խուսափելու համար, անցնելու է Զմիւռնիա: Բայց րոնզում է և զատի տրվում: Զուրանալով քրիստոնեությունը, նահատակվում է գլխատմամբ, 1656 ապրիլ 15: Թաղվել է Զմիւռնիայի հայոց եկեղեցու բակում, ուր իր շքեղ զամբանը կա մինչև այժմ և սւխտատեղի է: — Թուեն,

Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հա. Ա, էջ 82, Նոր վկայք, էջ 383, Աղդապ. 2262, վերջին անգամ՝ Թորգումեան, REA 4, 217, ուր կա նաև տապանաքարի նկարը և ճշգրտել է նահատակության թվականը:

— 492. Սարգիս եպիսկոպոս Թէքիրտաղցի. աշակերտ Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքի. դրամական վատնումների համար բանտարկված էր. կարողացավ կաշառքով իրեւ Պուսի պատրիարքական աթոռը՝ տապալելով Յովհաննէս Թէքիրտանի պատրիարքին («1664 թ»), որ մի տարի հետո նորից տիրացավ աթուուին: Երբ Յակոբ կաթողիկոսը Պոլսի էր գնացել, Յովհաննէսին իրեւ զեղծարարի գահազուրկ արեց և աթոռը հանձնեց Սարգիսին «1667 թ»: Մեռել է «1670 թ»: — Ազգապ. 2556:

— 493. Սարգիս Էքմէքի: Տաճկաց բանակի հացի հայթայիշն էր. ճեռնազրկեց քահանա և խեց Պոլսի պատրիարքական աթոռը՝ տապալելով Կարապետ Կեսարացի պատրիարքին «1679 թ»: մի տարուց ինքն էլ ընկավ: — Ազգապ. 2606:

— 494. Սարգիս Մելիք Սերկելցի: գավառապետ Կարրի «Նահանգի» 1687 թ. (տես էջմ. № 936 Ճարշնարի հիշտակարանը):

— 495. Սարգիս սարկավագ Կարսուցի (ավագանի անունով Սաֆար): 18 տարեկան գեղեցիկ պատանի էր. մուշտակի առաւտուր էր անում. մի տաճէկ կրոնավոր ուղենալով ձրի ապրանք շորթել նրանից, ամբաստանեց թե հայույն է իր կրօնին. ամբոխը զատի տվեց և հավատքը չուրանալու պատճառվ, քարկածելով նահատակեցին և զին այրեցին «1691 թ»: — Նոր վկ. 528—530: — Ազգապ. 1745:

— 496. Սարգիս բժիշկ Անեցի՝ 1700 թ: — Թորգումեան, Ներբող, էջ 27:

— 497. Սարգիս Երեց, տաղասաց Ժէ գարի: — Յուշիկը թ. էջ 126:

— 498. Սարգիս Եպս. Արդութեան, որդի Բերեկի. վանահայր Սանահնի վանքի. նորոգել է տաճտաները. օրինակի է տվել Խորենացին, Ասողիկն ու Լաստիվերացին. թաղված է նույն վանքում (Ժէ գար): — Մառ. Ամառն. ուղե. 87:

— 499. Սարգիս քահանա Բերիացի. արհեստով ակնագործ էր. գիտեր արարերեն; Բուրգերեն, Գրանտերեն, հունարեն և հրէարեն. զրեց ակունքների մասին մի գիրք, որ Առաքել Դաւ-

բիթեցին անց է կացրել իր Պատմության մեջ (Ժէ դար)՝
Առաք. պատ. 452—467, հատկապես 459. Տաշեան՝ Ցուց. 432,

— 500. Սարգիս տաղասաց՝ Ժէ դարի. իր տաղերից մի
նմուշ՝ տես Զեռ. Հալէպի, Բ. Էջ 63 բ.

— 501. Սարգիս խալֆա. նշանավոր ճարտարապետ. վերա-
շինեց Հալաթիոյ հայոց Ս. Կուտառիչ եկեղեցին, որ այրվել
էր հրդեհը 1731 թ. — Ազգապ. 2875:

— 502. Սարգիս վարդապետ Բալուեցի. աշակերտ Միքայէլ
կաթոլիկոսի Կիլիկիոյ. տաղասաց. ունի 17 տագ, որոնց ինք-
նամեռագիրը՝ 1759 թվից, Խում է այժմ. սրանց արտատպու-
թիւնը տես Զեռ. Կես. սարգ. Էջ 16—18:

— 503. Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան. ծն. 1699 թ.
եղագ առաջնորդ Կեսարիոյ և Գաղատիոյ. զնաց Հոռոմ, ապա Վե-
նետիկ, ուր բացազ տպարան և ճրատարակեց 15 կտոր գիրք
(1742—52 թվերին). սրանց մեջ հիշատակության արժանի են
էֆիմէրոտ (անարժեք գուշակական գիրք), որ այսօր էլ մեծ
հարգ է վայելում Կովկասում, իրեւ մարգարեական հեղինակու-
թյունն և խաթարմամբ կոչվում է Նիկրեմվերդի) և Խորենացոյ
Պատմութիւն և Աշխարհագրութիւն. Դարձավ Պոլիս, ուր իրը
կաթոլիկ հալածվելով՝ փախազ նւրոպա: Մեռել է 1773 թ. Լի-
վոնիո: Ընդգրածակ կենսագրությունը գրեց Գալէմքեարեան, Վիեն-
նա 1908 (Ազգ. մատ. հատ. ԾԵ):

— 504. Սարգիս վարդապետ Թիֆլիսկեցի. տաղասաց Ժէ
դարու. — Տաշեան, Ցուցակ 1148 ա:

— 505. Սարգիս քահանա Կարսեցի, որդի Յոհան վարդա-
պետի. նահատակ. բաղնիսում մի մոլլայի հետ կովի էր բոնզի. մոլլան զնաց փաշայի մոտ և չարախորեց թե Նուրանին է հայ-
ույշել. քահանային ստիպեցին ուրանալ հավատքը, մերժեց. ծե-
ծելով տարին կառափնատի մոտ. շարեանարարոյ լազերն յետե-
ւանց յերկու արճին զարկին, վար ընկաւ, յետու զուլին կարե-
ցին 1796 թ. Ավելածու Աւետիս քահանան գրեց նրա նահա-
տակության պատմությունը, որ տպ. Նոր վկ. 722—4:

— 506. Սարգիս դպիր Սարափ—Յովիհաննէսեան, Պոլսեցի.
ունի «Ճեղագրութիւն Պոլոյ»: որ է հավաքածու պատմական
տեղեկությունների 1803—1804 թվերի: Զեռագիրն է 4 հատոր,
ընդ ամենը 1400 էջ. պատկանում էր թժ. Վ. Յորգոնեանին.
քաղվածներ ունի Ազգապատումը: — Ազգ. մատ. ՀՀ, Էջ 60:

— 507. Սարգիս Բ Հասան-Ջալալեանց, կաթոլիկոս Ազգանից.

Յովհաննէս (թ. 1377) Բ Հասան-Ջալալեանց՝ Բուհավորժամբ
սպանված կաթոլիկոսի եղբայրն էր: Նրա մտելից հետո, ժողովուր-
դը զզված Խորայէլ հակաթոռ կաթոլիկոսի արարթներից, Պան-
ձակի Հասան խանի պաշտպանությամբ և էջմիածնի Հուկոս-
կաթոլիկոսի հավանությամբ, գտն բարձրացրեց Գանձառարաւմ
«1793 թ. թե՛ Ղուկասը նախազես համաձայնվել էր, բայց
Սարգսի ինքնազլուխ օծումից վշտացած» մերժեց ճանաչել նրան
կաթոլիկոս, և թույլ տվեց որ նոտի Հազրտափ վանքում, միայն
իրէ առաջնորդ «1797 թ. Բարիուտ. Պատմ. ազգ. Բ. 122, 128
տում է թե Սարգիսը իր ժողովուրդի հետ զաղթեց Վրաստան և
նոտավ Հազրտափ վանքում 1799 թ. և Խորայէլի մահից հետո
վերագրածավ իր աթոռը 1806 թ. և ապա Գանձառարաւը 1812 թ.
(անդ՝ Էջ 142), ուր Նորսկց իր կաթոլիկոս տիտղոսը: «1815
թվին Ներսէս Աշտարակեցին՝ Եփեմ կաթոլիկոսի անդամակ
Ռուս կառավարության հետ բանակցության մտնելով՝ շնչեց
Ազուանից կաթոլիկոսությունը, իրեւ չլուսիչ հայ ազգային
միության և Սարգիսին պահեց միայն մեպրապուխ տիտղոսը:
Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Սարգիսը նորպում
է իր կաթոլիկոս աթողովը «1826 թ. Ռուս զորավար Երժուովիի
մոտ ամրաստանում են նրա մտաին, թե նա զավաճանությամբ
անցել է Պարսից կողմէ և հօրդորել է ժողովուրդին, որ Շուշին
հանձնեն Պարսից: Ներսուվը կանչում է նրան Թիֆլիս: և թե
քննության ժամանակ նրա անմեղությունը հաստատվերազ ա-
զատ է արձակում, (1827 թ.), բայց այդ արարքը այնպես է ազ-
գում ծերունի կաթոլիկոսի վրա, որ անկողին է ընկնում և մեռ-
նում «1828 թ. Պաղպում է Գանձառարի վանքի զավթում, որ
մում է իր գերեզմանը (Արցախ 176): իր հետ թաղվում է նաև
Ազուանից կաթոլիկոսությունը, որ վազուց անվանական էր
դարձել: — Ազգապ. 3239, 3495, 3706. Բարիուտ. Պատմ. ազգ. Բ.
Էջ 166:

— 508. Սարգիս Պույումճեան, պատրիարք Պոլոի «1860—
1861 թ. հայորդեց Թէորգին, իրեւ սուածին սումենագրական
պատրիարք. գահնկեց. եղագ իրեւ հակոսահմապրական: —
Ազգապ. 4019, 4052:

— 509. Սարգիս Ռ (ժամանակն անհայտ). Մղնաչափու-
թիւնը վերածել է ասպարէզների: — Այրարտ 413 հան:

— 510. Սարգիս վարդապետ. թարգմանել է Ազատա-

նայեցւոյ դործերը հունարենից հայերեն (ժամանակն անհայտ).—
Զարք. թրդմ. 296.

* ՍԱՐԴՈՒԽ, իդ. <պր. ար «գլուխ» և շ ցւ «զարդ»
բառերից, իր թե զարդերի գլխավորը՝ ամենալավը»: Այս ձևով
հիշված եմ գտնում մի անդամ 1517 թ. (Թորոս աղք. Բ. 275):
Այժմ կենդանի է երեք ձևով. թե Սարզուլ, թե Սարիզիլ (որ.
Սովետ. Հյուտ. 1945 թ. մրտ. 31, էջ թ) և թե Սարիզիլ: Գուցե
ուսանը հասկանում են շասրի՝ լեռան զարդ, ուրիշներ «Ծրք.
sari (չեղին) զարդ» և կամ «թրք. sarin (զով)» զարդ: բայց
այս բոլորից ավելի ստույդն ու հարմարն է առաջինը:

* ՍԱՐԴՈՒԽԻԿ, ար. փաղաքշական ձևն է Սարզիս անվան:
Հիշատակված է անթվ. մի արձանադրության մեջ (990 թ.)
Սիսական 41. մի ուրիշը ժողովարից. ժթ զարից էլ կա Սարզիկ
ձևով:

— 1. Սարզիկ? (ավանդված է միայն սեռ. Սարզիսնն
ձևով), որդի Սարզմանի. մերձավոր Տրդատ քանանայի, որ իր
հուշուց անուն կնոջ հետ տուն և այգիներ է նվիրել Անիի Ս.
Փրկիչ եկեղեցւուն 1173 թ.—Արձ. Շիրակ 86.

— 2. Սարզուլ, շինել է Հայրավանքում երկու խորան,
իր կնոջ Բահրի հետ (ժողովարի).—Սիսական 41. նույնը ունի և
Սմբատեանց, Գեղարքունի 435 (բայց գրում է Սարզուլ):

* ՍԱՐԴԱՄ, ար. <պր. այս սարդ՝ «զորավար» բառից.
իրեք անձնանունն հիշված է մեր մեջ 1666 թ. (Զեռ. Վասպ.
928), 1704 թ. (Զեռ. Դադեան, Բ. 14 ա): Սրանից է Սարդարեան
ազգանունը:

ՍԱՐԴԻԿ, ար. ծագութիւն ինձ անհայտ. մի անգամ՝ գտնում
եմ հիշատակված՝

— Սարդիկ կրոնավոր, միաբան Հայուցթառի. արդեն ծե-
րունի՝ հիշատակված է 1214 թ.—Այրարատ 356:

* ՍԱՐԻ, ար. <թրք. օյլ սար «գեղին» բառից. հմմտ. հյ.
Դեղին անունը և թրք. Սարուխան, Սարիք անունները. նաև
Սարու նշան՝ նախարար Շահարասի (Առաք. պտմ. 93): Ավանդ-
ված է Սարու ձևով 1609 թ? (Զեռ. Հայէպի, Ա. 98 ա), Սարու
անթվ. (Զեռ. Վասպ. 286), Սարի զորավար Մեղրեցոց՝ ԺՀ դար
(Սիսական 304 ա), Սարու ԺՀ դար (Զեռ. Թաւր. 25 թ): Այժմ
էլ դործածական է Հարարազում, Սարի ձևով, որից է Սարեան
(Պ. Սարըեան) ազգանունը, Տես և Սարիի:— Սարի դործածված
է նաև իր հա. 1747 թ. (Զեռ. Նոր-Բայազ. 47 ա):

ՍԱՐԻ, ար. <ծագումը նախորդից տարբեր է, որովհետեւ
բրդական ազգեցությունից առաջ է:

— 1. Սարի Ամատունի. Զահուկ բերդի տերն ըր. իր բերդը
կամովին հանձննեց Գրիգոր (№ 71) Դերենիկ Բ.-ին և մեծ պա-
տիվ ստացավ նրանից (Թ դար).—Սուտ—Շապէ. 48:

— 2. Սարի, զորավար Ապիրատ իշխանի. երբ Ապիրատը
սպանվեց Դուիխի Ապուսուար ստրկանից, Սարին վերցրեց նրա-
կնոջ և որդիներին ու տարավ Անի, ուր պատվազ ընդունվեց
Ցովէ. Սմբատ թագավորի (1020—1042 թ) կողմից.—Ունէ. 11:

— 3. Սարի. կամ է հիշյալ զորավարը և կամ որդի Ապի-
րատի, եղբայր Ապօհանապի և Վասակի. իր հոր սպանությունից
հետո զնաց Անի՝ Յովհաննէս-Սմբատ († 1042 թ) թագավորի մոտ-
—Ունէ. 11:

ՍԱՐԻԱՅՅ, ար. հիշված է իրեկ Բագրատունեաց հին անուն-
եար. Բ. կդ. (երեք ձեռագրի մեջ): որ և Սաւետ ձևով ունի Սի-
անց: իա:

— Սարիայ, ազգական Ենանսս Բագրատունեաց. Արշամը-
սպանեց նրան ի պատիժ Ենանոսի.—Եոր. Բ. իդ.—Նույնը Սարի-
ձևով ունի Ուխտ. Ա. ր:

Sariaster, որդի Տիգրանի. ապստամբեց հորը դեմ.—Justi
288—9, որ մեկնում է այս բառը իրան. սար «գլուխ»+զնդ. պհ.՝
յանտ «պաշտող» բառերից, իրը «քահանայապեն»:

* ՍԱՐԻԲԵԳ, ար. <թրք. մէջմօ Տարիեց անունից, որ բուն
նշանակում է «Եղեղին բէր» (տես մերը Եղեղին և Սարի անուն-
ները): Այս անունով հայունի է մի թուրք իշխան ԺԴ դարից
(Իրն-ի Բատուտա, II, էջ 362 Տարիեկ ձևով), որ Justi 290 ա հա-
մարում է պր. այս սարն թոշունի անունից, ինչ որ ճիշտ չէ:
Այս անունը գործածական է այժմ էլ մեր մեջ. հնագույն զկա-
յությունն ունինք 1602 թ. (Այրարատ 31). անթվական է Սա-
րիեպիկ՝ Զեռ. Վասպ. 618:

Սարիմ տես Սարում:

Սարինգու տես Սարզուլ:

ՍԱՐԻՈՒԹԱ, ար. ծագութիւն անորոշ. մի անգամ ունինք
հիշված՝

— Սարխուրա, որդի Մալիքի, միաբանել է Գետաշէնի Աւե-
տարանին և իր զուտար հսանին որդեզիր է տվել Սովուս քա-
հանային 1387 թ.—Յովհաննէս, Նիւթեր և ուս. Ա. 45, 61:

* ՍԱՐԻՕՇ, ար. <պր. շխու սարչօծ «մի քիչ հարբած»

բարից (կարելի է հասկանալ նաև «սիրով հարրած» են). Անձնուուն է նաև իրանցոց մոտ. ինչ. Sarxus մոնղոլ բանառեղծ † 1715 թ. (Justi 289 թ). նույն իմաստով կան նաև Sarmast իան աֆղան Քանդահարի, 1553 թ. (Justi անդ). իսկ Խումար տես առանձին: Սարխոս անունը հիշատակված է մեր մեջ ժԶ—ժԷ դարերում. այսպիս՝ Սարխուշ 1549 թ. (Զեռ. Վասպ. 651, Խաղ-րակեանք 243), Սարխուշ 1557 թ. (Զեռ. Վասպ. 659), Սարխուշ 1572 թ. (Տաշեան, Ցուց. 666), 1581 թ. (Զեռ. Դաղեան, թ. 32 ա), 1635 թ. (Դրնզ. 527), 1658 թ. (Զեռ. Սեր. =ՀԱ 1926, 549), Սարխուշ 1665 թ. (Թորոս ազր. թ. 411), անհայտ թվականով՝ Շարխօշ (Զեռ. Վասպ. 606—7), Սարխօշ՝ ժԶ դար (Տաշեան, Ցուց. 449), ժԷ դար (Ազգ. մատ. ՀԸ, 72), անթվ. (Զեռ. Վասպ. 391): † ԱՄԲԻԱԼԻԱԳ, ար. <հ. սարկաւազ բարից. հմմտ. այլ կրոնական աստիճաններ, որոնք անձնանուն են դարձել. ինչ. Հայրապետ, Տէրտէր, Տիրացու, Քահանայ, Վարդապետ (տես այս անունները առանձին):

— 1. Սարկաւազ Սոփեստոս † «1129 թ» տես Ցովհաննէս (Հ. 163) Սարկաւազ:

— 2. Սարկաւազ քորեպիսկոպոս Ստեփանոս Գ կաթոլիկոսի Ազոււանից (ԺԲ դար).—Կիր. գ:

— 3. Սարկաւազ առաջնորդ Հաղարծնի վանքի (ԺԲ դարից հետո).—Ցուշիկը թ. 304:

— 4. Սարկաւազ քահանա, որդի Սամուէլ երեց Անեցու և հայր Արքահամ երեցի, որ կալվածներ է նվիրել Խծիօնքի վանքին 1233 թ.—Արձ. Շիրակ 128:

— 5. Սարկաւազ, Հերենիրի աթոռակալ քահանա. Դադիկ երեցի ցեղից էր. մատաղ հասակում Հերենիրի քահանա ձեռնադրբեցից, բայց վաղամեռիկ էր եղել արդեն 1243 թ.—Արձ. Սիստան 112, Արքու. 1889, էջ 330:

— 6. Սարկաւազ, եղբարորդի Մխիթար Քորայրեցու. իր անունով կա մի խաչքար Հաղբատում, 1255 թ.—Ցովհաննէս, Նիւթեր և ուս. Ա. 62, 63:

— 7. Սարկաւազ, որդի Վրդաննէս Գառնեցու, վաճառտիան, Ակեղեցական սպասներ է նվիրել Հաղբատի վանքին 1261 թ.—Արձ. Երզնկեանց, Հնախ. տեղագր. 30:

— 8. Սարկաւազ երեց, որդի Մկրտչի. հող, այգի և հովատուն (villa, ամառանոց) է նվիրել Նորավանքին 1271 թ.—Միտական 190:

— 9. Սարկաւազ, իշխեցող կաթոլիկոսն Անւոյ. հիշած է 1286 թ.—Շիրակ 72, 96:

— 10. Սարկաւազ կրոնավոր, իր եղբարորդի Ցովհաննէս գրել տվեց մի ժողովածու, Արճէշի Ասպիսնկայ վանքում, 1298 թ.—Շունեան, Հայք ի Զմիւռն. թ. 82:

— 11. Սարկաւազ վարժապետ, աշակերտ Մխիթար († 1213 թ) Գոշի. առաջնորդ էր Գետիկի վանքի (ԺԲ դար).—Կիր. Ժա, Ոսկեան՝ Մատ. քնն. 132:

— 12. Սարկաւազ արեղա, միաբան Տեղերի վանքի, ուութ օր մտօք յափշտակեցաւ յԱստուած, զնաց Երուսաղէմ ուիսի, ուրչե մեռավ (ԺԲ դար).—Այրարատ 147:

— 13. Սարկաւազ հպիսկոպոս Գողթան. ստորագրում է այն թղթին, «որ գրեցին Սիւնեցիք Գրիգոր է Անաւարզեցի» («1293—1307 թ») կաթոլիկոսի կաթոլիկական նորմուծությանց գևմ.—Օբր. կը. Չամչ. Գ. 291, Ազգապ. 1767.—Սիստան 312 թ սրա գահակալությունը զնում է 1280—1300 թ.

— 14. Սարկաւազ, մերձավոր Թումայ և Հայրապետ քահանների, որոնք մի Աւետարան գրել տվին 1304 թ.—Զեռ. Վասպ. 143:

— 15. Սարկաւազ քահանա, շինել է տվել Գնդեվանքի զանդակը, որ գտնվեց պեղումների ժամանակ՝ մի կարճ արձանագրությամբ 1307 թ.—Սիստան 107:

— 16. Սարկաւազ գրիչ. գրել է մի Աւետարան Զաշուա իշխանի և նրա կնոջ Սամախաթուն իշխանունու համար՝ Անդրեդում 1310 թ.—Զեռ. Կարին. 17:

— 17. Սարկաւազ, ուութցի Աստուածատուր գրչի, որ օրինակեց Աւետարանը, 1317 թ.—Մանս. brit. mus. 20 թ:

— 18. Սարկաւազ մոնղոն Ցովհաննավանքում 1318 թ.—Այրարատ 172:

— 19. Սարկաւազ վարդապետ, առաջնորդ Կուքի կամ Հաղբարիւրք վանքի, 1322 թ.—Խաղբակեանք 60:

— 20. Սարկաւազ կրոնավոր, միաբան Քաջբերունյաց Սուխարայ վանքի. շնորհեց ԺԲ մարգարեցից և Յորայ գերքը Սարգիս գրչին՝ արտագրելու համար, 1325 թ.—Թորոս ազր. թ. 332:

— 21. Սարկաւազ Բերգակը, տաղասաց ժԶ դարի. իր աղքերից են Գովհեա խաղողոյ և գինոյ, Կիւղել մի ես երեկ տեսայ (Հրաբ. Գամառ-Քաթիկա, Ազգ. երգարան, 1856, էջ 85).

Կոստանեան, Նոր ժող. Բ. 46, Գ. 67 և էջ ըւ Տես և Տաշեան,
Ցուց. 1148 թ.

— Սարկաւագ անվան անթվական հիշատակություններ տես
Շիբակ 120, Երզնկեանց՝ Հնախ. տեղադր. 69=Ազգագր. հանդ.
է, 417, նուև Հաղբատի վանքի մի դամբանի վրա՝ Երզնկեանց,
անդ 63, 67:

— Սարկաւագ անվան կրճատ ձեն է Սարկաւ, անթվական.
մի հիշատակության մեջ՝ Զեռ. Թագ. 83 թ:

* ՍԱՐՀԱՆԻ, ար. <պր. աճյութականութիւն բա-
սից. իրեւ անձնանուն գործածված է նուև Պարսից մեջ. ինչ.
Sarhang «մա գերունի Մուսուլում 1052 թ (Justi 288 թ), Sar-
hang ներքինի Մելիքանի, դրավեց Վանը 1064 թ (Justi 310 թ):

— Սարեանգ թագավոր Հայկազանց, հաջորդեց Արմոգին.
թրեն էլ հաջորդեց Շաւաշը. — Սեր. Ա. էջ 6, Սիմ. ապար. 19.—
Ալիշան, Հյուս. նախ քան 232 խոսում է այս թագավորի մասին,
անունը փոխելով Սարեալ:

* ՍԱՐՀԱՏ, ար. <պր. աճյութական, սահմանա-
գլուխ բառից. դրված է զանազան ձեռքով. ինչ. Սար(հ)րատ
1553 թ. (Զեռ. Վենետ. Ա. 578), Սարհատ 1633 թ. (Զեռ. Հա-
լէպի, Ա. 86 թ), Սարհատ 1635 թ. (Rapport Belgique 137), Սար-
հատ 1651 թ. (Դուշակեան, Հնդկահայք 87), Սարհատ 1660 թ.
(Սիսական 446 ա), տպ. յիշատ. 1686 թվից, Սէկրատ տպ. յիշատ.
1729 թվից, Սարիխատ անթվ. յիշատ. (Զեռ. Վասպ. 342). հնա-
գույն հիշատակությունն է Սարհատ որդի խոջա Բաղդասարի՝
ժե դար (Տաշեան, Ցուց. 724 ա):

Սարդարմիջ տես Սորդարմիջ:

Սարու տես Սարի:

ՍԱՐՈՒԱՆԻ, ար. ծագումն ինձ անհայտ. Մի անդամ միայն
ունինք:

— Սարուանդ պատրիկ Խլաթի, Արճէշի, Խվայի և Սալա-
մանի. դաշնակից էր հունաց. կովել է Արարների դեմ 638 թ.
այլուր կոչված է Յուստինոս. իր աղջիկն է Տարուն Կույս, որ
տես. — Տոմաշէկ, Սասուն 20—23՝ ըստ Վակիգի արար պատմչի.
իսկ Խալաթեան, Արար. մատ. 5 կոչում է Նուստինոս:

ՍԱՐՈՒԵՆ, ար. (Justi 200 ա կցում է պր. Տարուն անվան
հետ): Այս անունով կա միայն:

— Սարուեն իշխան Կորգուաց. դաշնանց Մեծն Տիգրա-

նին և անցավ Հռովմայիցոց կողմը. ուստի Տիգրանը գլխատեց
նրան Ն. Ք. 66 թ.—Զամշ. Ա. 232:

* ՍԱՐՈՒԻՆԱՆ, ար. <թրք. مادوچان Saruxan անունից, որ
բուն նշանակում է «Դեղին խան» (տես վերը Դեղին, Սարի,
նվակ Սարում, Սարուպապ): Justi 290 ա համարում է պր. մա-
ստ թուունի անունից, բայց ճիշտ չէ: Այս անունով հայտնի
են Սարուխան թուրք սուլթան Մանիսայի՝ ժի՞ դար (Իրնի-Բա-
տուտա II, էջ 313) և Երևանի պարսիկ կուսականներից մեկը
1669 թ. Մեր մեջ հիշատակված է 1604 թ. (Առաք. պտմ. 9),
1628 թ. (Տաշեան Ցուց. 708, Առաք. պտմ. 182), 1633 թ. (Զեռ.
Հալէպի, Ա. 86), 1655 թ. (Բակուրան, Կիպրոս կղ. 59), Սարու-
հան անթվ. (Զեռ. Վասպ. 450): Գործածական է նուև այժմ և
սրանից է Սարուխաննեան ազգանունը:

— Սարուխան Խիզանցի (կամ Հիզնացի), նոր վկա. կոչկա-
կար էր. միանգամայն երգիչ և քնարահար. գաղթեց Բաղէջ և
այրիանալով՝ ամուսնացավ միկնոջ հետ, որ իրեն քրիստոնյա-
և այրի էր հայտարարել Երեք տարի հետո երեան է գալիս, որ
նա քրողունի է՝ քրիստոնյա դարձած: Սարուխանից պահանջվում
է մահմեղական դառնալ. մերժելով ամեն պարզե և մեծություն,
արհամարհելով բանան ու տանջանքը, հավատքը չի ուրանում
և կրակը գցվելով նահատակվում է 1631 թ:—Նոր վկ. 437—441>
Ազգապ. 2495:

* ՍԱՐՈՒԻՄ, ար. <թրք. مادوچان Sarum գդեղինու բառից, որ
և Սարիմ. իրեւ անձնանուն գործածվում է նուև թուրքերի մոտ.
ինչ. Սարում իշխան թուրքման 1258 թ (Սիսուան 36 ա), Սա-
րիմ փաշա թուրք (Ազգապ. 3920): Անվան համար հմմտ. Սարի,
Սարուխան, Սարուպապ, իսկ ձեկի համար՝ Շահում, Գուլում,
Ազամ են: Այս անունով ունինք մեր մեջ Սարում 1613 թ. (Զեռ.
Վասպ. 816, իսկ 845 սիալ գրված Սարամ), Սարում անթվ.
(Ազգակ 201), հոգով՝ Սարում անթվ. (բայց 1552 թվից ուշ.
Զեռ. Վասպ. 656), Սարիմ ուն 1853 թ. (Ազգապ. 3886): Երկու
ձեր էլ սւնինք Սարիմեան և Սարումեան ազգանունները. վեր-
ջինի համար հմմտ. Մկրտիչ Սարումեան, հիշված 1775 թ. (Տաշ-
եան Ցուց. 724):

* ՍԱՐՈՒՄԵԼԻՔ, ար. <թրք. مادوچان Saru գդեղինու+արար.,
մա տելիկ իշխան, թագավոր բաներից. հիշված եմ գանում մի
անգամ ժի՞ գարից (Զեռ. Վասպ. 1012):

* ՍԱՐՈՒԳԱԳ, ար. <թրք. مادوچان Saru գդեղինու+ից. պապ

բառերից. հիշված եմ գտնում մի անգամ 1674 թ. (Զեռ. Դադեան, թ. 46 թ.). սրա երկրորդ ձեռն է Սարօրաքաղաք (կազմված թրք. և ծանական հոմանիշից), որ թեև առանձին չէ գործածված, բայց նրանից ունինք Սարօրաքաղաքանց ազդանունը (Ղարաբաղ):

* ՍԱՐՓԱՇԱ, ար. <պրո. յա սար գլուխա+թրք. և թաշառերից, իրը սփաշաների գլխավորը. մի անգամ գտնում եմ գործածված 1579 թ. (Զեռ. Վասպ. 689). հիշատակարաններում չէ հիշված թվական, իսկ որտեղից է հանում Լալայեանը և դնում այս թիվը):

* ՍԱԻԱԼԱՆ, ար. <պրո. Savalan անունից. օր. Սավալան ամիրա Բաղէջի՝ եղբայր Շամշադնի (ժե զար), ըստ Զամշ. թ. 462, հիշված է մեր մեջ նույնպես ժե զարում. սրանից է Սաւալանեան ազգանունը:

— 1. Սաւալան, որդի Շապանի, եղբայր Եղիա Երէցի, որ օրինակեց Աւետարանը՝ Քաջթաղուց Խողանավար դյուցում, 1490 թ.—Զեռ. Սեան. 5 թ.

— 2. Ավելի ուշ ունինք Սաւալան հիշված մի տապանագրում 1818 թ. (Քօսեան, Հայք ի Զմիւռն. թ. 106):

— 3. Խակ Սավալան հիշված Դարրանդի Պօղոս-Բաւլաղ կոչված գերեզմանատան մի զամբանի վրա լ. 581 թվից (ըստ Բարիուտ. Աղվ. Երկիր, էջ 109) բացարձակ թյուրիմացություն է. պետք է կտրած լինի Ո թվանշանը:

* ՍԱԻԱԼԻ, ար. <արար. յա Տաֆար անունից, որի ավելի նորածե տառադարձությունն է Սամքար: Սրա ապացույցն է Սաֆարշահ անունը, որ գրված է նաև Սաւարշայ (Ավելին տես Սաֆար, Սաֆարշահ):

— 1. Սաւար, պապն է Տիրացու կրոնավորի, որ էր միաբան Վարագայ վանքի 1390 թ.—Թորոս աղբ. թ. 429:

— 2. Սաւար, որդի խոջա Յովհաննէսի, որ ժառանգեց Յարօնի իշխան իր հորեղբորորդի խոջա Յովսէփի Մուշում գրել տված Աւետարանը 1488 թ.—Զեռ. Սեբ. =ՀԱ 1925, 263:

— 3. Սաւար, որդի Մանուկը քահանայի, որ Գեղարքունիքաց Կած գյուղում, Յովհաննէս Արծկեցուն գրել տվեց մի ձաւը (ժե զար).—Զեռ. Սեան. 18:—Նույնը Մմբատեանը՝ Երնջակ 217 կարգում է Ասւատ և դնում է ըստ հիշատակարանի՝ 1465 թ:

— Ավելի ուշ կա Սաւար 1555 թ. (Զեռ. Սեբ. =ՀԱ 1926, 335): ՍԱԻԱԼԹԱ, իգ. ծագումն անորոշ. մի անգամ հիշատակված եմ գտնում:

— Սաւարթա, կին Խաչատուր քահանայի (թ. 82), որ Մարգարէ արեղային գրել տվեց մի Աւետարան, Բուլիտանից երկրում (Մարտոստան), 1428 թ.—Խոտարք 90:

* ՍԱԻԴՈՒԼԻ, ար. <թրք. յաշ- սեվզուն «սիրելի» բառից. որ թէ ար. է և թե իգ: Մի անգամ գտնում եմ մեր մեջ իրը ար. գործածված այս ձևով՝ 1579 թ. (Զեռ. Վենետ. Ա. 390): Նույնը գործածական է նաև այժմ, բայց իրը իգ օր. Սովոր. Հյուտ. 1945, սեպտ. 12, էջ 2, սյունակ ա:

* ՍԱԻԶԲԵԿ, ար. <պրո. օշու- սավզ, իր չամիչի ընտեր մի տեսակն է. հմմտ. վարը՝ Սաւզի և Սաւզիկ. Մի անգամ գտնում եմ հիշատակված Զեռ. Վենետ. Ա. 414. թվականը անհայտ է, բայց 1427-ից ուշ:

* ՍԱԻԶԻ, ար. <պրո. օշու- սավզ սավզ չչամիչչ բառից. մի անգամ գտնում եմ հիշատակված Զեռ. Թաւր. 120 թ. թվականը անհայտ, բայց 1614-ից ուշ: Հմմտ. Սաւզըկ:

* ՍԱԻԶԻԿ, իգ. <պրո. օշու- սավզ սավզ չչամիչչ բառից. հմմտ. վերը Սաւզըկ, Սաւզի և Քիշմիզ, Ունինք նաև Զամշեան նշանավոր ազգանունը և Պոլսում լսել եմ մեր թաղում (Սամաթիա) «Զամիշին տղան». բայց այդ Զամիշը կարծեմ մականուն էր և այդպես էր կոչվում փոքր աշքեր (չամիչ աշքեր) ունենալու պատճառով:—Վերի անունը գտնում եմ մի անգամ հիշատակված Սավզիկ ձևով 1635 թ. (Rapport Belgique 135) և մի անգամ էլ Սաւսիկ ձևով, իգ. 1581 թ. (Թորոս աղբ. թ. 430):

* ՍԱԻՂԱԹՄԻԾ. ծագումը տես Սուրբարմիշ: Հիշված է մի անգամ:

— Սաւզպարմիշ (կամ Սարզպարմիշ), հայր Նուրիճանի, որ Ազուլիսում, Գրիգոր արեղային գրել տվեց մի Յայսմաւուրք 1481 թ.—Սմբատեանց՝ Երնջակ 299:

* ՍԱԻԾԻԱՅ, իգ. <արար. յա սայիս ըրնավորություն, մաշնավանդ ազնիվ բնավորություն, փառք. մի անգամ գտնում եմ հիշված:

— Աւանիայ, կին Էլպաշի Էմինի, որ Կեսարիայում գրել տվեց մի ձաւոց՝ 1481 թ.—Ալպօյաճեան, Պատմ. հայ Կես. թ. էջ 1848:

* ՍԱԻՌԻՐ. համարում եմ վրիպակ, որ պետք է ուղղել Սաւար (այն է Սաֆար) ար. 1593 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 87:

* ՍԱԻՌԱԱ, ար. համարում եմ վրիպակ. աւագին առաք ուղղելով կարգում եմ Խաւալզ, որ է խորաց <պրո. օշու- չօգօս

ԹՐՅ. ԽՈՐԾ «աքլոր» և հիշատակված է վերը՝ Խաւոազ ձեզ (տես անդ):

— Սաւուազ մահաբեսի, կինն է Ղիմաթ. զնեց Խաչատուր գրչի գրած Դանձարանը (Սեբաստիա 1499) և ընծրյեց վանքին—Զեռ. Սեր.=ՀԱ 1927, 317:

* **ՍԱՀՏԸՆԻՃԱՆ,** ար. <թրյ. յա սու յա սեվդի յա սիրեց, հողիսա ձերց. (գրված, արևմտյան տառապարձությամբ). մի անդամ զըտնում եմ հիշատակված անթվական (բայց 1476 թվից ուշ գրված) մի հիշատակության մեջ (Զեռ. Սեր.=ՀԱ 1926, 339):

* **ՍԱՓԱԾԻՇԻԱՆ,** ար. նախնական երրայական անուն, որ հատուկ էր Բագրատունիներին՝ ըստ Խոր. Բ. կդ. Անշուշա Խորենացին նկատի ունի այստեղ Դաւթի որդիներից մին, որ Բ. թագ. Գ. 4 կոչված է հյ. Սափատիա <հուն. Տագչեա <երր. ԴՐՅԹՑ. Տեղաթեա:

— Սափատիա, որդի Ենանսս Բագրատունւոյ.—Խոր. Բ. իդ. գրված Սոբատիայ՝ Ուխտ. Ա. լ:

* **ՍԱՓԻՇԱՆ,** իդ. <հրէական անուն է, որ հայտնի է Ս. Դրբից.—Այսանիա և իր Կինը Սափիրա անսաստեցին առաքյալների հրամանին և մահով պատժվեցին (Գծ. ե): Սպասելի չէր, որ այսպիսի մեղավոր կնոջ անունը գործածական դառնար. բայց արդարանում է հնիրի ինքնանգանտացման ոգով. հմմա. Անպէտ, Գէշ, Ապիրատ, Ցիմար անձնանունները. Մի անդամ զիրծածված եմ դանում:

— Սափիրա, կին Շիրինի և մայր դրիչ Յովհաննէս սարկավագի, որ Երզնկայում օրինակեց «Առ որս գիրը, 1266 թ.—Շողակաթ 201:

* **ՍԱՓԻՒՄԻ,** իդ. <հուն. σάπφειρος (կամ լտ. sapphirus) բառից, որ մի պատվական քարի անունն է. հյ. կոչվում է շափիւլայ, որի իւ ձայնավորը ազգել է Սափիր ձեր վրա. Մի անդամ դանում եմ հիշատակված 1657 թ. (Զեռ. Վասպ. 833):—Երկանում լուկ եմ նաև Նափիւլայ անունը (Զմիւնացի մի կին էր). բայց այդ անունը ինքնանար էր:

* **ՍԱՔԻՆ** (սեռ. Սաքինին), ար. <արար. շա սակին հանգարա, հանգիստ, հեկ և խոնարհ բառից. Մի անդամ հիշատակված եմ դանում անթվական մի հիշատակարանում (Զեռ. Նոր. Ռայադ. 31 թ.):

* **ՍԱՅԱԼԱ,** ար. <արար. ֆէյ Sayf-ul-lah անունից, որ առ նշանակում է սուր Աստութոյ (Ֆէյ sayf սուրը բառից).

մի անդամ հիշատակված եմ դանում անթվական մի հիշատակարանում, որ գրված է 1609 թվից քիչ ուշ (Զեռ. Հալեպի, Ա. 341):

[**ՍԱՅԱԼԱԾ,** ար. ըստ իս վրիպակ է փոխանակ Սափար. մի անդամ դանում եմ հիշատակված 1695 թ. (Զամբո 203):]

* **ՍԱՅԱԼՐ,** ար. <արար. ճէ Safar անձնանունից, որ բուն նշանակում է «ճամբրորդություն» (Կամուս, Ա. 895, ուր տես նաև այս անունով անձեր), կամ արար. ճէ չայար ամսանունից, ինչպես ունինք Սուլեարիկն և Խաչար անձնանունեղը, որոնք նույնապես ամսանունն են. Գրված է Սափար, Սէփէր, (չինը Սաւար՝ տես առանձին) ճերով, որոնցից էլ Սափարեան, թէփէրեան, Սէփէրոյի ազգանունները—Վրիպակ գրչությամբ գրված է Սափար (տես առանձին), Սափար (Թուրոս ազր. Ա. 184, որի ուղիղ ընթերցվածը ունի Նաթանեան, Տէղեկ. Սերաստ. 85), Սաւար (տես առանձին). իսկ ամենից զգարձալիին ունի Զեռ. Վասպ. 360 Սափար Գիտաղար!—Արևմտանայոց ձեռագրով ե և ի տառերը շատ նման են. ուստի Լալայեանը զիտատար «խեզ», թշվառ շատ սովորական ածականը կարդացել է զիտատար և հայերեն չիմանայու պատճառով դարձել է զիտատառով անձնանունն է:

— 1. Սափա (այսպէս համառուտագրած), որ մի քանի ուրիշ անձերի հետ հիշատակվում է Ներքին Ազուլիսի մի խաչքարի գրա 1478 թ.—Ազգագր. հանդ. ԺԱ, 313 (այս անդամ ամենահին հիշատակությունն է):

— Ավելի ուշ հիշատակված են Սափար՝ ժե դար (Տաշեան 8ամ. 724), Սէփէր 1601 թ. (Զեռ. Վենետ. Բ. 997), Սափար 1602 թ. (Նաթանեան՝ Տէղեկ. Սերաստ. 83, նույնը նաև Թորոս ազր. Ա. 184, բայց սխալ գրված Սափար), Սէփէր 1610 թ. (Սիսական 419, 443), Սափար 1611 թ. (Զամբ. Գ. 570), Սէփէր 1646 թ. (Սիսական 451), Սափար 1655 թ. (անդ 507), 1682 թ. (Զեռ. Վասպ. 580), 1691 թ. (Նոր գկ. 528), Սէփէր 1709 թ. (Զեռ. Սեր.=ՀԱ 1928, 403):

— 2. Սափար որդի Պելի, այրմամբ նահատակվեց ԶՀԱ=1522 թ.—Սամ. անեց. շար. 176=Առաք. պտմ. 486, Դինդ. 6.

— 3. Սէփէր Սերաստացի. արհեստով ալանանի էր (գունավոր կտավ շինող կամ ծալսող). հույների զրպարտությամբ ընկել է Թուրքերի ձեռքը, դատի է կանչվել և հավատքը չուրանալով նահատակվել է Պոլսում, 1634 թ.—ծանրիկեան՝ Հնութ. Ակնայ 98, Ազգագ. 2431:

* ՍԱՅԱՐԻ (կամ Սաֆարիէ), իգ. <նախորդի իրը իդականնէ. առաջին ձևը հիշված է 1652 թ. (Զեռ. Հալէպի, Ա. 85 թ). երկրորդը 1654 թ. (անդ 127 թ):

* ՍԱՅԱՐ-ԱԼԻ. հայ մանուկ էր, որին պարսիկները գերելով մահմեդական էին դարձել. ապա եղավ Աղա-Մահմադ-խանի սիրելի սինեկապետը: Երբ խանը արշավեց Շուշի, իր հետ էր նաև այս սենեկապետը: Նա տեսնելով հայ եկեղեցականների թափորը և Աստուածածնի պատկերը, իր մեջ նորոգված զգաց հայրենի հավատը: Շահը Շուշին գրավելուց հետո, սպառնացի էր որ բոլոր հայերին պիտի կոտորի. մանկահասակ սինեկապետը շահի ստքն ընկնելով ազաշեց որ ների նրանց. շահը կատաղեց և տասց. «Ղարաբաղը (սև այգի) կարմիր արյունով ցողելով՝ ես նրան վարդի գույն պիտի տամ... առավստյան այդ բոլոր գայաճանների գլուխներից հրապարակի վրա մի աշտարակ պիտի կաղմել տամ, իսկ քո գլուխը, Սաֆար-Ալի բէկ, այդ աշտարակի գաղաթի վրա պիտի դնեմ»: Պատանին սարսափեց. նա գիտեր որ շահը իր խոսքին տեր էր. ուստի գիշերը՝ երբ քնած էր շահը, հարձակվեց նրա վրա և դաշունահար սպանեց: Պարսից բանակը ցրվեց և Շուշին ազատվեց: Սաֆար-Ալի բէկին տարին Թաւրիզ. նա խոստովանվեց որ ինքը հայ. քրիստոնյաէ, հայոյեց Մահմեդին. չարաշար տանջանքներով նահատակեցին նրան (1797թ): — Բաֆֆի, Խամսայի մել. Թիֆլիս 1882, էջ 206—214:

* ՍԱՅԱՐՄԵԼԻՔ, իգ. <նույն Սաֆար անունից+արար. մատելէկ «հրեշտակ», որ սակայն դարձել են մելիք: Այսպես ունինք Սաֆարմելիք 1687 թ. (Զեռ. Հալէպի, Ա. 89), Սաֆարմելիք 1742 թ. (անդ' 134 ա):

* ՍԱՅԱՐՄԵԼ, ար. <նախորդ Սաֆար անունից+պրս. մէհի «թագավոր», որ այստեղ իրը մասնիկ է զրպած: Սրա ին ձևն է Սաւարշահ, որից ունինք Սաւարշին (ևս Սաւարշյան) անթվական մի հիշատակարանում (Բարխուտ. Արցախ 40): Դարձածված է ժե դարից մինչև ժիշտ գար:

— 1. Սաֆարշայ, մերձավոր մշկահիշ քահանայի, որ Բիրշականում օրինակեց «Ժողովածու քերթուածոց», 1469 թ. — Զեռ. Վենեա. թ. 1113—4:

— 2. Սաֆարշայ, ուղի խոյա Թարիմշահի, որ Վանում գրել ազեց մի Աւետարան, 1484 թ.— Զեռ. Վասպ. 496:

— 3. Սափարշայ, խամմի Մատթէոս քահանայի, որ ծով-

եաց անապատում գրել ավեց մի Աւետարան, 1496 թ.— Զեռ. Նոբ-Բայազ. 7 թ:

— Ավելի ուշ հիշատակված են Սաֆարշայ 1707 թ. (Զեռ. Հալէպի, Ա. 221 թ), անթվ. (Զեռ. Թաւր. 71 ա): Սրանից է կազմված Սեփերշան ազգանունը, որ է Սէֆէրշահեան (Տաշեան, Ցուց. 967):

* ՍԱՅԱՐՄՈՂԻ, ար. <վերի Սաֆար անունից+թրք. մաջուլի ոցի շարդի (այս է Սաֆարի որդին): ատզասաց ժիշտ զարթց. իր տաղերից է «Ծ վերայ քաղաքին երկանայ. երկինքն թունտ տառ, գետին գոռաց» (Տաշեան, Ցուց. 868): Այլ է Սեփերովի, աշուղ, զբեց Յազի: Մալաթիացի նահատակի սրտառուչ տաղը 1775 թ. (Նոր վկ. 569):

* ՍԱՅԱՐՄԱԶ, ար. <պրս. շարժար սարաբր «զլուխը բարձր բանած, հպարտ բառից. ինչ. Sarafraz Սամարզանցի բանասակաղծ, Sarafraz Սուլթան՝ զորպար 1545 թ., Serefrəz խան, իշխան Բենգալի՝ ժիշտ գար (Justi 288 ա): Մեր մեջ հիշատակված է 1618 թ. (Manus. brit. mus. 13 ա), 1620-ական թվերին (Կոնք հաւ. յոջ. V), Սարփրազ՝ Առաք. պամ. 47, 227, Խափազ՝ ժիշտ (Սիսական 18 թ, 215 ա), Նախոն 1699 թ. (Սիսական 212 թ, 473 ա): Սրանից Սաֆարզեան, Սափրաստեան ազգանունները:

ՍԴԱՆԱ, իգ. ծագումն ինձ անհայտ: Ունինք միայն՝

— Սղանա կին Կամարսան Սուչավացու, մի տուն են կտակել Մոլոսվիցա վանքին 1448 թ.— Տան, Արեկել. հայք 14:

ՍԾԲ (սեռ. Սերին ձեռվ): հայտնի չէ թե որ անվան համառատությունն է: Մի անգամ հիշատակված է Ամասիոյ Ս. Առաւածածին եկեղեցու մի խաչքարի արձանագրության մեջ, որ հետեւյալն է. «թվ. Զեռ (=1496 թ). Յշկ. է Սերին» (հաղորդեց Ամասիոյից Կարապետ Գաղաքեան, 1912 ապր. 12):

* ՍԵԲԵՐ, ար. արդյոք կրծատ ձևն է Սեբերիտնոս անվան, որ այլուր բնակ գործածված չէ և հայտնի է մեզ և դարի «Սեբերիտնոսի ճառք» թարգմանությամբ: Ունինք մի անգամ՝

— Սեբեր, հայր Կարապետ քահանայի, որ Նախավկայի վանքում գրել ավեց իշնատիսի Մեկնութիւն Ղուկասու 1397 թ. — Մարտենանց՝ Երնջակ 227:

* ՍԵԲԵՐՈՍ, ար. <հուն. Σεβέριος անունից, որ բուն նշանակում է «բարեպաշտ» և կազմված է շն «բարի» և օօթօմն: «Պաշտակ», կրկրապագելք բառերից: Այս անունը տալիս է հյ. Եւսեբիոս (անս-այս անունը, որ գրեթե չէ գործածված մեր մեջ): Կրծատման մասին տես Գինոս. ուղիղ ձևն է Սերիոս (բայ Ակին-

եան, Մատեն. հետագ. Բ, 20—21), Առանց և ածականի թերես գործածական էր հունաց մեջ, իբր շպաշտող (Աստուծոյ)։

— Սերես եպիսկոպոս Բագրատունեաց. մասնակցել է Դուբինի եկեղեցական ժողովին 1645 թ։ Է դարու պատմիչ է. զրել է Յունաց Հերակլ կայսեր (610—641 թ) և իր ժամանակի պատմությունը, որ հասցնում է մինչև 1661 թ։ Հրատարակվեց նախ Պոլսում 1851 թ, ապա Պետերբուրգ 1879 թ. (Պատկանեանի ձեռքով). Վերջին լավագույն հրատարակությունը կատարեց Ստ. Մալխասեանը՝ Երեան 1939 թ. Իր մասին խոսում են Զամշ. Բ. 345, Զարը. Հին դպր. 435—441, Ակինհան՝ Մատեն. հետագ. Բ. 3—102 և վերջապես Երեանի հրատարակության հառաջարանը՝ էջ ե—զգ, ուր Մալխասեանը ամփոփում է բոլոր քննիչների, ուստի մասիրությունները Սերեսով մասին։ Սերեսը ստուգապատում պատմիչ է. նա տալիս է ոչ միայն հայոց, այլ և ժամանակակից Պարսից պատմությունը ընդարձակ, հասկապես Վահրամ Չորինի ապստամության մանրամասնությունները՝ ավելի լավ քան Ֆիրդուսու Շահնամէն է։ Այս տեսակի եղանական պատմական քննադատությունն էլ գոյնեաներ չի խնայում մեր պատմիչին։ Սերեսը նշանափոր է հատկապես նրանով, որ տալիս է մեզ Մարարայ Մծւրնացու պատմությունը, այն է Հայկ նահապետի և Հայկազանց պատմությունը, որ ծանոթ էր մեզ Խորենացուց՝ տարբեր խմբագրությամբ։ Սերես՝ Կանոն. 130. Տաշեան՝ Ցուց. 654. — Սերես՝ Միա. անեց. հ. — ուղ. Եւսերի՝ Միա. այրիկ. 37. — սեռ. Սերեսով՝ Սեր. էջ 1. — բար. ի Սերեսով՝ Ասող. Ա. ա. — ի Սերիսու Կիր. 3. Մամ. անեց. 3. — Սերեսով հետեւորդն է Սիմէսն Ապարանցի իր և Վիլասասնութիւնս տաղաջափյալ աշխատության մեջ (տես Սիմէսն № 193 անվան տակ)։

* Սերեսի առաջական պատմությունը, որ կազմված է ՏԾ «Երեք» և ծօխտ «Փիրկել» բառերից և նշանակում է «ուրին փրկել են երեքը» (այն է հսկած բարի միտքը, հոչտա բարի խսութը և հսկած բարի զորձը)։ Այս անունով ծանոթ են Սերեսիս հրամանատար Պարսից՝ Ազգաւորում, պարտվեց Վարդան Մամիկոնեանի զիմ մզուծ ճակատամարտում (450 թ), Հարծիշի գեսապան Խոսրով Ա-ի Յուստինոս Բ կայսեր մոտ (571 թ), Տեսի արեղա Իզայում, Տիեզտ վերջին կաւզակայ Բահրէյնի (620 թ), Տահուտ եպիսկոպոս Կիրններինի (640 թ). Ճատի 293 թ, Հօրոն, էջ 270, ֆ 51, Հիւրը. 72: — Սերեսիս. անունը հիշատակված

է մեր մեջ մի անդամ անթվական մի արձանագրության մեջ (Այրարատ 289)։

* Սերիկ, իգ. ենթադրում եմ <արար. աշ- սեյդա «տիրուհի» բառից, որի արականն էլ լինում է Սայդի <արար. աշ- սեյդա բառի երկրորդ ձևն է հաշ- սեյդետ, որից անձնական հսդո՞վ աշ- սեյդետ «տիրուհի», իմ ար- քուհին։ Ժազովիդական արարերինում առաջինը զարձել է այժմ աշ- սի Տիդի իմ և երկրորդը՝ Տիդ տիրուհին։ Որկու ձեերն էլ գործածական են այժմ Արարատի մոտ իբր ար և իգ. պատվանուն։ — Justi, էջ 142 թ գրում է Seday կամ Iseday և համարում է իրանական անուն. ուրեմն կարծում է Isa՝ «Յիսուս» և դա տոված բառե- րից! Այժմ մեզ մոտ տարածված է մի որիշ մեկնությունն, որ իբր թե Սեղա ծագում է արար. աշ չաճա ճայն բառից։ — Իմ նոր սասուղաբանությունը առաջարկեցի մեր Ակադեմիայի հիմ- նադիր և պատվավոր նախագահն, ականավոր պատմարան, հնա- գետ և բանասեր Ակադ. Յ. Ա. Օրբելիին (1947 թ. հուլիս), որ ոչ միայն ընդունեց այն, այլ և նոր ապացույցներով հաստա- տեց։ Նախ հերքեց աշ չաճա բառը, որ պիտի ար հ. ծ ծադայ, քանի որ արար. աշ գառնում է հ. ծ և ոչ թե ս. երկրորդ՝ նշեց որ մեր արձանագրությանց մեջ շատ անդամ այս անունը գրված է Սեղայ, ուր և դրած է իյ ձայնի զեմ։ Հին հայերը շղիտեին ոչ իյ և ոչ եյ. և որանց փսխարեն գրում էին ե, որ զոնն իր պաշով, թեկուզ ձեապիս ներկայացնում է իյ ձեը։ Այս ձիշտ նկատողությամբ արգարանում է ոչ միայն Սեղա գրչու- թյունը, այլ և հաստատվում է մեր ստուգաբանությունը։ — Սեղա անունը զործածված է մեր մեջ թ—ժն դար. այնուհետ խափանվեց. նորից կենդանացավ 1912 թվից սկսած և այժմ շատ տարածված անուն է։

— 1. Սեղայ, գուստը Գագիկ Ապումբաւան Արձրունու, կին վասպուրականի Աշոս իշխանի, որ Գրիգոր-Դերենիկ Գ-ի որդին էր։ Սեղայ Սեղայի ինողբանուք պատվեց Արշակ (Ք 14) Վարագ- նանին, որ գերի էր բնիկել Աստրապահանի Ափին սոսիկանի ձեռքը 1896 թ.։ — Արծր. Գ. իւ. իթ. — Սեղայ Արծր. Գ. իւ. Սուտ ճապա. 64. սեռ. Սեղայի Արծր. Գ. իթ.։

— 2. Սեղա, գուստը Գրիգոր (Ք 111) Համզա Պահաւունու, քոյլ Վահրամ սպարապետի († 1045 թ), մանուկ Համզայի, Վա- ստիկ. Տիգրան Պահաւունուտց և Ապարակիպի (Ք 4), հորաքույր

Գրիգոր Մագիստրոսի: Վաղամեռիկ եղավ և իր մայրը՝ Շուշան Գրիգոր Մագիստրոսի: Վաղամեռիկ եղավ և իր մայրը՝ Շուշան (№ 12) տիկնաց տիկին նրա հիշատակին մի կրպակ նվիրեց (Ք 12) անդամական մի հիշատականում Սերբ ու, որ 40 տեկան է նվիրել Թանատի վանքին.—Սիսական 123:

* Սեթեկ. ար. <կրծառված Սելչիսեղի անունից, ինչպես Աստուածառուր> Մատուր, Եղիսաբետ > Սարեթ. Բայց դուց Սեղեկիա անունից: Մի անդամ հիշված ժողովում:

— 3. Սեղա, տիկնանց տիկին, դուստր Վասակ սպարապետի, քույր Գրիգոր Մագիստրոսի և կին Վահրամ իշխանաց իշխանի՝ քույր Պատուի. իր հոր Եղիսաբետ մահից հետո «1020 թ», նրա սրբությունը Արքական անդամական մահից հետո «1020 թ», նրա հիշատակին նվիրներ է արել Բաղնայրի վանքին:—Արձ. Շիրակ 113, Աղա. թղ. յոջ. էջ իր, Աղիշան՝ Շնորհ. 13:

— 4. Սեղա, դուստր Հասանի, քույր Խուրտի և Գարսիմոյի (№ 3). վերջինս Օշական գյուղի ույսին էր և իր, իր Եղրոր և իր քրոջ հիշատակին նվիրներ է արել Արջոյափերին 1207 և Բագնայրին 1210 թ:—Արձ. Շիրակ 117, (121):

— 5. Սեղայ, կին Օտար Կողբացու. միասին մի խոշքար և կանդնացրել և իրենց աղահանքի կեսը նվիրել Բագնայրի Մայր Եղեղեցուն, 1235 թ:—Արձ. Այրարաս 68:

— 6. Սեղա (կամ Սեղա), կին Առիւծի Հողեսրեանց, որ Հոռմուի վանքի առուն է նորողել 1251 թ. և նշխարատունն է շինել 1277 թ:—Արձ. Շիրակ 2:

* Սեթրիկ, ար. <երր. Շադրակ անվան հուն. Տεօքչի առազարձությունից. բուն բարելական անուն է. հմմա. Դան. Ա. 7. «Եւ եղ նոցաներքինապետն (Նարուգողնոսորի) անուանո. Դանիկի»՝ Բագնասար, և Անանիայի՝ Մեղրաք, և Միսայելի՝ Միւաք, և Աղաքեայ՝ Արեդնագով»: Թեև հույց միայն երկու անզամ է ավանդված, բայց այժմ էլ բավական տարածված է և որանից էլ ունինք Սեղրակիան աղդանունը: Շատեր գրում են Սեղրակ՝ աղդվելով հյ. աղի գրգիկան մասնիկից, որ այստեղ դործ չանի. ճիշտ ձեր քով է, ըստ որում հունարենը անի վերջանձայն չ: որ է հյ. ք:

— 1. Սեղրաք քահանա Ապրակունիս գյուղացի, հայր Երնջակի Յովհաննէս (№ 324) Եպիսկոպոսի, որ ապստամբեց Յակով Կլայնցի կաթողիկոսի ղեմ՝ շուրջ 1273 թ:—Օրբ. կղ:

— 2. Սեղրաք, որդի Աստուածառուր քահանայի, որ իրմ անպատում, Խաչատուր զրչին դրել ավեց մի Աւետարան, 1301 թ. — Ձեռ. Վասակ. 141:

Սեթրիկ, ար. ծագում. ինձ անհայտ. մի անդամ հիշված է անթվական մի հիշատականում Սերբ ու, որ 40 տեկան է նվիրել Թանատի վանքին:—Սիսական 123:

* Սեթեկ. ար. <կրծառված Սելչիսեղի անունից, ինչպես Աստուածառուր> Մատուր, Եղիսաբետ > Սարեթ. Բայց դուց Սեղեկիա անունից: Մի անդամ հիշված ժողովում:

— Սերեկ, որդի Գրիգոր քահանայի, որ նրա համար գնեց մի Աւետարան. որդին վաղամեռիկ եղավ և հայրը Աւետարանը նվիրեց Գաղիտոյ Ս. Գևորգ Եղեղեցուն, 1348 թ:—Ձեռ. Ապուլ=Արբ 1911, 564:

* Սեթիմիօն, ար. կարծում եմ որ կազմված է Սեր+երեց, բառերից. մի անդամ գտնում եմ հիշատակված ժաշկարում:

— Սերիբեց հայրապետ Երուսաղէմի, 1526 թ:—Ձեռ. Կեռ. ածած. 70 թ (տարօրինակ է այս անունը, որ ցուցակի անվանացնակում էլ չի հիշված: Այդ թվին Երուսաղէմի պատրիարքն էր Աստուածառուր թ Մէրգինցի):

* Սելամ, ար. եթե սուույզ է այս ձեզ, ծագում է արար. շւ selām «փրկություն», բարեւ. ողջույն» բառից. մի անդամ գտնում եմ հիշատակված ժլ գարում (Ձեռ. Դազեան, թ. 15 ա): Արար. ևս կա Selām ար. անուն (Կամուս, թ. 481):

* Սելամաթ, իդ. <արար. ևս sellāme իդ. անուն (Կամուս, թ. 483), և Selime «թարմ, նուրբ, սիրուն կինչ, նաև իդ. անուն (անդ 481): Մի անդամ ունինք հիշատակված»:

— Սելամայ, կին Դաւթի (№ 90). վերաշինեց Հաղբատի Ս. Աստուածածին (Զգրաչէն) Եղեղեցին 1195 թ:—Արձ. Երզընկեանց՝ Հնախ. տեղագր. 67, Աղգագր. հանդ. է, 415:

* Սելիմ, ար. <արար. ևս Selim անունից, որ բուն նշանակում է առջ, անարած, զերծ ու աղատա: Այս անունով հայտնի են Տաճկաց սուլթաններից Սելիմ Ա ծավուզ (անգութ). 1512—20, Սելիմ Բ Արքշիր 1566—74, Սելիմ Գ 1789—1808 թ. Հնից. ավանդված չէ մեր մեջ այս անունը. բայց այժմ գործածական է Հայէպի հայոց մեջ (տես Սիւրմէեան, Պատմ. Հայէպի ողկ. գերեզմ. 52 ա): Կամուս, թ. 481—2 կա Selim իդ. 15 անձ:

— Սիլմ Սուլթան ձեռվ գործածված է իբրև իդ. 1587 թ. (Bodleian 102).—Տաճկերենում սուլթան բառը անձնանունից տուշ դրված արական է, հետագան՝ իդական է. օր. Սուլթան Սելիմ, բայց Վալիդկ Սուլթան «մայր թագուհի»:

* Սելոհիմ, ար. կա պրս. և Selim՝ Պարսից Ֆերդուսին թա-

գավորի որդին (Շահն. հա. 1; էջ 103). բայց սա շատ էին է. մինչդեռ Սելյամ նոր գործածության ունի մեր մեջ. Ուստի ավելի հարմար է դնել արար. և Selem, Selme և նման արական անձնանուններից, որոնք հիշում է Կամուս, Գ. 481—4:

— 1. Սելյամ մելիք, որից ոերգել է Արագածուսի տոհմը 1685 թ.—Այրարատ 133:

— 2. Սելյամ կամ Սելյում մելիք, հիշխող նահանգաց Շիրակայ. և Շարապիսանու և այլոցն, ի գիւղէն Անտոն կոչեցելոյն, որդի մեծի պարոն Խանքար մելիքին, որ վերըստին նորոգող եղեւ յայսմ նահանգաց գոր յառաջմէ անմարդաբնակ եղեայն էր» 1702 թ.—Քոսեան, Հայք ի Զմիւռն. Բ. 23:

— Սելյում անունը հիշված է նաև 1758 թ. (Զեռ. Դադեան, Բ. 14 ա), 1825 թ. (Քոսեան, Հայք ի Զմիւռն. Բ. 91՝ մի շիրմի տապանագրում); անթվական (բայց 1921-ից ուշ դրված) մի հիշտակարանում (Թորոս ազր. Բ. 346):

Սելք, ար. ծագութիւն ինձ անհայտ. հիշված. է մի անգամ՝ միայն սեռ. Սելին ձեռվ, ժօ դարում (Տաշեան, Ցուց. 102):

* ՍԵԿՈՒՆԴՈՒ, ար. <հուն. Σεκούνδος անունից, որ փոխառյալ է լտ. Secundus անունից: Այս բառը բուն նշանակում է «երկրորդ» և նախապես գործածվում էր անձնանունների վրա իրեն վերագիր, ապա անկախ անուն դարձափ, Հայանի են՝ այս անունով Julius Secundus նշանավոր հոետոր՝ ժամանակակից Տիտոս կայսեր, Սելունդոս լուսկաց պիտագորեան փիլիսոփա (Հիւր. 336), և հատկապես Սելունդոս՝ ընկեր Պոլոս առաքյալի Գծ. Ի. 4:

— Սելյունդոս եպիսկոպոս Մոկաց. ստորագրում է այն թղթին, որ Հայոց Յովհաննէս կաթոլիկոսը իր եպիսկոպոսների հետ միասին գրեց Աղուանից եպիսկոպոսներին՝ զգուշացնելու համար նրանց նեստորական և Քաղկեդոնական քարոզիչներից (Զ. դար).— բց. ի Անկունդոս՝ Գիրք թղ. գթ. Կղկնա. Բ. է:

* ՍԵԼՎԵՍՏՐՈՒ, ար. <լտ. Silvester անունից՝ հունական տառաղարձությամբ. ծագում է silva «անտառ» բառից և նշանակում է բուն «անտառային», գեղջկական վայրի, անմշակ: Այս անունով հայտնի է Սելյբետրոս պապ Հովոմի, որի վարքը անցել է Յայսմաւուրքի մեջ. ունինք նաև ընդարձակ «Պատմութիւն վարուց Սելյբետրոսի»: Հնում մեր մեջ քիչ է եղել զործածված, բայց այժմ՝ կա կրծառ Սելյոս ձեռվ, որից և Սելյոսան աղդանունը: Սելյոս ձեռվ հիշված է Արք. կրեա. 93 և

Արք երե. էջ 13 (1723 թ).—Պոլսում կար նաև Սելյոս իսան անունով մի իջևան կամ պանդոկ:

— 1. Սելյբետրոս, հեղինակ Սևկնութեան Սագմոսաց, որ իբրատին կարգավորելով Վարդան Բարձրերգցին («1271 թ») կազմեց իր անունով ծանոթ մեկնությունը.—սեռ. Սելյբետրոսի Վրդն. սղ. նժը, էջ 420.

— 2. Սելյբետրոս արեղա Սերասահոյ Ս. նշան վանքի. հավատքը չուրանալով նահատակվեց Ստեփաննոս եպիսկոպոսի և Թուրոց արեղայի հետ՝ Սերասահոյ սույթան Բուրհանէդղինի ձեռքով, «1387 թ»:—Յայսմ. յունիս 23, նոր վկ. 137—150:

— 3. Սելյբետրոս, «արեամբ նահատակեալ քահանայ», հայր Տէր Սահակի, որ երգնկայի Կայիփոսի վանքում ուսուցիչ էր 1425 թ.—Խոտարք 79:

— 4. Սելյբետրոս վարդապետ Հայոց. գրել է ձառ զատկի: Հմմտ. «Հասա կարգի աւուրցն արարչութեանն վեցօրեացն, այսօր զատիկ է և տօն յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. սըրբայն Սելյբետրոսի Հայոց վարդապետի ասացեալ» (Յայոմաւուրք, որ տես Rapport Belgiique 50).— ճառի առաջին տողերը դրված չլինելով՝ անկարելի է սպազել թե ով է այս Սելյբետրոսը:

* ՍԵԼԻՒՇԱՐ, իդ. <պրս. ՀՅՈՒՄ ՏԻՄ-Ա-ՆՁՐ «արծաթ և ոսկի». հնից ավանդված չէ. զործածվում է այժմ, ինչպես հիշված է Սովետ. Հյատ. 1945 թ. մրտ. 7, ա էջ, վիրջին սյունակ և 1945 թ. մրտ. 20, էջ գ, սյունակ 5-րդ (երկու հոգի):

ՍԵԼԻԿ, իդ. մի անգամ հիշված եմ գանում 1591 թ. (Զեռ. Հալէպի, Բ. 7 թ). արդյոք նախորդ անվան կրծառ ձե՞ն է:

որդոյ Գրիգոր գրչի, որ Ակների վանքում օրինակեց Ոսկերե-
րանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, 1325 թ.—Սիսուան 535 ա:

— 93. Սիմէն (գրված է Սիմէնու), իր ընկերների հետ
միասին գուրս ևկավ կամոլիկացած Կոստանդիին Կեսարացի կա-
րուղիկոսի («1307—1323 թ») զեմ և աշխորդեց Կիպրոս կղզին։—
Հայոպ. 552, հմմա. նաև № 108.

— 94. Սիմէն երեց՝ քեռի Գրիգոր գրչի, որ Ակների վան-
քում օրինակեց Ոսկերերանի. Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, 1325
թ.—Սիսուան 155 ա, Զեռ. Վենետ. թ. 572.

— 95. Սիմէն քահանա, որդի Միհիթար քահանայի, որ
Ներսէս գրչին գրել ավեց մի Աւետարան, 1325 թ.—Թորոս ազր.
թ. 295.

— 96. Սիմէն վարդապետ Խաչենցի, աշակերտ Եսայի
Նշեցու, գնաց սովորելու Եսայի Նշեցու մոտ, դարձավ ունիթո-
ռական վարդապետ, միարան Քոնիի վանքի. «1330 թ»։—Զեռ.
Ներս. 32 թ. Սիսական 384 ա. Ազգապ. 1845.

— 97. Սիմէն վարդապետ Բասենցի, աշակերտ Եսայի Նշե-
ցու, գնաց աշակերտելու Բարթուղիմէոս լատին եպիսկոպոսին և
դարձավ ունիթոռական վարդապետ, միարան Քոնիի վանքի
«1330 թ»։—Զեռ. Ներս. 32 թ. Սիսական 384 ա. Ազգապ. 1845
(վերջինս նույն է գնում Սիմէն պէկի հետ, որ տես № 108):

— 98. Սիմէն քահանա, հայր Դէսոկորոս գրչի, որ Աբե-
շում օրինակեց մի Աւետարան, 1331 թ.—Զեռ. Վասպ. 178.

— 99. Սիմէն (գրված է Պապ. Սիմէն), հիշված է Ծղուկ
գալառի Բնունիքում Օրբէլ մանուկի մահարձանի վրա

1391 թ. ըստ Ազգագր. հանդ. գ. 178, որ սակայն չունի Սիմ-
էն 210.

— 100. Սիմէն քահանա, կին է Դերա. ծնողներն են
Վարդան քահանայի, որ օրինակեց Աւետարանը Ազգինար զյու-
ղում, 1331 թ.—Զեռ. Վասպ. 174.

— 101. Սիմէն կրոնավոր, եղբայր Միհիթար կրոնավորի,
երկուսն էլ միարան Ազգամարմայ վանքի. գրել ավել մի Աւե-
տարան Կարազես գրիչ Աղքամարցծն, 1332 թ.—Զեռ. Վասպ.
182, 184.

— 102—3. Սիմէն, երկու նորընծայ քահանաներ, որոնք
ապրում էին Երևանազէմի Ս. Սիմէնում, 1335 թ.—Զեռ. Վենետ.
թ. 348.

— 104. Սիմէն գրիչ, Կիլիկիոյ Գանձի (սեռ. Գանձէ)
գյուղում օրինակեց Ճաշոց՝ Խոզկերտ զյուղի եկեղեցու համար
1335 թ.—Սիսուան 118—9 և 532 ա:

— 105. Սիմէն քահանա, գրիչ. օրինակել է երկու Մանրուսումնեան
երգարան, Կիլիկիոյ Գալու վանքում, մին 1328 և մյուսը 1336
թ.—Սիսուան 201 ա (նմանահանությամբ):

— 106. Սիմէն (գրված է Սիմէն), որդի Շահնշահի, որ
Գողթան գալառի Կոպատոսի անապատում, Բումայ Արճիշեցուն
գրել ավեց Աւետարանը՝ 1336 թ.—Զեռ. Ազուլ. =Արք. 1911,
էջ 387.

— 107. Սիմէն, մի կալված է Խվիրել Թանատի վանքին,
իր և Միհիթարի հիշատակին, որ երկի թէ հայրը կամ եղբայրն
է, 1339 թ.—Արձ. Սիսական 121.

— 108. Սիմէն պէկ, եպիսկոպոս և առաջնորդ Կարճոյ
(ըստ Քուեան, Բարձր Հայք, Ա. 103 նոտել է 1330—1341 թ., որի
վերջին եղբը ճիշտ չէ). ունիթոռական էր և կաթոլիկություն
քարոզելու համար գնաց Կիլիկիա։ Ժողովուրդի մեջ խռովություն
դցելու պատճառով բռնվեց և Ներսէս Պալիենցի հետ միասին
Կիլիկիայից դուրս վտարվեց։ Անցավ Կիպրոս (1341 թ.), ապա
նորից վերադարձավ Կիլիկիա՝ համոզնելու համար Միհիթար
(«1341—1355 թ») կաթոռիկոսուն։ բայց հուսահատվելով՝ Ներ-
սէսի հետ միասին գնացին Աւինիոն, Բենեզիկտոս ժի պապի
(1334—1342 թ.) մոտ, որին ներկայացրին հայոց զեմ մի ամ-
րաստանագիր 117 ամբաստանությունից բաղկացած։—Զամչ. գ.
330. Ազգապ. 1852, 1863, 1872—1904 (ուր մեջ է բերում մի առ

մի բոլոր ամբաստանությունները և հերքում. միացնում է վերը՝ № 93 հիշված Սիմէոնի հետ:

— 109. Սիմէոն երեց, գրիչ. Խրիմի Սուրբաթ քաղաքում, Աստուածատուր կրոնավորի խնդրանոր գրեց մի Աւետարան, 1343 թ.—Զեռ. Վենետ. Ա. 755.

— 110. Սիմէոն (գրված է Սիմէոնի), որդի Թագուար մանկաւագի և եղբայր Գողոս սարկավագի, որ Կապոսում ստացավ՝ մի Շաբակնոց 1343 թ.—Տաշեան, Ցուց. 489.

— 111. Սիմէոն եպիսկոպոս առաջնորդ Սերաստիոյ. մասնակցեց Սսի Եկեղեցական ժողովին «1343 թ» (Ազգապ. 1869). հիշված է գեռ 1350 թ. (Տաշեան, Ցուց. 107):

— 112. Սիմէոն քահանա, Եկեղեց գավառում օրինակել ոկտե Աւետարանը Հայրապետ քահանայի համար. բայց կեսը հազիվ ավարտած՝ կոտորածի պատճառով փախավ Երկրից. Հայրապետի եղբայրը՝ Ազարիա արեղան լրացրեց մասցալը 1351 թ?—Թորոս ազր. Բ. 350—7 (տես և Հայրապետ № 50):

— 113. Սիմէոն, հոռեղբայր Քրիստոսուր կրոնավորի, որ Սուրբաթում (Խրիմ) գրել տվեց Աստուածաշունչը 1352 թ.—Զեռ. Վասպ. 7.

— 114. Սիմէոն, իր եղբայր Յովհաննէս քահանայի հետ ստացել է մի Աւետարան, 1354 թ.—Շողակաթ 209.

— 115. Սիմէոն կրոնավոր, որդի Սարգսի. մայրն է Բնքուշ եղբայրն է Մարտիրոս. Երուսաղէմում, Թրիգոր կրոնավորի հետ միասին Տէրաւագ երեցին գրել տվին մի Աւետարան և Ճաշոց. 1358 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 118:

— 116. Սիմէոն, հայր Յակոբ սարկավագ գրչի, որ օրինակեց Կիւրզի Շնչառակարանում, որ գրել է Վարագայ վանքում, 1359 թ.—Թորոս ազր. Բ. 429.

— 117. Սիմէոն քահանա, գրիչ. Երզնկայում օրինակեց մի Աւետարան 1360 թ.—Մարտեանց՝ Երնջակ 310:

— 118. Սիմէոն, իւաշընդուս կրոնավոր, հոգեսր եղբայր Ստեփաննոսի, որ ստացավ մի ժողովածու, 1360 թ.—Քոսեան, Հայքի ի Զմիւռնիա, Բ. 83:

— 119. Սիմէոն վարդապետ, ստացել Տօնապատճառի, որ գրեց Յոհաննէս գրիչը, 1368 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1152, 1154 և 1162:

— 120. Սիմէոն սպասաւոր քանի, թերեւ օգնական Յո-

հաննէս գրչի, որ օրինակեց Տօնապատճառը 1368 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1162:

— 121. Սիմէոն, որդի Աստուածատուր երեցի, որ ծրգնկայի Բլակ ազանում Տարօնի Յովհաննէս Ալինարի եպիսկոպոսից գնեց մի Աւետարան, 1370 թ.—Զեռ. Վենետ. Ա. 780:

— 122. Սիմէոն վարժապետ. գրիչ. օրինակեց Դաւթի Ռևուժունք ճառից Աստուածատանիք Մեծոսիայ վանքում 1363—70 թվերին.—Տաշեան, Ցուց. 757:

— 123. Սիմէոն եպիսկոպոս Այասի 1375 թ. տես Ճիմք Այասի:

— 124. Սիմէոն գպիք, որդի Շահինշահի. Յովհաննէս գրչին գրել ավել մի Աւետարան (ակն անհայտ) 1378 թ.—Տաշեան, Ցուց. 692:

— 125. Սիմէոն, որդի Ամենաւագի և եղբայր Աստ միայնակեցի, որի հետ միասին ներսէս գրչին գրել ավել մի Ճապանտիք՝ Գամազիէլի վանքում, 1397 թ.—Զեռ. Վենետ. Բ. 1283—6:

— 126. Սիմէոն բարունապետ, Երիցու Երանեալ, հիշված է այս Ճապանտիք հիշատակարանում, որ գրել է Վարագայ վանքում, 1399 թ.—Թորոս ազր. Բ. 429:

— 127. Սիմէոն Սիւնեցի, աշակերտ Գր. Տաթեացու. Թովմա Մեծոփեցու գաւանկերներից է.—Մեծոփ. 50. Ազգապ. 1997.—Տես № 148:

— 128. Սիմէոն երեց. գրիչ. գրել է մի նկարագարդ Աւետարան՝ իբր ԺԴ գար. —Տաշեան, Ցուց. 630:

— 129. Սիմէոն միայնակեց. հունարենից թարգմանեց Հարոնց վարքը. թվականն անհայտ.—տես Վրբ. հց. ապ. Վենետ. 1355, յոջ. Զարբ. Թրգմ. 551:

— 130. Սիմէոն (գրված է Սիմէոն), կաթուղիկոս Ազմամարի, հաջորդ Թաղէս Ա-ի և նախորդ Դաւիթ Դ-ի (ԺԴ գար).—Հաւաք. 60 (Կեղծիք):

— 131. Սիմէոն (գրված է Սիմէոն), բժիշկ, ունի բժիշկական երկեր. հիշում է Ամիրտ. անդ. 2¹ Միթթար Հերացուց, Աւարոն, Ստեփանս, Ճուլին, Սարգսի, Յակոբ, Դեղին բժիշկներից հետո և Սիմէոն ու Վահրամ բժիշկներից առաջ.—Հայտաբաց ԺԴ գար:

— 132. Սիմէոն, որդի Դանիէլի և եղբայր Կարապետ

(№ 111) քահանայի, որ գնեց մի օրն Աւետարան և նորից կադ մել տվեց 1401 թ.—Զեռ. Վառպ. 126.

— 133. Սիմէնն սպասավոր բանի, Տաթեի վանքում, Երեմիա վարդապետի հրամանով, Գալուստ վարդապետի ընկերակցությամբ գրեց Տաթեացու Հարցմանց գիրքը, երբ զեռ կենդանի էր հեղինակը, 1403 թ.—Զեռ. Դադեան, Ա. 66 թ.

— 134. Սիմէնն կրոնավոր, գրիչ. Դրիմում, Լուսաւորչի առապատճեմ օրինակել է Հարցմանց գիրքը, 1410 թ.—Զեռ. Կարին. 51, Նոտարք 36.

— 135. Սիմէնն բարոնապետ Սիւնեցի, բնակությամբ Տաթեացի, Գրիգոր գրչին օրինակել տվեց Ներսէս Լամբրոնացու Մէկնութիւն ժիշտ մարդարէց, Հերմոնի վանքում, 1414 թ.—Սիմէննական 125 թ.

— 136. Սիմէնն, հայր Գրիգոր կրօնավորի, որ ստացավ Տաթեացու Քարոզդիքը 1419 թ.—Տաշեան, Ցուց. 978.

— 137. Սիմէնն (գրված է Սիմոն), միարան Բերկրիի Տէր Ցուսկան որդի վանքի, հիշված է 1420 թ.—Նոտարք 61.

— 138. Սիմէնն արեղա, գրիչ. Վասպուրականի Մարմետ Դյուլում գրեց մի Աւետարան 1421 թ.—Նոտարք 66.

— 139. Սիմէնն վարդապետ Ռշտունի. առաջնորդ Ռշտունիաց գավառի Պուալիկ վանքի. ուսուցիչն է այն Թովմա վարդապետի, որ հայտաբեր համար նահատակվել է (1421 թ).—Մեծութ. 44, Ազգապ. 2056.

— 140. Սիմէնն գպիր, մի օրն Աւետարան որ գրված էր 1275 թ., նորից է կազմել 1421 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 77—78.

— 141. Սիմէնն կրօնավոր, միարան Կոտի Ս. Խաչ վանքի 1422 թ.—Նոտարք 68.

— 142. Սիմէնն արեղա, եղբայր Յովհաննէսի, մի Աւետարան վաճառեց Կամենիցացի Խութլու պէկին, 1422 թ.—Կամենից հից 161: REA 7, 107.

— 143. Սիմէնն վարդապետ. գրիչ. օրինակել է Մեկնութիւն թղթոցն Կաթողիկեայց (Զեռ. էջմ. № 1394—1408), 1423 թ.—Կոտի հաւիր հաւ. ցոչ. 43:

— 144. Սիմէնն սարկավագ, հոգեոր որդի Միսիթար արքեպիսկոպոսի և առաջնորդի Ամասիոյ, որ նրա համար զրել տվեց Ցովհաննէս քահանային մի Գանձարան, 1424 թ.—Զեռ. Լվով (ՀԱ 1937, 122):

— 145. Սիմէնն, ստացող. օրինակել տվեց Աւետարանը Խանքաց գյուղում, Յովհաննէս գրչին, 1425 թ.—Զեռ. Սկան. 9 ա:

— 146. Սիմէնն (գրված է Սիմէնն) վարդապետ, մի Յայնմաւուրք է Նվիրել Կարպի գյուղի Յօվհաննավանքին 1427 թ.—Զքր. պատմ. Գ. 21. Շահիաթ. թ. 104> Նոտարք 86, Արձ. Այրարատ 172 թ.

— 147. Սիմէնն ճգնավոր. եղբայրն է Մատթէոս քահանա. սրանց հիշում է Մարգիս եպիսկոպոսը, որ Գուգարաց Կոթիփուրոյ Ընկուզազոմ վանքում օրինակեց Յայնմաւուրքը 1427 թ.—Նոտարք 84—85:

— 148. Սիմէնն վարդապետ Այրիվանեցի. 10 տարի ուսուցանում էր եղվարդի փոքր վանքում. ապա եղավ առաջնորդ Այրիվանեցի, որ նորոցեց և բարեկարդեց: Դնաց Երուսաղէմ ուխտի. վերադարձին մի ժամանակ նստավ Այրիվանեցում, արտագրել տվեց մի Յայնմաւուրք, ապա այնակղից անցավ Զադականք, ուր և մեռավ «1428 թ»: Ունի Կանոնների:—Այրարատ 197, 291, 346, 350. Սիմէնն 241. Հայապ. 569.—ըստ Ազգապ. 2059 նույն է կերի Սիմէնն Սիւնեցուն հետ և 127:

— 149. Սիմէնն պարոն, հայր Ելմելիքի և Ամիրմելիքի, մերձափորներն են Մկրտիչ տաննուտերի, որ գրել տվեց Ճառըն-տիրը՝ Արծկէ 1428թ.—Տաշեան, Ցուց. 583:

— 150. Սիմէնն, կինն է Ազէկ. ծնողներն են Ստեփաննոս քահանայի, որ ստացավ մի Աւետարան 1430 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 71:

— 151. Սիմէնն վարդապետ, կանգնեցրել է ձեռագործ մի խաչքար պարոն Սիմէննի հիշատակին 1431 թ.—Զալալ. թ. 466> Նոտարք 97:

— 152. Սիմէնն պարոն, որի հիշատակին Սիմէնն վարդապետը մի խաչքար է կանգնեցրել 1431 թ.—Զալալ. թ. 466> Նոտարք 97:

— 153. Սիմէնն, հայրն է Սիրամիք, մայրն է Մելիք խաթուն. սրանց անունով կանգնեցրած է մի խաչքար, որ Խրիստութիւնութիւնունի Ս. Խուսաւորիչ եկեղեցու պատին: Փորագրել է Սիմէնն վարդապետը, շինողն է քարիսանածի Սիմէնն, 1431 թ.—Շահապիդ, Ազգապ. հանդ. է, 51:

— 154. Սիմէնն եպիսկոպոս, շինել է աղել Մալաթիայի Ս. Խուսաւորիչ վանքի տաճարի դուռը 1439 թ.—Թորսոս աղբ. Ա. 313, Նոտարք 118:

— 155. Սիմեոն արեգա, գրիչ. Եկեղեց Աւագ վանքում օրինակեց Յայնմաւուրքը 1439 թ.—Տաշեան, Ցուց. 24, 49, 50:

— 156. Սիմեոն վարդապետ, Նորոգեց Այրաբառեան նահանգի վանքերը 1444 թ.—Այրաբառ 10:

— 157. Սիմեոն, կինն է Արզուն. ծնողներն են Թովմա (և 165) Մինասենց Նշանակուր գրիչ, որ օրինակել է բազմաթիվ ձեռադրեր սկսած 1420 թվից մինչև 1444 թ. որտեղ մեջ հաճախ հրշում է իր ծնողներին.—Զեռ. Վասպ. 323, 353, 388, 393. Նոտարք 89. Ակինեան՝ Գւղնգիրք 110:

— 158. Սիմեոն (գրված Սիմոն) Վանեցի, որդի Արքասովոմի. ծնվել է 1985 թ. թողել է մի փոքր հիշատակություն մի Սաղմոսի մեջ 1445 թ.—REA 9, 140.

— 159. Սիմեոն վարդապետ Ռշտունցի, մին այն վեց կրոնավորներից, որոնց օգնությամբ Փիր Ստեփաննսոս Բախվանցի վարդապետը վերաշինեց Կապուտկոսի Ս. Յակոր վանքը 1412 թ. Այս վանքում շաբաթակ և սպասառորդ լինելով Սիմեոնը Փիր Ստեփաննոսին, ուսման մեջ առաջ գնաց: Մի քանի տարի ահատու, Փիր Ստեփաննոս վարդապետը վանքը հանձնեց իր աշակերտին և ինքը գնաց Երուսաղէմ, ուր և մեռավ: Սիմեոնը գավազան ստացավ և եղավ նույն վանքի առաջնորդն ու վարդապետը 1427 թ: Հստ Փիրզակէմեանի գրել է բազմաթիվ վանձեր, որոնք Գանձարանում կրում են իր ծայրանունը (Նոտարք 87): Նա կոչում է նրան էլ Բախվանցի, վերաշինող Կապուտկողայ Ս. Յակոր վանքի, նաև տարեգիր կամ պատմիչ ԺԴ դարու: Հստ այսմ նույն է Սիմեոն վարդապետ Բախունցի, որ գրել է 1392—1401 թվերի պատմությունը, որի մեջ համառոտ պատմում է նաև Էնքաթիմուրի գլխավոր գործերը (Զեռ. Դադեան, թ. 87 թ, Հայապ. 125, Փիրզակէլեան՝ Զորս ընկերք 175).—Նոտարք 11, 15, 41.—Իենդանի էր գեռ 1445 թ: Հիշված է նաև 1446 թ. (Նոտարք 155): Մաշտոցի մի հիշատակարանում, Թովմա Մինասենց գրիչը խոսում է նրա մասին, թե ինչպես հարստացրել է նա վանքը բազմաթիվ կալվածներով, որոնց թվումն է, անում է մի առ մի (Նոտարք 136—9):

— 160. Սիմեոն քահանա, որի շձեռնատուութեամբ Հայրապետ գրիչը օրինակեց մի Աւետարան, Մատիկու վանքում, 1447 թ.—Նոտարք 157:

— 161. Սիմեոն դաբրին, առաջավոր Հայոց Ամբայ. նպաս-

տեց Հայոց Ս. Թէոդորոս եկեղեցու շինության 1447 թ.—Արքա. 1898 թ. 48 ա, Հայապ. 574:

— 162. Սիմեոն, հայրապետ Դերձկի վանքի, Մկրտիչ սարկավագին գրել ավեց մի ծաղոց 1447 թ.—Նոտարք 157:

— 163. Սիմեոն վարդապետ, առաջնորդ Ռշտունեաց Բերդաձոր վանքի, 1448 թ.—Զեռ. Վասպ. 400:

— 164. Սիմեոն (գրված է Սիմէւն) հայրապետ, աշակերտ Կարապետ վարդապետի, որ էր վերջին ստացող Աստուածաւընչի, 1449 թ.—Թորոս աղբ. թ. 296:

— 165. Սիմեոն (գրված է Սիմէւն), այլ աշակերտ նույն Կարապետ վարդապետի, 1449 թ.—անդ:

— 166. Սիմեոն որդի Բարիքիաշի, աղնվական հայ, որ Օսմանցոց հրավերով դաղթեց Պոլիս 1453 թ.—Նշի. մատ. 63, Տաշեան՝ Ցուց. 895:

— 167. Սիմեոն, հայր Կարապետ վանահոր, որ Գառուագրակի վանքում օրինակեց մի Աւետարան, 1454 թ.—Rapport Belgique 97:

— 168. Սիմեոն կրօնավոր, միաբան Ս. Թէոդորոս կամ Դերձկի վանքի: Հիշված է նախ 1447 թ. գրիչ. օրինակել է Ծնորհաւանքականը և զանազան գրութիւններ՝ նույն վանքում 1457 թ.—Զեռ. Կարին. 34, Նոտարք 157, 184:

— 169. Սիմեոն, որ մի խաչքար է կանգնեցրել Թէոդորիայի Ս. Թորոս եկեղեցում, իր, Վարդանի և Կուլաֆչայի հիշատակին, 1458 թ.—Բժշկեան, Ճանապ. ի կեհ. 352:

— 170. Սիմեոն, երեխ նույն անձն է, որի հիշատակին իր Եղբայրը՝ Յովհաննէս մի խաչքար է կանգնեցրել նույն եկեղեցում 1453 թ.—Բժշկեան, Ճանապ. ի կեհ. 352:

— 171. Սիմեոն երեխ, հայր Նիկողայոս եպիսկոպոս Ալբերտմանցու, որ օրինակեց ծաղոցը՝ 1460 թ.—REA 10, էջ 62 և 63:

— 172. Սիմեոն քահանա, կինն է Մելիք, որոնց անունը մի խաչքար է կանգնեցրած ն. Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցում, 1461 թ.—Նոտարք 198:

— 173. Սիմեոն եպիսկոպոս Ս. Նշան վանքի. իրեկ վկասուրագում է մի կատակարի, 1461 թ.—Manus. brit. mus. 31 ա:

— 174. Սիմեոն քահանա, գրիչ. Ապրակունեաց վանքում, օրինակեց Պատմութիւն վարուց Յովհաննու աւետարանչի, 1461 թ.—Մմբատեանց, Երնջակ 118, 128:

— 175. Սիմեոն (գրված է Սիմաւոն) կրօնավոր, միաբան

Խորձեանի Խլպաշի վանքում 1464 թ.-Նօտարք 218, Թորու
աղբ. թ. 341:

— 176. Սիմեոն, փորագրիչ վարպետ Խրիմում. փորագրել
է մի խաչքար 1431 թ. (տես վերը № 153) և մի խաչքար էլ
1464 թ. (տես հաջորդը):

— 177. Սիմեոն քահանա, կինն է հմին Մելիք. իրենց
գերդաստանի հիշատակին կանգնեցրել են մի խաչքար Խրի-
մում՝ փորագրիչ վարպետ Սիմեոնի ձեռքով. 1464 թ. Այժմ
մում գաղաքարի վարպետ Սիմեոնի ձեռքով. — Շա-
տագուցված է Նոր-Նախիչևանի Ս. Հուսաւորիչ Եկեղեցում: — Շա-
հազիկ, Ազգագր. հանդ. է, էջ 50:

— 178. Սիմեոն, որդի Պօղոսի՝ աներոջ մահտեսի Յովհան-
նէսի, որ էջմիածնում փրկանքով ազատեց մի Աւետարան, 1464
թ.-Զեռ. Վասպ. 384:

— 179. Սիմեոն, որդի Թաթարի և եղբորորդի Յովհաննէս
քահանայի, որ Ոստանում, Կարապետ քահանային զրել տվեց
մի Աւետարան, 1467 թ.-Զեռ. Սիր. = ՀԱ 1925, 258:

— 180. Սիմեոն, որդի Շարմէլէքի, մերձավոր Յովհաննէս
քահանայի, որ Ոստանում զրել տվեց մի Աւետարան, 1467 թ.-
Զեռ. Սիր. = ՀԱ 1925, 258:

— 181. Սիմեոն եպիսկոպոս, առաջնորդ Խարբերդի, 1470 թ.

— Bodleian 9:

— 182. Սիմեոն Տէր Խարբերդցի. միարան Երզնկայի Կայ-
սուի վանքի. ծաղկարար (նազաշ). նկարազարդեց մի Աւետա-
րան ու վանքի վրա. 1473 թ.-Թու-
րան, որ Մեսրոր Վրել էր նույն վանքում, 1473 թ.-Թու-
րան աղբ. թ. 328:

— 183. Սիմեոն, որդի մահտեսի Աստուածատուրի և եղ-
բայր Ֆարանի, որ Հալէպում, Մելքիսեթ գրչին զրել տվեց մի
Աւետարան, 1478 թ.-Զեռ. Հալէպի, Ա. 96:

— 184. Սիմեոն արքեպիսկոպոս Գողթնեաց 1481 թ.-
Մարտանեանց՝ Երնջակ 299:

— 185. Սիմեոն (զրգած է Սիւամոն!), որդի Բախչայիշի՝
քերւ տանուաեր խոջա Խղբշահի, որ Վանում, Ազարիա գրչին
զրել տվեց մի Աւետարան, 1484 թ.-Զեռ. Վասպ. 496:

— 186. Սիմեոն զրիչ. օրինակեց Աւետարանը Երուսաղե-
մում, 1484 թ.-Զեռ. Դադեան, թ. 52 ա:

— 187. Սիմեոն աէք, վահկակալ Խորոտկայ վանքի, 1490
թ.-Զեռ. Նոր-Բայազ. 23 ա:

— 188. Սիմեոն (զրգած է Սիւամոն) երեց, պապ Սարակ

երեցի, որ Կեսարիոյ Մոնախում պյուղում օգնեց Յովհաննէս
արեղային զրելու Յայսմաւուրքը՝ 1495 թ.-Ալպօյաճեան, Պատմ.
հայ Կես. թ. 1850:

— 189. Սիմեոն (զրգած Սիւամոն) որդի Վահան երեցի,
հղայր Աւետիք Վրչի, որ օրինակեց Սաղմոսը Պալախորի վան-
քում 1495 թ.-Զեռ. Մանաս. 24 ա:

— 190. Սիմեոն, որդի Աւետիք քահանայի, որ գնեց մի
Աւետարան 1500 թ.-Զեռ. Հալէպի, Ա. 68:

— 191. Սիմեոն Ա Ուլինեցի կամ Զէյթունցի. կաթողիկոս
Սոոյ «1539—1545 թ»: հաջորդեց Յովհաննէս Քիլիսցուն.—Զեռ.
Հալէպի, թ. 32 ա, Ալբանիկերդեան՝ Ուլինիա կամ Զէյթուն 14՝
Սիւուան 537, Դուլամիրեան՝ Կիլիկիա 331:

— 192. Սիմեոն, թերեւս Ծկրանակերտցի. հեղինակն է
Վկայարանության Մարգարէտ սարկավագի և Շահրման Թուրկու-
րանցու, որոնք նահանակվեցին 1580 թ.-Նոր վկ. 419—420:

— 193. Սիմեոն վարդապետ Ապօրանցի, Մատենազիր ԺԶ
զարու. աշակերտել է Յովհաննէս վրդ. Պատանցուն. հետո եզերէ
տառացիշ Աղթամարում և հասցրել հմտատ աշակերտաներ, ինչ-
պես են Կարապետ Վարպացի, Յովհաննէս Խիզանցի և Յովհան-
նէս Մալկող վարդապետ: Նույն աշակերտությունից են դարձ-
յալ Յովհաննէս վրդ. Կրծօն, Յովհաննէս վրդ. Գրագիր, Սահակ
և վարդապետաց վարդապետ (Աղգապ. 2261): Դրել է «Վիպասա-
նութիւն սակս Պահապատնեացն զարմի և Մամիկոնիանցն սեռի»
(ապ. Էջմիածին 1870): Իր մի հիշատակարանը անս Դեռդեան
№ 102 ձեռագրում: Այս «Վիպասանութիւնը», ինչպես հեղինակն
է ասում, գրված է Ներսէս Շնորհալու Վիպասանութեան հասե-
զամանակ:

Եւ Ներսէսի թեպէտ վիպեալ,

Բայց իմս նորա Ներսէսի չեղեալ,

Ո՞չ ի հուրին տարաձայնեալ,

Եւ ոչ զորբոյ բանն երկրորդեալ,

Ո՞չ զմիջինն համրութեալ,

Որ յաստանորն չէ զրեար:

(Սիմ. ապար. 22)

Եւ իրոք այս «Վիպասանութիւնը», որ Տառեան չափով սու-
նակութիւն է, Շնորհալու համանուն աշխատառթյան նման սկսվում
է եւալ հանգով, հետո գասնում է մին են վիրացւ զրգած իբ-

շատակարանի համաձայն պարունակում է 1300 երկոտղ և գըրված է Մեծոփի վանքում, թիմ = 1590 թվին.

Ի թիւ հազար հռ հարիւրոց,
Կատարեցաւ բանս պատմագրոց,
Ի թուականիս ազգիս Հայոց,
Հազար՝ և երսուն՝ ինն ընդ սոցունց:
(Սիմ. ապար. 129).

Այս «Վիպասանութեան» նյութին է Հայոց պատմությունը՝ սկսած աշխարհի ստեղծագործությունից մինչև Ներսէս Շինող կաթուղիկոսի վախճանը: Իր բուն աղբյուրն է Սերէսոսի պատմությունը, որին հետեւմ է քայլ առ քայլ, պահելով նույն իսկ նրա անսովոր բառերը և ձեռագրական վրիպակները: Բայց անտես չի անում նաև Խորենացին, որին հիշում է մի քանի անգամ: Օգաւացում է դարձյալ «Փոսասոսից», որին հիշում է էջ 33 և Ղազարից, որից առնում է Վահան Մամիկոնեանի պատմությունը: Լեզուն շատ հասարակ, բանաստեղծությունը անհամ, պատմական ոչ մի նոր աեղեկություն էլ չունենալով, կարելի է ասել թե գրվածքը բոլորովին անարժեք մի գործ է: Դրված է իր երկու աշակերտների՝ Կիրակոս Այրարացու և Անանիս Նախավայրությունունը. (ան Սիմ. ապար. յոջ. էջ դ).

Յորմէ գթայ Տէրն տէրանց,
Սիմէօնի որ զայս ողեաց,
Նաև Երկուցն խնդրողաց
Ռւսութանէր հանճարեղաց,
Կիրակոսի պետին պատուած,
Անանիայ ջնորհօք օծած,
ՅԱյրարատեան տանէն եկած,
Յուսմունս տառից կան դեղերած:
(Սիմ. ապար. 154).

Աշակերտաց Տեառն բանի,
Շնորհագարգեալ Կիրակոսի,
Անանիայ սրբասիրի,
Որք հարկ եղին ինձ անուտի,
Տաղաչափել զդիրս Դաղարի,
Ողեալ սահելք հոմերապէս,
Զթաղաւորաց ձառն պէսպէս:
(Սիմ. ապար. 156).

«Վիպասանութեան» վերջում զտնվում է «Ցիշատակարան շարագրութեանս և Պատմութիւն Ապարանից տուրք Նշանին, ընդ առաջ Ողբ ցաւագին հեծեծանաց ի վերայ Մեծափոյ ս. ուխտին» (էջ 129—157): Նույն հեղինակից են դարձյալ «ի վերայ առմանն Թաւրիզու, որ առաւ ի յօսմանէ» (1585 թ. տպված Վիպասանութեան իր հավիլված, էջ 158—162) և «Ողբանք ի վերայ թախթին Տրդատայ թագաւորին» (գրված 1593 թ. սրանից մի նմույշ ան Այրարատ 367—369):—Առաք. պտմ. 340, Հայապ. 127, Զարք. Նոր Ժատեն. 250, Սիմ. ապար. 158, 161,—Սիմէօնն՝ Սիմ. ապար. 155—157 (ծայրանուն տուն ընգմէջ).—սեռ. Սիմէօնի՝ Սիմ. ապար. 154, Սիմէօնի՝ անդ 21, Սիմէօնի՝ անդ 133 և 157:

— 194. Սիմէօն կաթուղիկոս Աղուանից. Թում է իր դամրանը 1611 թվից.—Արցախ 171:

— 195. Սիմէօն կաթուղիկոս Աղվանից. կանդնեցրել է մի խաչքար Մեծարանց վանքում՝ 1614 թ. մեռել է թաղվիլ նույն վանքում, 1616 թ.—Բանաւ. 1901, 139, 140:

— 196. Սիմէօն Գ Քոլատակեցի, կաթուղիկոս Աղուանից. հաջորդեց Մելքիսէթին 1622 թ. նստավ Հանմանսուր գյուղում. իրեն էլ հաջորդեց Յովհաննէս թ. 1628 թ. (№ 1337).—Զամրո 78, Բարխուտ. Պատմ. աղվ. թ. 63:—Իսկ ըստ Զեռ. Դաղեան, Ա. 89 ր կոչվում է Սիմէօն Շոեմասուրեցի, հաջորդեց Մելքիսէթին՝ 1596 թ. իրեն էլ հաջորդեց Յովհաննէս 1633 թ.:

— 197. Սիմէօն զպիր Լեհացի. Մարտիրոս անուն անձի որդին էր. 1608-ից մեկնեց Լվովից Պոլիս, ուր երկար սպասեց Երուսաղէմ ուխտի Երթալու համար. 1610-ին Մկրտիչ վրդ. Խարբերդցու ընկերակցությամբ զնաց Զմիւռնիա և շրջապայելով ծովկերյա քաղաքները՝ վերադարձ Պոլիս: 1611-ին Զարարիա վրիս վրդ. Վանհցու հետ գնաց Վենեաիկ և Հոռմ. այսակ ննաց Երկար ժամանակ: Նորից սկսեց ճամբորության և Վենեաիկ-Զմիւռնիա-Բրուսա-Խարբերդ գծով հասավ Մուշ: Վերադառնաւ լով Պոլիս, նաև կեց Ալեքսանդրիա և Կամիրէի ճանապարհով հասավ Երուսաղէմ: Մի ժամանակ մնաց այսակ ապա Հալէպ: Կիսարիա-Անիկիրիա ճանապարհով դարձավ Պոլիս և այստեղից էլ լուս՝ 1619 թ. իր ամբողջ այդ ճանապարհորդությունը և ճանապարհին իր ահսածներն ուղևածները զրի է առել Սիմէօնը: Բնդարձակ նկարագրի է Պոլիս, Վենեաիկ, Հոռմ, Մուշ, Կամիրէ, Երուսաղէմ, Հալէպ, Տիգրանակերտ և Լվով քաղաքները: Իր Ու-

զեդրութեան կցել է նաև 1619—35 տարիների Տարեգրութիւնը Այս աշխատությունը բնագրի վրայից հրատարակեց Ակինեան, նախ Հանդէս Ամսօրեայ 1932—4 և ապա առանձին հատորով՝ Վիեննա 1936 (տես Զեռ. Լ. վոլ. =ՀԱ 1937, 147):

— 198. Սիմեոն Բ Սերբաստացի կամ Արկելցի. կաթուղիկոս Սոոյ «1633—1648 թ» (բայց 1630 թվին գրված մի ձեռ. արդեն հիշում է նրան. առև Զեռ. Վենետ. Ա. 776.—1633 թվի օժման մասին հիշատակում է Զեռ. Հալէպի; Ա. 387, 393. իւկ Զեռ. Հալէպի Ա. 107ա հիշում է նրան 1640 թվին): Եպիսկոպոսական ձեռնադրությանց մեջ զեղումներ կատարելով՝ Փիլիպպոս կաթոլիկոս գրեց նրան և զգաստության հրավիրեց: Սիմեոնը հանդգործեն պատասխանեց նրան՝ համարելով իրեն «Ամենայն Հայոց հայրապետ»:—Զեռ. Հալէպի Ա. 77 թ և Բ. 31 թ. Ազգ. մատ. ՀԸ 38:

— 199. Սիմեոն եպիսկոպոս Քառնեցի. գրել է 1651 թվին «Յառաջարան» և լուծմունք Պրոկի գրոց Շաղկապք աստուածաբանականք», որ վրացերենից թարգմանել էր Սիմեոն (Ն. 45) քահանան 1248 թվին. Այս գրքի մասին խոսում է Սիմեոն Երենցին (ապա կաթուղիկոս) իր Մեկնութիւն Պրոկի աշխատության առաջարանում (Զեռ. Թաւր. 124) և այդ գործը վերադրում է Սիմեոն վրդ. Զուղայեցուն, «որ էր եպիսկոպոս Գառնոյ»: և հեղինակ է նաև Քերականութեան և Տրամարանութեան. Այս լոլորը ցույց են տալիս, որ այս Սիմեոնը հաջորդն է Ն. 200. — Տաշեան, Մատեն. մանր առ. Ա. 28—38, Զեռ. Թաւր. 124, Զեռ. Սահան. Ն. 37, Զեռ. Դադեան, Բ. 49ա. Տաշեան՝ Ցուց. Էջ 1150ա:

— 200. Սիմեոն վարդապետ Զուղայեցի. աշակերտ Մելիքսեփսեպս. բնկերացել էր Խաչատրուր Կեսարացուն՝ իրեն նվիրակ Խենաստանի: Այնտեղ ծանոթացագ Եվրոպական ուսման, որ ինքնողնությամբ շատ առաջ ատրավ: Վերադարձին 3 տարի էջմիածնում սովորելուց հետո, զնաց նոր-Զուղա՝ Խաչատր վարդապետի մոտ և ավելի առաջ գնաց ուսման մեջ: Նա զարձագ նշանավոր քերականութեան. գրեց Քերականութիւն (տպ. Պոլիս 1725), Հաւաքում Տրամարանութեան (տպ. Պոլիս 1728); Վերլուծութիւն սարողութեանց Արիստատէլի մեն: Այս գրքերը գրելուց հետո հրավիրվեց Փիլիպպոս կաթուղիկոսի կողմից ուսուցիչի: էջմիածնի դպրացում: 1651 թվին հզավ արք Եպիսկոպոս Խոր-Զուղայի: Կյանքի վերջերը քարոզության դորութիւն կողմէն կատարած է նրան և առաջարկել է օճում Երեմիա (Ն. 31) Հասան-Գալայեանց անուն արեղային, որին ուղարկում է Դանձասար (1676 թ): Սկսում է կոիվը երկու կաթուղիկոսների միջև. Յակոբ կաթուղիկոսի միջամտությամբ Սիմեոնը առերևս հաշտվում է Երեմիայի հետ 1677 թ. (Ձեռա-

եկավ դեպի Օսմանեան Երկիրները և մեռավ թձԶ=«1657 թ» Եւղոկիայում:—Սամ. անեց. շաբ. 180. Զքր. սարկ. Գ. 35. Առաք. պամ. 309—14, 500. Զուղ. 117—8. Զարք. Նոր մատ. 369. Կամենից 141. Զեռ. Դադեան Ա. 92 թ, Բ. 34. Տաշեան, Ցուց. 1150. Ազգապ. 2490:

— 201. Սիմեոն, ճըռ կաթուղիկոս Ազուանից 1671 թ.—Բարխուտ. Ազգանից Երկ. 220:

— 202. Սիմեոն տաղասաց Կաֆացի, Խրմպէյ անուն անձի սրդին էր. ծնվել է Կաֆայում (Թէոդոսիա). Երեխ թէ կոշկակար էր. ունի տաղեր (թվով 15), 1683—6 թվերից, որոնց թվումը հեղինակի համառոտ կինսագրությամբ տալիս է Ակինեան, Մատեն. հետագ. Դ. 193—8: Իր տաղերից տես Նզշէջ էջ 55, Կոստանիանց Նոր ժող. Դ. էջ ն և 54:

— 203. Սիմեոն եպիսկոպոս, պատրիարք Երուսաղէմի. իլեց աթոռը Յովհաննէս Պոլսկցի Նորութէմի հեռքից «1687 թ». բայց 4 տարի հետո Յովհաննէսը կարողացավ վտարել նրան և տիրել գահին «1691 թ»: Ուրիշներ Սիմեոնի տեղ գնում են Միհամ (Ն. 40) Ամբեցուն. այս մասին տես Ազգապ. 2639 և վերը՝ հա. Դ. էջ 344—5:

— 204. Սիմեոն երեց Փեթրովիչ, Լեհաց Յան Սոբիեցկի թագավորի կողմից պատվիրակ ուղարկվեց Պարսից թագավորի մոտ, բանակցելու համար անկախ Հայկական թաղավորություն կազմելու խնդրի առթիվ, նպատակ ունենալով հարգածելու Սոմանեան կայսրությունը թիկունքից և գուրս վտարելու տաճիկներին Երբացյալց, 1691 թ.—Ալպօյանեան, Առաքելութիւն ի Հապէջ. 1946, էջ 64:

— 205. Սիմեոն Դ. Խատորաշէնցի, որդի Մեծինացի Սարգիս քահանայի (Արցախ 232). կաթուղիկոս Ազուանից. Պետրոս Դ կաթուղիկոսի մահից հետո իլում է աթոռը և Դանձասարի հարստությունը հավաքելով՝ փոխադրում է իրենց զյուլը: Նա շինում է Մոռաւ սարում Երիցմանկանց վանքը և նստում է այնտեղ իրեն հակաթոռ կաթուղիկոս Գանձասարի, հենցելով զյուղի թուրք իշխողի վրա (1675 թ): Էջմիածնի Յակոբ կաթուղիկոսը բանագրում է նրան և փոխարեն կաթուղիկոս է օճում Երեմիա (Ն. 31) Հասան-Գալայեանց անուն արեղային, որին ուղարկում է Դանձասար (1676 թ): Սկսում է կոիվը երկու կաթուղիկոսների միջև. Յակոբ կաթուղիկոսի միջամտությամբ Սիմեոնը առերևս հաշտվում է Երեմիայի հետ 1677 թ. (Ձեռա-

Դադեան, թ. 18 ա). բայց նորից շարունակում է իր անկարգությունները։ Յակոբ կաթոլիկոսի մահից (1680 թ) հետո, նրա հաջորդ Եղիազար կաթողիկոսը (1682—91 թ) երկուսին էլ կանչում է Էջմիածին և երկուսին էլ աթոռակից է նշանակում։ Սիմէռնը չսանձեց իրեն։ Նա չէր նստում Գանձասարում և ժողովուրդից հավաքած գումարները իր տունն էր ուղարկում, եկեղեցական զգեստները և զարդերը յուրացնում։ Սրա վրա ժողովուրդը ժողով է գումարում, և Սիմէռնին վտարում է 1691 թ. (Զեռ. Դադեան, թ. 18 թ), իր անունը հիշվում է դեռ 1698 թ. (Ամբատեանց՝ Գեղարքունի 407)։ Իր հետ բանակցության է մտել Խորայէլ Օրին 1699 թ. (Աթան. յոջ. ժկ), Երեմիան մեռնում է 1700 թ. հաջորդ տարին էլ Սիմէռնը (Զամբռ. 80—81, Բարխուտ. Պատմ. աղվ. թ. 69, Էջո՞ Հայկ. տպ. թ. 297)։ Սիմէռնի հաջորդներն եղան ներսէս, Խորայէլ և Սիմոն Փոքր, որի մահով վերջացավ Երիցմանկանց այս հակառակ կաթուղիկոսությունը (Ռաֆֆի, Խամսայի մել. 114)։

— 206. Սիմէռն Երեանցի, կաթուղիկոս Հայոց «1763—1780 թ»։ աշակերտ էր Էջմիածնի դպրոցի, ապա ինքն էլ ուսուցիչ նույն դպրոցում։ Հասցել է բազմաթիվ աշակերտաներ, Նախապես Նվիրակ էր և շրջել էր Տաճկաստանի, Պարսկաստանի և հեռու Հնդկաստանի Հայոց թեմերը։ Վարդապետ ժամանակ դրել էր Լուծմունք Պորֆիրի, Արիստոտէլի, Դաւթի, Պրոկի (այս գրքի հորինման մանրամասն հիշատակարնը 1750 թվից՝ տես Զեռ. Թաւր. 124—5), Քարոզքիրք և Պարզաբանութիւն հայ Տօմարի։ Կաթուղիկոսության ժամանակ աշխատեց Էջմիածնուր դարձնել լուսավորության կենտրոն և կապել ամեն տեղ ցրված հայերի հետ։ Հիմնեց Շուսաստանի թեմը, դադարեցրեց կաթոլիկական պրովագանդան Արաւացիա, Ալաշկերտ և Բայազէտ։ Հաստատեց Էջմիածնում տպարան «1771 թ», թղթի գործարան «1776 թ»։ Կարգի բերեց հայ եկեղեցու տոները, որի համար հորինեց Տօնացոյցը (տպ. Էջմիածին «1774 թ»)։ Իր վերջին գործերն են Պարտավճարը և Զամբռը։ Ունեցել է նաև քաղաքական գործունեություն, ծառայելով իրեւ միջնորդ հաշության Երեանի խանի և Վրաց Հերակլ թագավորի միջև և կասեցնելով այս վերջինի արշավանքը Երեանի վրա։ Սիմէռնը վրացական տպագրական գործին էլ նպաստեց՝ նվիրելով Վրաց քաղաքուրին մի տպագրական մամուլ «1778 թ»։ Մ. մաշ-

337 ա. Զամբռ. 33—44. Աղղապ. 3019—3136. Էջո՞ Հայկ. տպ. թ. 574։

— 207. Սիմէռն վարդապետ կամ հայրապետ, ունի Քարոզքիրք, որ պարունակում է 28 քարոզ։ Հեղինակի ով լինելը և ժամանակը հայանի չել Զեղագիրը զանգում, է Վիեննայի Միիթարեանց մոտ (№ 464) բայց Տաշեան։ Ծուց. 938—9, Ցանկում, էջ 1150 թ կոչված է «պատրիարք», բայց ձևագրում այսպիսի տիտղոս չէ տրված և Պոլսի պատրիարքների շարքում ոչ մի Սիմէռն չկա։ Իսկ Երուսաղէմի պատրիարքների շարքում կա մի Միմէռն 1080—1109 թ. և Միմէռն հակաթոռ 1688—1691 թ. Քարոզների մեջ կա մեկը, որ գրված է «ի հանդիսին որ եղել ի կ. Պոլսի վասն որդինութեան սուլթան Մուսթաֆայ թափառիքն ի ՌՄԸ թուոջն և մարտի Ե» (=1759 թ), Քարոզներից երկուան էլ Էջմիածնի մասին են։ Ուստի կարծում կմ որ հեղինակն է Սիմէռն Երևանցին, որ դեռ վարդապետ էր և իրեւ նվիրակ եղել է Պոլսում այդ թվին, ապա եղավ կաթուղիկոս։

— 208. Սիմէռն կաթուղիկոս Աղվանից։ Խորայէլ հակաթոռ կաթուղիկոսի եղբայրն էր, որին նույն Խորայէլը օծեց և նուեց-րեց Երից-Մանկանց վանքում (1794 թ), ինքը նալով Ամարանում։ — Բարիուտ. Պատմ. աղվ. թ. 122, Հիշվում է դեռ 1809 թ.—Զեռ. Դադեան, թ. 42թ.

— 209. Սիմէռն տաղասաց Ժլ դարու։ Իր տաղերից է «Սէրդ սիրով խոնարհեցար» (տաղ խաչելության)։ — Տաշեան, Ծուց. էջ 1150թ։

— 210. Սիմէռն Կամբկապցի. ունի Բժշկաբան (թվականն անհայտ)։ — Նորայր, Հայկ. բառաք. էջ 107։

— 211. Սիմէռն տաղասաց (թվականն անհայտ)։ Գրել է Կիրակոսի և Յուղիտայի վրա մի տաղ. «Սուբբ Յուղիտա, գուստը մեծաց» Զեռ. Հալէպի, Ա. 142 թ, որ անդ էջ 106ա ուրիշ տաղասացի է վերագրվում, այս է Կիրակոս արեղային։ Առաջին ձեռագրի թվականն է 1497 թ, Երկրորդինը՝ 1662 թ։

— 212. Սիմէռն Փոքր, Երիցմանկանց հակաթոռ կաթուղիկոս Սիմէռնի եղբայրորդին էր. իրը հակաթոռ կաթուղիկոս հաջորդեց Խորայէլին։ Նեղվելով իրաբահիմ խանից փախավ Թիֆլիս, ուր Յովհաննէս վարդապետը նրան թունավոր քթախոտ քաշել տալով մահացրեց 1800 թ. Սա եղավ Երիցմանկանց վերջին հակաթոռ կաթուղիկոսը։ — Բաֆֆի, Խամսայի մելիքութ. 114, 150—1, 233, 238։

*ԱՐԵՄԻԿ, իդ. <ալլու.՝ ՏԻՄ ՇԱՐԺԱԹ> բառից՝ թի փա-
ղաքշականով:

— 1. Սիմիկ, կին Գրիգոր քահանայի, որ մի Աւետարան նվիրեց Հաղիսոյ Ս. Գէորգ եկեղեցուն, 1348 թ.- Զեռ. Ազուկ. (Արքա. 1911, 564):

— 2. Արմեկ, կին ուն, որին սպանեցին թուրք ասպատակները 1463 թ.—Այրարատ 327թ:

— 3. Սիմոյ, դուստր Տէք Աւագ քահանայի, որ Երուսա-
լիմում, Վրթանէս Արևելցուն գրել տվեց մի Գանձարան, 1497
թ.—Զեռ. Հայէպի, Ա. 150.

ՍԻՄՈՅ, իգ. ծաղութեա ինձ անհայտ. կապ ունին նախորդ
ների հետ. մի անգամ գտնում եմ հիշված 1666 թ. (Զեռ. Հա-
յէակի, թ. 8).

ՍԻՆԱ, իգ. ըստ իս ծագում է Սիրամարզ անգամ ժղ. Սինամահամ ձեր կրծատ Սինամ կամ Սինա ձերց. Հիշատակված է մի անգամ ժդ դարում և մի անգամ էլ ժի դարում՝ անձ հաւաքաչ է պատճեն Անիան ձեռ (Զեր. Դադեան, Բ. 15ա).

— Սիթա, կին Վարդան Տփխիսեցու. միասին նվերներ և արել Հաղպատին, 1267 թ.—Երզնկեանց, Հնախ. տեղադր. էջ 29.

ՍինԱթէգ, ար. ծագութիւն ինձ անհայտ. թերեւ պետք է հասկանալ Սիթանքէց, որ տես Սիթան: Գործածական է այժմ Ղարաբաղում:

*ՍԻՆԱԶ. իգ. <ՍԵԼՎԻՆԱՊ բառի կրծատումն է. գործածական
է այժմ Ղարաբաղստմ:

*ՍիհԱՄ, ար. հիշված է 1534 թ. (Զեռ. Վասպ. 649). կրնակ
ձեն է Սենեքրիմ անվան, ինչպես որ այժմ էլ ունինք Պոլսուն
Սիհմեն:

*Սրնևն, ար. <արաբ. ս- Sinān անունից, որի բառն նշանակությունն է «նիզակ»։ Այս անունվ զանազան անձեր տես կամուս, գ. 652։ Նշանավոր է Զղալէզադէ Սինան փառակ, Օսմանցաց զորքավարը, որ Հայաստանը գրավելով արշավեց Եահաբասի վրա (1604 թ.)։ Սրանից է Սինաննեան ազգանունը։

— 1. Սինան ոմա, որ իր ծախտով արձաթապատել է աղեցին գեղեցիկ Աւետարանը, «ր Օշին թագավորը նվիրել էր Սեբաստիայի Ստեփան եպիսկոպոսին, 1320 թ.—Ծահազիդ, Պատմատեկ. էջ 112:

— 2. Սինան, որդի պարոն Մերի և եղբայր պարոն Ասլանի

որ ստացավ ժողովածու ճանից Եպիփանէ՝ Աերաստիա 1350 թ.
—Տաշեան, Ցուց. 107.

-- 3. Սինան, որդի Խութլուպէյի. շինեց Կամենիցի Ա. Նիկողայոս եկեղեցին 1398 թ.—Կամենիցի 134, 160, Տруды Вост. комм. ИМАО II, 3, էջ 43.

- 4. Սինան ոմի, որի գամբանի խաչքարը ագուցված է Ամսոփյու Ա. Աստուածածին եկեղեցու պատին, 1451 թ. — Հաղորդեց Ամսոփյու Կարապետ Դազգական, 1912 ապր. 12.

— 5. Սինան, նշանավոր ճարտարապետ Օսմանեան պեռության. Կեսարացի հայ էր, ապա թուրքացավ. շինել է 300-ից ավելի շենք, որոնց մեջ երեկոի են Պոլսի Սիւլեյմանիէ և Ազգաբանուալուսի (Էտիբրնէ) Սելիմիէ մզկիթները. Առաջինը Պոլսի ամենից հոյակապ շենքն է Այա-Սոֆիայից հետո. շինությունը տեղի է 15 տարի և վրան ծախսվել է 700,000 սոկի (= 75,600,000 դրուշ, որ անում է 6 միլիոն, 48000 սոսկի ուուրի). Կոչվում է Պոլսի Շփառքը և ուրախությունը; Իր անվան է նվիրված Պոլսում «Սիւլմար Սինան» փողոցը. Ապրել է 1490—1588 թ.—Անահիտ 1931, սեպտ. 165—167. Ալպօյածեան՝ Պատմ. Հայ Կես. Բ. 1532, ուր կա նաև Սինանի նկարը:

— Ավելի ուշ հիշատակված են Սինան՝ 1646 թ. (Սիսական 451թ.), 1655 թ. (Թորոս աղբ. թ. 372) և 1695 թ. (2եւ. Վասպ. էջ 982).
—

*ՍինԴՈՒԽԱՆ, իդ. <Հնդկաստանի Ոյթգիի երկրի անունից +պրա. ու խառ. հիշված է մի անգամ 1807 թ. (Զեռ. Դադեան, թ. 32ա):

*ՍՄՈՒՆ, ար. <երբ. լի՛չ Տիյոն անվան հուն. Տաջա-
դարձությունից. Այս անունով էր կոչվում Երուսաղէմի մատ-
գանված լեռը, լայնաբար նաև Երուսաղէմը. Հրէից մեջ որբա-
զան բառ է, Հնիքից Տաթէ. ոսկիփ. 200 մեկնում է «Սիօն՝ որ
անմատոյց լսի կամ բարձր զիտանոց»: Գրված է Սիրվն, Սիրն
և Սիօն ճեկրով: Մեր մեջ իրքեւ անձնանուն գործածված է Զ—
ժի դարերում. այժմ խափանված է:

— 1. Սիրն եպիսկոպոս Գողթան, անդամ Դուքսնի եկեղեցական ժողովի «607 թ»:—Ռէխտ. Բ. լ. Գիրք թղ. լը:—սեռ. Սիրնի՝ Ռէխտ. Բ. լէ:—Սիրվնի՝ Դիրք թղ. խ:—բց. ի Սիրնե՝ Ռէխտ. Բ. լը:—ի Սիրվնե՝ Դիրք թղ. լը:

— 2. Սիրն Ա Քաւունեցի. կաթողիկոս Հայոց 767—775 թ.
Քաւունեց պատվիր էր. Նախապես եպիսկոպոս Աղձնեց. հաչակ-

զած էր իբրև սուրբ և հրաշագործ մարդ Հաջորդեց Տրդատ Բ
կաթուղիկոսին. գումարեց Եկեղեցական ժողով Պարտաւում և
նոր կանոններ մշակեց «768 թ.» Դժբախտությամբ անցկացրեց
իր ժամանակը Արքաների կրոնական հալածանքների պատճա-
ռով.—Եզն. իր. 268. Կանոն. 165. Քհնպ. 272. 8;. կթղ. իր. 85.
կթղ. հյր. 276. Ասող. Բ. բ. Սամ. անեց. 88. Մի. անեց. դ. Մի.
այրիվ. 21. Մի. առ. իթ (=իր). կիր. 39. Վրդ. իս. Օրբ. հա.
Տաթե. հարց. 545. Մի. համդ. 28.—սեռ. Սիօնի՛ Կանոն. 164.
Տաթե. հարց. 545. Մի. համդ. 28.—սեռ. Սիօնի՛ Կանոն. 164.
8;. կթղ. իր.—Զամշ. Բ. 410—413. Աղդապ. 879—892. Զարր.
Բրամ. 225:

— 3. Սիրն եպիսկոպոս Սեբաստիոյ. քաղաքի հույն մետրապոլիտի հանած հալածանքից ստիպվեց ուրանալ հավատքը և ուռաւունել քաղկեդոնական դավանանքը 986 թ.—Ասող. Գ. ի.

— 4. Սիսն (գրված Սիսն) արքեպիսկոպոս Սերաստիյ-
սրան հաջորդել է Եղիսէ աշակերտ Մագիստրոսի. մեռել է Դա-
ւիթ թագավորի ժամանակ, մոտ 1027 թ.—Նաթանեան, Տեղեկ
Սևաստ. էջ 29:

— 5. Սիրն աշակերտ Սարգսի զրիչ, Մուշեղկայ գյուղի Նոր սէսի անապատում օրինակեց Մանդակիւնու ճառերը, 1210 թ.— Դուռեան, Ուսումն. Երևանադէմ 1935, էջ 230.

— 6. Սիրն քահանսա, իր Աւետարանը շնորհեց Խաչատուկ գրչին՝ արտադրելու համար 1252 թ.-Զհո. Սիր. = ՀԱ 1925, 378

— 7. Սիրն, թուղթ տվեց Ստեփանոս գրչին՝ օրինակելու

— Ե. Օլիս, բնակչությունը՝ 1269 մ.— 2եռ
համար Աւետարանը Կիլիկիոյ Վահկայ դղեկում, 1269 թ.— 2եռ
Վասպ. 96:

— 8. Սին արքեպիսկոպոս, վանահայր Արքայակաղը վասքի և առաջնորդ Մամետիսյ (Մսիս). սրա ձեռքով Թորոս քահանան նույն վանքին նվիրեց Հքնաղագեղ մի Աւետարան 1266 թ.—մի ուրիշ հին Աւետարան էլ ստացավ 1269 թ.—Թուսսապը. Ա. 189. Սիսուան 250 ա. Նախանեան, Տեղեկ. Սերաս 86, Զեռ. Սեր. (ՀԱ 1924, 333), Տաթև 1927, 183. Զեռ. Կետածած 46 (այս վերջինը գրված Սիսվն).—հիշեած է նաև 1270 թ Հացունի, Կարեռ խնդ. 264 (Սիսվն ձեռվ).
—

— 9. Սիրն կուսակրոն քահանա, միաբան Երևայի Աստուածածին վանքի. Գրիգոր գրչին գրել տվեց մի Աւետիքան, 1272թ.—Զեռ. Սեռ. = ՀԱ 1924, 514:

— 10. Սիրոն քահանա, միաբան Ականց կամ Ակներ անտպատի (Կիլիկիա). Կոստանդ քահանայի հետ միասին թուզի էին

կոկում Դրիգոր դրչի համար, երբ սա արտազրում էր Միխայէլ աստրու Ժամանակագրությունը 1273 թ. —Միխ. աս. Բ տպ. Էջ 45: Միտւան 154 ա:

— 11. Սիբի, հոգերդի Մկրտիչ քահանայի, որ Կարբիսմ
օրինակեց Խոսրով Անձևացու Մեկնութիւն ժամանակադրու-
թեան, Պատարագամատոյց, Մեսրոպ երէց, Զենոք Գյակ և Յով-
հան Մամիկոնեան, 1278 թ.—Պատմ. Տարօնոյ, Երևան 1941,
էջ XIII.

-- 12. Սիրն քահանա, եղբայր նշանավոր գրիչ Լևոն երեցի,
մեռավ և մանկազոյն խակակոտոր 1306 թից քիչ առաջ.—
Սիրուան 517:

— 13. Սին, որդի Յոհան քահանայի և եղբայր Ստեփան-նոս քահանայի, որ իր որդի Միհթար սարկավագին սկսեց զրել տալ Աւետարանը. Միհթարի մահից հետո շարունակեց Գրիգոր Կրէցը և վերջացրեց Սարդիս քահանան՝ 1326 թ.—Rapport Belgique 83.

— 14. Սին քահանա, իր երկու եղբայրների՝ Յովհաննէս կրոնավորի և Եղեկիէլի հետ միասին դրել տվին մի Տօնական՝ Ստեփաննոս գրչին, Թշուաւնեաց Տշող զյուղում, 1404 թ.—Նոստարք 21:

— 15. Սինն քահանա, մերձավոր Յովկաննէս (№ 781) քահանա գըշի, որ Զերմանորի Ակոռոյ վանքում օրինակեց Աւտարանը 1417թ.—Զեռ. Վասպ. 303.

— 16. Սինէ եպիսկոպոս, ստացող. Մարգարէ դբչին գրել
ավեց մի Աւետարան, Մոնկաց Ս. Գէորգ վանքում, 1435 թ.—
Զեռ. Վասա. 372.

— 17. Սիօն քահանա, որդի Նասրաղինի, Հորեղբայր տառաւտեր Յովհաննէսի, որ Խլաթում օրինակել ավելց մի Աւետարան, 1443 թ.—Զեռ. Նոր-Բայազ. 19ա.

— 18. Սին եպիսկոպոս, միաբան Ռոտանի Պալէի վանքի,
1444 թ.—Զեռ. Նոր-Բայազ. 41ա.

— 19. Սինն միայնակեաց, որդի Քուրղեայշին, միաբան
կողուց վանքի, ուր Վարդան աբեզային գրել ապեց մի Աւետա-
բան, 1461 թ.—Թորոս աղը Բ. 265, Խօսարք 198:

— 20. Սինն երէց, քահանա Կեսարիոյ Մանտիսոն գյուղի՝
1495 թ.—Ալպօյաձեան, Պատմ. հայ կես. թ. 1850.

*ՍԻՌՈՒ, ար. <ըստ իս Վլասիս անունից է կրծառված։ Առանձին ավանդված չէ. բայց սրանից է Սիոսեան ազգանունը՝ 1860 թ. (տես Կարպատեան, Ցիշատ. Սամաթ. էջ 127)։

***ՍԻԲԻԼԻ**, իգ. <Փրանս. sibylle բառից, որ ծագում է լտ. sibylla, հռոմ. σίβυλλα εήρι: աշխարհի մարդառեռիք: Փոխ առնը-վեց Փրանսակրենից Կիլիկեան շրջանում (ուստի և Կիլիկեան տա-ռադարձությամբ Ե>պ) և զարծածական եղափ միայն Կիլիկիա-յում, ԺԴ-ԺԴ դարերում. Այժմ խափանված է. միայն Արևմտա-հայ կին զրողներից մեկը վերըցեց իր զրա այն անունը՝ իբրև ժածկանուն: Արևելահայոց մեջ չմտավ և չըր էլ կարող մտնել, որովհետեւ խառնվում է զիբիլ «աղբ» բառի հետ:

— 1. Սիպիի, քույրն է Կիպրոսի թագավորի. ամուսնացավ հայոց կեն Բ թագավորի հետ «1210 թ». (ավելին տես Զարեւ և 2) եկել էր Սելլկիա՝ 1230 թվին, տեսնելու համար իր աղջկան Զարեւին, որ Հեթում Ա թագավորի կինն էր.—Հեթ. Ժմնկ Ջեռ. Հայկպի, Ա. 353:

— 2. Սիլիփի, զուսար Հեթում Ա թագավորի և քույր Առն Գ-ի. ամուսնացավ 1254 թվին և եղավ կին Պետունդի Զ, որ Անտիոքի բրինձն էր և Տրապոլսի կոմսը. Մրանց զուստքն է Լուցիա: — Սալի՛ Զեռ. օշ. 98ա. ZAPh 1, 183. Պտմ. կիլ. 211. — Sebille' Միստան 79, 363. Շահազդի՛ Պտմ. պատկ. 119:

— 3. Սպիլ, գուստը Թէոդոս քահանայի և քույր Կոստանդին Հոփիսիմեցի քահանայի, որ Կիլիկիայում գրեց մի Աւտարան, 1269թ.—Ձեռ. վեհակ. Ա. 656:

— 4. Սիափիլ գուստը Աւոն Գ թագավորի, կրտսեր քույր
Զապլունի և Ֆիմիի. ծնվել է 1269 թ. (Զեռ. օշ. 99թ).—Յուլիկը
Ա. 180, Հայապ. 544.—Անշուշտ վաղամեսիկ եղավ 6—7 տարե-
կան հասակում, որովհետեւ ունինք դարձյալ նույնանուն՝

— 5. Սիպիլ դուսար Լեռն Գ թագավորի. ծնվեց 1276 թ.
իբրև երկվորյակ Սմբատի, որ է Սմբատ Գ թագավոր Կիլիկիոյ.
— Զեռ. օշ. 100ա:

— 6. Սիպիլ (*սեռ. Սպլի*). Լեռն Ե թագավորի թղթագեր
Վասիլ իշխանի կինն է. սրա կյանքը տես առանձին (1337 թ.).
— Շահագիզ, Պատմ. պատկ. 118:

— Ազելի ուշ հիշատակված է Հստիլ ձեռով (գրված երկու անդամ) 1516 թ.-Զեռ. Կես. ածած. 65թ.:

ՍԻԳՆԱՔՈՍ, ար. անյուշտ հունական անուն է. բայց իմ

ԱՆԽԵԿԱԾ ազրյուրներում չեմ գտնում: Մի անգամ հիշատակված է ժդղութեամ:

-- Սիդղաբս? սարկավագ, որդի Պապայի. մի խաչար է կանգնեցրել Մուզնիում 1280 թ.—Այստեղ 184.

— Սիս (միայն սեռ. Սսիթ ձևով). կինն է Արտաշրի, որ Օշական գյուղի տանըւաերն էր և մի այդի նվիրեց Եղիշաբեդ. վանքին 1191 թ. և մի այդի էլ Բագնայրի վանքին 1211 թ.— Այրարաս 199, Շիրակ 120.

ՍիւԱԿ, ար. ծագումն անհայտ է: (*Սրա հետ զործ չունի Ս. Գրքից Սիսակի, իր անուն Բարելոնի. հմմտ. նըևմ. իե, 26 շեւ թագաւորն Սիսակ արքցէ յիտ ամենացունա, նըեմ. ծա. 41 շիբարդ ի պարտութիւն մատնեցար, Սիսակի. երկու հատվածներն էլ պակասում են զարմանալի կերպով հունարենում, բայց կան երայական բնագրում, ուր համապատասխան բառն է՝ ՇՇ- Տեշակ. տես և Միտոք. Կա նաև Եղիպատցոց թագավոր Տիշակ, որ կողոպտեց Սոլոմոնի տաճարը՝ շուրջ 930 Ն. Բ. տես Wells, The Outline of History, հա. -1, էջ 200.—Այս բառը համարում են իրրե բանաստեղծական անուն, որ սմանք մեկնում են ուսուն կամ արքունիք իշխանիք Բ. Ա. Գրոց, Պայմա 1881, էջ 502).*

— 1. Սիսակ որդի Գեղամ նահապետի Հայկազանց. (ըստ Սիսական 17ա Ն. Ք. շ. 100 թ). իր քաղցր բարքի պատճառով կոչվել է աղօւ. իր անունից է ծագում Սիւթիք կամ Սիսական տեղանունը. իսկ իր մականունից՝ Ազուանիք-Խոր. Ա. Ժ. (Բ. ը). Ուխտ. Ա. Ժ. 85. Կթզ. ք. Սամ. անեց. 43. Վրդ. է. Օբբ. Պ. ՀԱՓ 1, 190.—սեռ. Սիսակայ՝ 85. Կթզ. ք. Ասոզ. Ա. և. Սագ. Բ. կ. հա. Մի. այրիք. 45. Սամ. անեց. 48. Վրդն. լո. 56. Օբբ. ա. բ. բ. Մին. համդ. 5.—Սիսակինանիք-Խոր. Ա. Ժ. Բ. կ. ը. Սամ. անեց. 48.—տուն Սիսակայ՝ Լաստ. ժա, էջ 47.—Սիսական (գունդ են) Խոր. Բ. ը. Կղկնտ. Ա. դ. Ասոզ. Ա. և.—ք Սիսականայ՝ Սագ. Բ. կ. հ.

— 2. Սիսակ Անձեւցի. «Երացյալ նախարարներից էր. մյուսների հետ հակառակ կանգնեց Վահան Մամիկոնեանին և մինչև անգամ ուզում էին նրա արշավանքը իւնգարել. Առեւս գյուղում պարագիլով դատարկցին չ-482 թ. — Ազգապ. 457. (Միալ է. ըստ Փարպ. տպ. 1904, էջ 127 հարդա. Ակնկի):

— 3. Սիսակ ձեռվ հիշված է մի անգամ էլ իր եղբար Սարքիսի հետ, իբր որդիք Շահանգուխտի, 1316 թվի մի կիսատ արձանագրության մեջ, որից ոչինչ չի հասկացվում. — Ազգագր. հանդ. Գ. 141.

— Սիսակ անունը հնում թեև գործածական չէր, (եղած ները կասկածելի են), բայց անցյալ դարում կենդանացավ իր բարեկամ անուն և այժմ էլ բավական տարածված է:

ՍԻՍԱԿԹԻՀԻՀԻ, իգ. <կազմված է նախորդ Սիսակ անունից՝ ունի մասնիկով: Այս անունով հիշատակվում է միայն Վահան Գողթնացի նահատակի («737 թ») կինը, որ տես Ալիշան, Յուշիկ Բ., 194.

† **ՍԻՍԹԱՆԴ,** իգ. <նախորդ Սիս բառից+հյ. քանզ: Հիշատակված է մի անգամ ժամանակակից:

— Սիսրանզ, գուստը Միսիթարի և քույր Խութլուրէկի և Թիրքէի, որոնք գրել ավին մի Աւետարան՝ Կարսի Գողիս գյուղում, 1297 թ.—Զեռ. Ագուլ.=Արբտ. 1911, 463.

***ՍԻՍԻԱՆՈՍ,** ար. <հուն. Σισίνγιος անունից. այս անունով Justi 304 հիշում է 10 անձ, զանազան ազգերից (բայց բարի ծագումը չի տալիս): Այդ անձերից ավելի նշանավոր է Սիսիննիս հույն պատրիարքը, որ հաջորդեց հայազդի Ատահկոս պատրիարքին, նատակ 426—427 թ. և իրեն էլ հաջորդեց Նեստոր (428—431 թ): Քիչ է գործածված մեր մեջ. եղածներն են՝

— 1. Սիսիննիս կամ Սիսիանոս, գլխավորներից մին էր 45 հայ նահատակների, որոնք նահատակվեցին Փոքր-Հայոց Նիկողոսի (այժմ Շապին-Գարանիսար) քաղաքում, իբր. 319 թ.—Աւգերեան, կիակ. վրք. որբ. Դ 107—133, և հատկապես էջ 128:

— 2. Սիսիանոս վարդապետ Սերանացի. փոքր մատենագիր ժԱ դարու. ունի Ներքոցեան, որ խոսել է Ս. Քառանից տոնի առթիվ՝ Սերանաիոյ Ս. Քառանից եկեղեցում. հրար. Սոփերք, ԺԲ. անունը հիշվում է ճակատում՝ սեռ. Սիսիանոս ձեռվ.՝ Աւգեր. կիակ. վրք. որբ. թ. 509, 511. Պարտկանոն շար. 68—71. Կոշվում է նաև Սիսիանոս, Սիսիան, նաև Ստեփանոս (այս վերջինը հայտնապես սիրալ). և համարվում է ըստ սմանց ասորի (Զարբ. Հին դպր. 605):

— 3. Սիսիանոս քահանա, իր որդի Յուսում քահանայի հետ միասին գրել ավին մի Աւետարան՝ Մատթէոս վարդապետին, Վայոց Ճորի Ազաւ անապատում, 1292 թ.—Եազրակ հանգ. 152:

— Նույնի կրօնատ ձեռն է Սիսիանոս, որ հիշված է 1742 թ. (Հաւաք. 51):— Դուցէ սրա հետ կարելի է կցել նաև Սանոս, որ վերը՝ էջ 395, գրինք Ալեքսիանոս անունից (տես անդ):

***ՍԻՍԻԼԱ,** իգ. <Փրանս. Cecile սրբունու անունով, որ մեծ հարգ ունի կաթոլիկ եկեղեցում և համարվում է երաժշտական պաշտպանը. Մի անգամ մեր մեջ հիշատակված ունինք՝

— Սիսիլա (Հոգով Սիսիլէն), գուստը պարու Յովհաննէսի՝ եղբոր խոջա Բաղդասարի, որ ստացավ մի Աւետարան (աեղն անհայտ)՝ ժԵ զար:— Տաշեան՝ Ծուց. 724:

ՏՌԱՅ (սեռ. ՏՌԱՅՈՅ), հայր Անտիպատրոս հայ իշխանի Տիրարացոց և Խալիբների. Փոքր հայքի թագավորն էր. ստիպվեց տեղի տալ Մեծն Միհրզատին և իր երկիրը հանձնեց նրան (Ն. Ք. 123—63). Բայց երբ Հովովմայեցիք հաղթեցին Սիրդատին, վերահաստատեցին Փոքր-Հայոց իշխանությունը՝ իրենց գերիշխանության տակ:— Սարաբսն [հայոց մասին], Երեան 1940, էջ 75 և Justi 304ա. Տաշեան, Հայ բնակ. Սև ծովէն մինչև Կարին, էջ 13:

***ՏԻՍԻԱԱԹՈՒՆ,** իգ. <վերի Սիս անունից+խարուն: Մի անգամ հիշված ունինք՝

— Սիսիանուն, կին Վասակի. միասին մի այգի են նվիրել Կողրի (Ղաղախ) Ս. Աստուածածին վանքին 1253 թ.—Արցախ, էջ 386:

***ՏԻՍՄՄԱՄ,** իգ. <վերի Սիս անունից+հյ. մամ ևմայր կամ ատառ: Մի անգամ հիշված է՝

— Սիսմամ, կին Խաչիղրայրի՝ որդւոյ Աստուածատուրի. տուն ու կալվածներ են նվիրել Բագնայրի վանքին:— Անթվական Արձ. Շիրակ 112:

***ՏԻՍՎԱՐԴ,** իգ. <վերի Սիս անունից+հյ. վարդ: Մի անգամ ունինք՝

— Սիսվարդ, կին Յովհաննէս քահանայի՝ որդւոյ Կոստանդին քահանայի Հոռմեանց. տներ է նվիրել Արջոյառիշ վանքին 1213 թ. և Բագնայրի վանքին՝ 1215 թ.—Արձ. Շիրակ 122, 121:

ՍԻՍԸ... (ձեռն ու սեռը անստույգ). գրված է սեռ. Սիսիան կամ Սէսամին. մերձավոր Խաչիղրայրի և նրա որդի Աւետարի, որոնք հող են նվիրել Հոռոմոսի վանքին 1201 թ.—Արձ. Շիրակ 23:

***ՏԻՏԻԻԱԱՆ,** իգ. ծագումը տես Սիրի, Արի+պրո. Խն. մի անգամ հիշված է 1711 թ. (Զամբր. 207):

ՍԻԾԻՄ(հոգով ասվում է Սիտիսն), ար. ծագութեան անհայտ երկու անդամ հիշված է 1587 թ.—Զեռ. Սիր.=ՀԱ 1925, էջ 260:

***ՍԻՌ**, ար. <ֆրանս. site տեղը, իշխանա բառից (որ կրծատված է լո. senior «երիցագույն, ծերազույն» բառից): Փոխառյալ է Կիլկիեան շրջանում. մեր մեջ իրեւ անձնանուն հիշված ունինք՝

— 1. Սիր, հիշված 1058 թ?—Զեռ. Սանտո. 2ա.

— 2. Սիր, երախտավոր Ս. Սիրնի (Երուսաղեմ). հայր Յէր Կոստանդի. հիշված է 1335 թ.—Զեռ. Վենետ. Բ. չ48:

+**ՍԻՐԱԴՅԵՂ**, ար. <հ. սեր+դեղ բառերից (իրը սիրոյ զարժան): Սիր անդամ հիշված է՝

— Սիրաղեղ, տանուտեր Նորդեղի կամ Նորագիւղի, հիշված 1465 թ.—Այրարատ 320, Նոտարք 221 (զրում է Սիրատեղ):

+**ՍԻՐԱԴՈՒԽԵՏ**, իգ. <հ. սեր+պր. մաստ «դուստր» բառերից. իրը նորակերտ անուն հիշում է Այբարատ 293ա (Այբարագույն Ներսիսեան +1887 թ.), նույն անունը մեջ զարից ավանդված է մեզ հետեւյալ ձեւով. Սիրուրուխը 1633 թ. (Զեռ. Հայէպի, Ա. 86), Սերիբաւը 1657 թ. (Զեռ. Դազեան, Բ. 33ը, ուր ասում է իր համար ուր և մ հօր կողմանէ ազգաւ հայ, ամուսին հոռմայեցոյց), Սիրիբաւը 1661 թ. (Զեռ. Վասպ. 920), Սիրիբաւը 1671 թ. (անդ 940). Բացի առաջինից, նացյալ բուլոր շրմ ձեւը ենթադրում են Սիրաբաւը կամ Սիրիբաւը: Հայտնի չէ թէ նախնական ձեռն է իրոք Սիրադուխւտ, որ ժողովրդական ստուգարանու թյամք զարձել է Սիրաբաւը («սիրոյ հմայական զիր») թի ընդհակառակը ուղիղն է Սիրաբաւը, որ գիտական ստուգարանությամբ վերածում ենք Սիրագուխւտ:

+**ՍԻՐԱԽԵԱԹՈՒՆ**, իգ. <հ. սեր-խարսն բառերից (իրը «սիրոյ արիին»): Հիշված է մի անդամ 1602 թ.—Այրարատ 31:

+**ՍԻՐԱԿԱՆ**, ար. և ից. <հ. սիրական «սիրելի» բառից, որի մզ. ձեռն է Սիրեկան). սրա համազորն է երր. Դաւիթ, որ նույնպես նշանակում է «սիրելի»: Իրեւ ար. հիշված է մեջ զար (Զեռ. ազուլ. 174), իրեւ իգ. հիշված է 1797 թ. (Զեռ. Ազուլ.=Արք. 1911, 121). հայտնի չէ թե անձւն է 1662 թ. (Թորոս ազր. Բ. 439). Այժմ գործածական է Կովկասում, իրը ար. և սրանից է Սիրականեան ազգանունը, որ հիշատակված է Պոլիտ 1838 թ. մի զամբանի վրա (Հայոց լեզ. պատմ. Բ. 477):

+**ՍԻՐԱՄԱՐԳ**, իգ. <հ. սիրամարգ թոշունի անունից. այս բառը ժողովրդական բարբառով զարձել է սինամատամ. իրը անձնանուն երկու ձեւերն ել զարծածված են. Սիրամարգ ձեզ

ավանդված է ԺԲ դարից մինչև մի դար և այժմ էլ կևնդանի է. իսկ երկրորդը տես Սինա ձեւի տակ:

— 1. Սիրամար (վերջի բաղաձայնը կրծատված), մի այդի է նվիրել Հաղբատին 1179 թ. կամ քիչ հետո.—Արձ. Երզնկեանց՝ Հնախ. տեղադր. 49:

— 2. Սիրամարգ, կին Մկրտիչի՝ եղբոր տանուտեր Յովհաննէսի, որ Աղթամարում գրել ավելց մի Աւետարան 1436 թ.—Զեռ. Վասպ. 373:

— 3. Սիրամարը, մեռել է Թաղվել Ամասիայի Ս. Նիկողայոս եկեղեցու բակում 1447 թ. Թում է իր տապանաքարը, որ ագուցված է նույն եկեղեցու պատին: Նրանից հետո մեռել է իր թռող՝ Խաթունիքաշ, որի արձանագրությունն էլ ավելացրել են նախորդի ծայրին՝ 1469 թ.: Այսպիս

ԱՅՍ Է ՃԱՊԱՆ ՍԻՐԱՄԱՐ
ՔԻՆ ԹԻ ԳՂՋ | ԵՒ ԻՐ ԹՈ
ՈՒՆ ԻԹ ՓԱՇԱԽԻՆ ԹՎ ԶՃԲ:

Այս անտիպա արձանագրությունը հաղորդեց ինձ Ամասիայից, Կարապեան Գաղպեան, 1912 տպր. 12. ասացին տողի վերջին բառը շատ էր ջարդված և զժվարաւթյամբ կարելի եղավ զուշակել:

— 4. Սիրամարգ, դուստր Յովհաննէսի և քույր Վարդան արեղայի, որ Կոտոց անապատում գրել ավելց մի Աւետարան, 1481 թ.—Զեռ. Վասպ. 488:

— 5. Սիրամարգ, կին Սուլթանի, մեծ մայր Եղիա Երևիքի, որ օրինակեց Աւետարանը՝ Քաջթաղուց Խողանավար զյուզում, 1490 թ.—Զեռ. Սեան. 5 թ:

— Ավելի ուշ հիշատակված ունինք Սիրամ կրծատ ձեռվ 1599 թ. (Զեռ. Վասպ. 756), Սիրամարգ 1647 թ. (Թորոս ազր. Ա. 220), 1676 թ. (Զեռ. Վասպ. 948), 1687 թ. (Զեռ. Թաւր. 24 թ), 1700 թ. (Զեռ. Ազուլ.=Արքտ. 1911, էջ 1003):

***ՍԻՐԱՄՄԻՐ**, ար. <ֆրանս. սիր (անս վերը Սիր) «իշխան» +արար. առ ամր «իշխան» հոմանիշներից բարդված, ինչպես անինք Սուլթանշահ, Շահամիր, Ազարեկ, Աղախան, Խանամիր ևն կրկնակ պատվանուններից կազմված անձնանունները: Հիշված է ԺԴ-ԺԶ զարերում:

— 1. Սիրամիր պարոն, հայր պարոն Սիմէանի, մի խաչքար են կանգնեցրել Երիմում, այժմ ազուցված է Նոր-Նախի-

ջեանի Ս. Հուսաւորիչ և կեղեցու պատին, 1431 թ.—Շահազիդ, Ազգագր. հանդ. է, 51:

— 2. Սիրամիր, որի եղբայրներն էլ կոչվում են Շահամիր, Ամիր, Գուլամիր, Սիրաւագ. հիշված են 1560 թ.—Տաշեան, Ցուց. 314:

— 3. Սիրամիր Պօյնուն (իմա պօյաճի «Ներկարար» Սիրամիր). քեզ հետո մազի գոռի (որ պետք է կարդալ մառչի)՝ Զեռ. Սեր.՝ ՀԱ. 1926, 339 (թվականն անհայտ):

— 4. Սիրամիր անթվ. է նաև Զեռ. Վենետ. Բ. 868:

†ՍԻՐԱՅ, իգ. <կրծատ ձեն է Սիրա- երկվանկով ոկավող մի անվան, ինչ. Սիրամարզ, Սիրանեյշ ևն. Նվաս գտնում ենք Սիրայ ձեռվ՝ անթվական մի հիշատակության մեջ, որ գրված է 1311 թից ուշ (Զեռ. Թաւը. 74թ), երկրորդ գտնում ենք Սիրայ խարուն ձեռվ՝ նույնպես անթվ. (Զեռ. Վասպ. 618): Հոդով ու նիւթ Սիրան 1588 թ. (Տաշեան, Ցուց. 796թ), Սիրայն 1649 թ. (Զեռ. Կես. սարգ. 13ա):

†ՍԻՐԱՆ, իգ. <կրծատ ձեն է Սիրանեյշ անվան. հիշատակված է ԺԴ—ԺԵ դարերում և զործածական է նաև այժմ:

— 1. Սիրան, մերձավոր Մարտիրոս գրի, որ Քաւուն միայնակացի համար արտապրեց Աւետարանը. 1330 թ.—Զեռ. Վենետ. Ա. 770:

— 2. Սիրան, մայր Յովհաննէս սարկավագի, որ հիշատակում է իրեն այն Աւետարանում, որ զնեց Մարտիրոս քահանան 1410 թ.—Զեռ. Վասպ. 164:

ՍԻՐԱՆԷԿՄ, որ և ՍԻՐԱՆՆՈՍ, ար. ծագումն ինձ անհայտ առաջին ձեփ վերջավորությունը Յովհաննէս, Վրբանի անունների նման է: Հիշատակված է նախ Ա դարում, ապա հանկարծ ԺԳ—ԺԵ դարերում:

— 1. Սիրինոս. որդի Արդար թագավորի, որ այլուստ հայտնի է Անանուն ձեռվ.—բց. ի Սիրինոսի՝ ZAPԻ 1, 216. տես Աթանան:

— 2. Սիրանես վարդապետ, Սիրանեց Տարսային իշխանի ծախոսվ մի եկեղեցի է կառուցել Նորավանքում, 1275 թ.—Արք. Սիսական 191:

— 3. Սիրանոս Վանեցի, ո՞չ թէ յոռի ազգաց կամ ի վառքարաց, այլ յոյժ գովելոց, յնտերելոց և յառաքինեաց, ի զարմէ բարի և պատուական երիցանց։ Հարչարվելով մահմեզու կաններից, ստիպվեց ուրանալ իր հավատքը «1403 թ».—Յայն.

յուլ. 10, Նոր վկ. 200 (այլ ձ. Սիրանոս), բայց այս երկու ձեռքից պետք է ընտրել առաջինը, որովհետեւ հեղինակը բառախաղ-ղով ասում է. «Սիրանոս, որ որդի սիրական թելիքարայ եղկ, զՔրիստոս ուրացաւ և տաճկացաւ»:

— 4. Սիրանես (սեռ. Սիրանիսայ), հիշված է 1557 թ.—Զեռ. Դադեան, Ա. 8ա. (քիչ ցածը դարձյալ՝ Սիրանիսին):

— 5. Սիրանես, հիշված 1619 թ.—Զեռ. Վենետ. Ա. 722:

— 6. Սիրանոս, հիշված է 1389 թից ուշ գրված անթվական մի հիշատակարանում.—Զեռ. Ազուլ.=Արքտ. 1911, 760:

— 7. Սիրանես, հիշված է Արատէսի վանքի գանգակատան կամարից ընկած մի քարի վրա (Արքտ. 1888, էջ 768).—անթվական, բայց բավական հին:

†ՍԻՐԱՆՈՅԾԸ, իգ. <հյ. սեր և անօյշ բառերից. կրծատ ձեռիրն էն Սիրան, Սիրուշ (տես և Սիրան, Սիրայ), Սրանք հասցնում են մեզ ԺԴ—ԺԵ դարերը, Ավանդված չէ Սիրանեյշ ձեր, որ սակայն այժմ շատ սիրված և շատ տարածված կենդանի հայկական անուն է: Խսկ նրա կրծատ ձեր (Սիրուշ) զուգաղիպօրեն միայն նման է պրս. ՀՅՀ ՏԻՐՈՒ ԵՒՐԻՆԱՅԻՆ հրեշտակ» բառին:

Սիրապ տես Սրբապիս:

*ՍԻՐԱՆԸՆ, ար. <սիր և Անան բառերից. տիտղոսը միացած անվան հետ. ինչպես՝ Պարոնլոյս կամ Լոյօպարն. տես Անան:

— 1. Սիրատան ոմն, օգնեց զնելու մի Աւետարան 1375 թ.

— Տաշեան: Ցուց. 277 ա:

— 2. Սիրատան, որդի Յովհաննէս. Կեսարիոյ Մանդիսոն գյուղում Յովհաննէս արեղային գրել ավեց Յայսմաւուրքը 1495 թ.—Արպօյաճեան, Պատմ. հայ Կես. Բ. 1850:

†ՍԻՐԱՆԾԻԿԻՆ, իգ. <հյ. սեր և տիկին բառերից. ունինք միայն մի անգամ հիշված ԺԴ դարից՝

— որբատիկին, կին Պարոնշահի և տատ Խոսրովշահի, որ ստացավ Բարերդում մի հին Աւետարան և նորոգել տվեց 1346 թ.—ՀԱ. 1926, էջ 34:

- 513. Ստեփաննոս Հորբանոցի, մին է վեց միաբաններից Գաւաշի Ս. Վարդան զսրավար վերաշինված վանքի 1444 թ.—Զեռ. Վասպ. 389, Նօտարք 46.
- 514. Ստեփաննոս «Հայրապետ», միաբան Ոստանի Գալիք վանից. արդեն մեռած էր 1444 թվին.—Զեռ. Նոր-Բայազ. 40 թ.
- 515. Ստեփաննոս կամ Մելիք-Ստեփան, հայր Զաքարիա († 1464) կաթողիկոսի Ազթամարդի. հիշված է մի արձանագրության մեջ՝ 1444 թ.—Ակինեան՝ Գունդիրք 86, 108.
- 516. Ստեփաննոս կրօնավոր, միաբան Ոստանի Գալիք վանից. պատճառ եղավ, որ Կարապետ քահանան օրինակի Գանձարանը, 1444 թ.—Զեռ. Նոր-Բայազ. 40 թ.
- 517. Ստեփաննոս հայր Թուրքանդի՝ կնոջ Հաղարծինի, որ ելաբում գրել ավեց մի Յայսմաւուրք, 1445 թ.—Թարոս ազգ. թ. 306.
- 518. Ստեփաննոս քահանա, մի Աւետարաննվիրեց Սորի գյուղի Ս. Քրիստոֆոր եկեղեցուն, 1445 թ.—Նօտարք 145.
- 519. Ստեփաննոս կրօնավոր, միաբան Գամաղելիի վանքի 1445 թ.—Նօտարք 145.
- 520. Ստեփաննոս, որդի Գորդի Մելիքի, որ էր իշխան Ազիսվետի. Թովմա Մեծովեցի պատժագրի եղբորոքին է, որ հիշված է 1445 թ.—Նօտարք 147.
- 521. Ստեփաննոս կրօնավոր, որդի Ամիրմէմիքի, որ էր

- ուսուցիչ Յովհաննէս քահանայի՝ որդուոյ Գորդի Մելիքի՝ եղբոր Թովմա Մեծովեցի պատժագրի. իշշված է 1445 թ.—Նօտարք 147.
- 522. Ստեփաննոս, այլ որդի նոոյն Ամիրմէմիքի. արդեն մեռած էր 1445 թ.—Նօտարք 147.
- 523. Ստեփաննոս Գաւաշեցի, միաբան Ռշտունեաց գավառի Ս. Յակով վանքի 1445 թ.—Նօտարք 139.
- 524. Ստեփաննոս, որդի Հայրապետ քահանայի և Նոռի խաթունի. գրիչ. Բաղէշում օրինակեց Յայսմաւուրքը Մկրտիչ կրօնավորի պատվերով 1446 թ.—Նօտարք 151—2.
- 525. Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց, որդի Խւանէի՝ տեառն Որոտան. հիշված է 1447 թ.—Միական 218 ա.
- 526. Ստեփաննոս արքեպիսկոպոս Գողթան, որդի Ազպւղայի. մայրն է Խուաննդ խաթուն. հաջորդեց իր քերի Տէրունական եպիսկոպոսին. գրել ավեց Մատթէոս երեցին մի ընդարձակ Տօնական, Ազուլիս 1447 թ.—Զեռ. Թաւր. 120—3, Հացունի, Կարեռ խնդ. 269.
- 527. Ստեփաննոս, որի անունով մի արձանագրություն կա Ռշտունեաց գավառի Գանձակ գյուղի ծովափի Ս. Գէւրդ եկեղեցու բարավորի վրա, Մկրտիչ անուն անձի հետ՝ 1447 թ.—Նօտարք 155.
- 528. Ստեփաննոս, հայր Թովմայի, Գրիգորի և Ղաղարի, որոնք Աղնայ գյուղից էին և Սոկաց Փառավանք գյուղում, Բարյէլ գրչին զրել ավեց մի Աւետարան, 1447 թ.—Զեռ. Վասպ. 397, 400, Նօտարք 156.
- 529. Ստեփաննոս գրիչ. օրինակեց Հարանց վարքը 1449 թ. (Զեռ. Վենետ. № 800).—անև Ծւագր. ներած. էջ ծր.
- 530. Ստեփաննոս, որդի Խաչատուրի և եղբայր Յովսէփ արեղայի, որ Մկրտիչ Նաղաշից ստացավ մի Աստուածաշունչ 1449 թ. երբ Ստեփանոսը մեռած էր.—Զեռ. Վենետ. Ա. 115.
- 531—2. Ստեփաննոս կրօնավոր, երկու համանուն միաբաններ ելաբի Ս. Յովհաննէս եկեղեցու, 1450 թ.—Նօտարք 164.
- 533. Ստեփաննոս կրօնավոր. գրիչ. մահապահ Գօնոսի պատվերով օրինակեց Աւետարանը՝ Ձերմանորի Փոքր Ակոսի վանքում, 1451 թ.—Նօտարք 168.
- 534. Ստեփաննոս քահանա, որդի Յովհաննէս քահանայի և եղբայր Մավսէս արեղայի, որ Պղնձայոց աւագ անապատում օրինակեց Աւետարանը 1451 թ.—Զեռ. Վասպ. 408.
- 535. Ստեփաննոս, կին է Մարթա. ճնողներն են Փա-

շայի, որ Վանսւմ, իր նահատակ որդու և իր կարուամահ ամսունու հիշատակին մի Աւետարան գրել տվեց Վան 1451 թ.—Զեռ. Վասպ. 411:

— 536. Ստեփանոս, հայր Կարապետ Մանկարօնի՝ փեսայի Փաշայ տիկնոջ, որ իր որդիների և իր ամսունու հիշատակին մի Աւետարան գրել տվեց Վանսւմ, 1451 թ.—Զեռ. Վասպ. 412:

— 537. Ստեփաննոս, որ կատարեցաւ յանօրինաց, հայր մահաեսի Պօղոսի, որ Ձերժաձորի Փոքր Ազոռի վանքում օրինակել տվեց Աւետարանը 1451 թ.—Նոտարք 168:

— 538. Ստեփաննոս քահանա, կինն է Ազոռի խաթուն (ԽՅ). ծնողներն են Մելիք խաթունի, որ Վարդան քահանային գրել տվեց մի Աւետարան, 1453 թ.—Նոտարք 171:

— 539. Ստեփաննոս գրիչ օրինակել է մի Աւետարան տանուտեր Խաչատուրի համար 1453 թ. (ուրիշ ոչինչ հայտնի չէ):—Զեռ. Վասպ. 419:

— 540. Ստեփաննոս քահանա, հայր Կարապետ գրչի, որ Ցովանէս տանուախրոջ համար գրեց մի Ճառընակիր, Վանսւմ, 1458 թվից թիշ առաջ.—Հրաբ. Ազար. 1909 թ. յաջ. էջ ծ:

— 541. Ստեփաննոս քահանա, Բաղէշում, Թորոս Դրազարկցու գրած ընտիր օրինակից արտադրել է Աւետարանը, 1456 թ.—Թորոս ազր. թ. 445>Նոտարք 174:

— 542—3. Ստեփաննոս, երկու համանուն միարաններ Վարդայ վանքի 1454 թ.—Նոտարք 176:

— 544. Ստեփաննոս, հայր Ատոմ քահանայի, որ Ազթամարում Գրիգոր քահանային գրել տվեց մի Աւետարան, 1454 թ.—Զեռ. Բուլղ. աշխ. 1937, 580:

— 545. Ստեփաննոս, պարոն, մեծ հայր Խաչատուր քահանայի, որ իր որդու՝ Դաւիթ քահանայի համար օրինակեց Աւետարանը՝ Արձէ, 1455 թ.—Նոտարք 177:

— 546. Ստեփաննոս, միարան Ս. Փրկիչ վանքի, գնում էր իր հոգեոր եղբայր Թագէսս սարկավագին, երբ ոտ օրինակում էր Աւետարանը Երուսաղէմի Ս. Սորոս վանքում, 1455 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 59.

— 547. Ստեփաննոս, հանգուցյալ որդի Թումայի՝ եղբայր տանուտեր Մանկաւագի, որ Սցի գյուղում գնեց մի Աւետարան, 1455 թ.—Զեռ. Վեհետ. Ա. 582:

— 548. Ստեփաննոս, միարան Վերի Նորավանից 1456 թ.—Հրաբ. Ազար. 1900 թ. յաջ. էջ եզ, Զարք. Բրդմ. 787:

— 549. Ստեփաննոս, հիջում է իր միարանակիցների հետ իրեւ միարան մի վանքի, որի անունը չէ հիշատակված, 1456 թ.—Զեռ. Վասպ. 425:

— 550. Ստեփաննոս, իր միարանակիցների հետ հիջում է ինտեն նույն վանքի, որի անունը չէ հիշատակված, 1456 թ.—Զեռ. Վասպ. 425:

— 551. Ստեփաննոս Ղարիպշահ, մահաեսի, որդի Աստուածառուրի, մայրն է Խաթունմելիք. եղբայրներն են Ազատշահ, Խուզարազզ սարկավագ և եղբայր. որդիներն են Փալոչ և Զաքոր (թէ՞ որանք Ստեփաննոսի մորաքրոջ՝ Գոհարմելէքի որդիներն են), չեղ ու բարեպաշտ մարդ էր, երբ Քուրզ Հասանը Սշոյ զաշտը ավերեց և շատ գերի ասրագ, Ստեփաննոսը բաշտեց իր ամբողջ հարաւությունը և գերիներին փրկանքով պատեց, Եկեղեցու համար զնել է շատ սպասներ և թանկապին դրթիր: Խեքն է որ Լիմ կզզում Ղաղար գրչին գրել տվեց մի Յայումաւորք, որ շարունակվեց Սուլիարայ և Արգելանի վաճքերում, ոկնելով 1452 թ. և վերջացավ 1457 թ.—Զեռ. Թաւր. 102—5.

— 552. Ստեփաննոս որդի Ազերի. մեսել է 1458 թ. ավելին տես Փաշամելէք:—Զեռ. Վասպ. 426, 428, 431:

— 553. Ստեփաննոս որդի Ֆրիզորի (1458 թ.) տես Փաշամելէք:

— 554. Ստեփաննոս գրիչ, օրինակել է մի Աւետարան՝ մահաեսի Աստուածատուրի համար, Շեղասուա կոչված վայրում, 1459 թ.—Զեռ. Վասպ. 432 (չի զնում հիշատակարանը):—Կարծեմ գրիպակ է և պետք է կարդալ նդրդուտ:

— 555. Ստեփաննոս եղիսկոպոս Ս. Վարդանայ վանքի 1460 թ.—Նոտարք 197, Զեռ. Վասպ. 434:

— 556. Ստեփաննոս արեղա, միարան նույն վանքի 1460 թ.—Նոտարք 197, Զեռ. Վասպ. 434:

— 557. Ստեփաննոս Արծեցի, արեղա, հիշատակագիր 1460 թ.—Ազգապ. 2163.—Նույն է Խ 560:

— 558. Ստեփան, որդի Հալիմիաթունի, ուստի և թռ Թումայի, որ Ազթամարում գրել տվեց մի Աւետարան, 1460 թ.—Զեռ. Վասպ. 433:

— 559. Ստեփաննոս կրօնավոր, որդի Գուրջերէկի և Էմախութունի, եղբայր Ներսէս արեղայի, որ Ազթամարում, Թումայի համար մի Աւետարան գրեց 1460 թ.—Զեռ. Վասպ. 434, 437:

— 560. Ստեփաննոս միակեց, Արծեցում Միքայէլ քահա-

Նային գրել ավեց մի Աւետարան և նվիրեց Հաւասաւոր վանքին (Ս. Գէորգ), 1400 թ.—Նօտարք 196.—Նույն է թ. 557.

— 561. Ստեփանենոց, գրել ավեց մի Աւետարան Վարդան արեգային, Ազջոց վանքում և նվիրեց Գառնիի կաթուղիկէ եկեղեցուն, 1400 թ.—Նօտարք 196.

— 562. Ստեփանենոց, կինն է Մելիք. ճնողներն են Վարդան գրչի, որ Կողուց վանքում օրինակեց Աւետարանը 1401 թ.—Նօտարք 198.

— 563. Ստեփանենոց արեգա, գրիչ. օրինակել է Ռամզիքը (կախարդական ընդարձակ մի հատոր), 1401 թ.—Զեռ. Դադեան, Ա. 108 թ.

— 564. Ստեփանենոց քահանա, հայր Ներսէս եպիսկոպոսի, որ Տիրելիում, Զաքարիա քահանային գրել ավեց մի Աւետարան, 1402 թ.—Սմբատեանց, Գեղարքունիք 51.

— 565. Ստեփանենոց վարդապետ, մականունն է Յալտկ. սպիտակ բաւով ծեփեց ու նորոգեց Կողուցի վանքը 1402 թ.—Նօտարք 207. թվի թե սրա հետ նույն է՝

— 566. Ստեփանենոց վարդապետ, որ է հոգեոր հայր մեր (Կողուց անապատի), և խրատիչ ամենայն բարութեանց, որ և զօղուան քարոզեաց ի գեշերի և ի ցերեկի մեզ, և է փիլիսոփայ (երաժիշտ) երիցական արենատի, և ծաղիկ ժամատեղաց. և է գիտակ ամենայն հին և նոր կտակարանաց աստուածային դրոց գիտութեան, որ յար և նման է վարժապետին իւրոյ Թումայ վարդապետին (1402 թ).—Նօտարք 208.

— 567—8. Ստեփանոս, երկու համանուն որդիք Աստուածատուրի (առաջինը մեռած), որ Շշտունեաց Բերդանոր վանքում գրել ավեց մի Աւետարան 1403 թ.—Զեռ. Վասպ. 443.

— 569. Ստեփանոս, որդի Հաղպարբէկի և եղբայր Կիրակոս Սարգիսու, որ զին միջնորդ եղագ տանուտէր Եղիշանի և. Յովհաննէս գրչի միջն, Արծէկ 1403 թ. սպանվեց անօրեններից.—Զեռ. Վենետ. Ա. 621.

— 570. Ստեփանոս, հայր տանուտէր Եղիշանի, որ Արծէկում գրել ավեց մի Աւետարան, 1403 թ.—Զեռ. Վենետ. Ա. 620.

— 571. Ստեփանոս գրիչ. Աւագ վանքում օրինակել է Գր. Նաղիանզացու Աստուածարանութիւնը և Կիւրզի Աղեքունդ-բացւոյ Պարապմանց գիրքը 1403 թ.—Զեռ. Կարին. 6:

— 572. Ստեփանոս, հայր Խոնձայի՝ կնոջ տանուտէր Եղիշ-

շահի, որ Արծէկում գրել ավեց մի Աւետարան, 1403 թ.—Զեռ. Վենետ. Ա. 620.

— 573. Ստեփանենոց եպիսկոպոս, միարան Կորձեան զավապիք, ուր օրինակեց Աւետարանը 1404 թ.—Թորոս Թ. 341, Նօտարք 218.

— 574. Ստեփանենոց եպիսկոպոս Սիւնեաց, որդի հւանէ Որոտնեցու, Հրշված. 1404 թ.—Սիսական 21 ա:

— 575. Ստեփանենոց, արքեպիսկոպոս Թադէոս Առաքեալի վանքի, 1404 թ.—Սմբատեանց, Գեղարքունիք 302.

— 576. Ստեփանենոց, միարան Ցովհաննավանքի 1404 թ.—Այրարատ 172.

— 577. Ստեփանենոց արքեպիսկոպոս, վանահայր Սաղիանը՝ 1404 թ.—Սմբատեանց, Սաղիան 31.

— 578. Ստեփանենոց արեգա, գրիչ. Հայոց Բառում, Դանիէլ վարդապետի խնդրանոք գրեց մի ձաշոց, 1404 թ.—Զեռ. Սևան. 10 թ, Սմբատեանց, Գեղարքունիք 403.

— 579. Ստեփանենոց Զաշկածացի. գրիչ. օրինակել է Աւագ վանքում մի Ժողովածու, 1404. թ.—Զեռ. Գետերը. (ՀԱ 1892, 115 թ, 116 ար.)

— 580—1. Ստեփանենոց, երկու համանուն քահանաներ Վանի Պողոս-Գետերը եկեղեցու, 1405 թ.—Նօտարք 222.

— 582. Ստեփանենոց քահանա, որդի Մանուէլ քահանայի. գրել ավեց մի ձաշոց Ցովհաննէս գրչին, Հերմոնի վանքում, 1405 թ.—Սմբատեանց, Գեղարքունիք 403.

— 583. Ստեփանենոց քահանա, հայր Մատթէոս քահանայի, որ Անաւարդայում Հայրապետ եպիսկոպոսին գրել ավեց մի ձաշոց, 1406 թ.—Զեռ. Հալէպի, Ա. 235 թ.

— 584. Ստեփանենոց ճգնավոր, միարան Ասրեզի վանքի, 1406 թ.—Նօտարք 225.

— 585. Ստեփանենոց, անտես նույն վանքի, 1406 թ.—Նօտարք 225.

— 586. Ստեփանենոց, հայր Սալուկ իսթունի, որ Հայրապետ քահանային գրել ավեց մի Մաշտաց, 1406 թ.—Թորոս ազր. Ա. 232, թ. 337.

— 587. Ստեփանենոց վարդապետ, առաջնորդ այս հաւանզի (թի հաւանզի), 1406թ.—Թորոս ազր. Ա. 232, թ. 337.

— 588. Ստեփանենոց քահանա, գրիչ. օրինակել է «Ճիրք առեղապիտութեան» 1406 թ.—Սմբատեանց՝ Երնջակ 183.

— 589. Ստեփաննոս կրոնավոր, որդի Յովաննէսի. մայրն է Հիրիքայ. Եղբայրն է Սահակ. Տարօնի Եղերգում վանքում, Յովաննէս արեղայի պատվերով օրինակեց Աւետարանը 1463 թ.—Նոտարք 215. Ավելի ուշ, նույն վանքում օրինակել է Դանձարանը՝ 1466 թ.—Նոտարք 227:

— 590. Ստեփաննոս եղիսկոպոս Երկրին Գեղամայ, հիշված 1465 թ. (Միսական 35), որի հետ նույն են Ստեփաննոս եղիսկոպոս «Երկրին Գեղամայ» ժե դարի կեսին (Միսական 523) և Ստեփաննոս եղիսկոպոս զաւասին Գեղարքունիքաց՝ ժե դար (Զեն-Սեան. 19):

— 591. Ստեփաննոս Շաւարցի, կաթուղիկոս Սոսյ, հիշված է մի ճաշոցի հիշատակարանում 1466 թ. (Զեռ. Հալէպի, Ա. 236 ա) և Ստեփաննոս կաթուղիկոս Սոսյ՝ հիշված մի Յայսմաւուրքի իշշատակարանում 1467 թ.—Բակուրան, Կիպրոս կղ. 56:

— 592. Ստեփաննոս եղիսկոպոս, առաջնորդ Երևազի վանքինույն վանքում, Գրիգոր արեղայի համար օրինակեց Աւետարանը 1467 թ.—Զեռ. Վասպ. 448:—Զարմանալի է, որ վանքի առաջնորդ եղիսկոպոսը իր միարանիներից մեկի համար Աւետարան է արտադրում: Բայց ավելի զարմանալի է այն, որ Զեռ. Սեր. (տես Խ 593/4) և հայտնում է թե նույն 1467 թվին, նույն Կիրքի վանքում Ստեփաննոս գրիչը արտադրում է մի Աւետարան, բայց այս անդամ Սահակ երեցի համար և Ստեփաննոսը պարզ գրիչ է, իսկ Ստեփաննոս եղիսկոպոսը առաջնորդ: Սրանցից մըն է հիշատ:

— 593. Ստեփաննոս առաջնորդ Գիւրզի վանուց, 1467 թ.—Զեռ. Սեր.-ՀԱ 1925, 257:

— 594. Ստեփաննոս գրիչ. Գիւրզի, վանքում, Սահակ երեցի պատվերով օրինակեց Աւետարանը 1467 թ.—Զեռ. Սեր.-ՀԱ 1925, 257:

— 595. Ստեփաննոս, որդի Զանիրէկի և հանգուցյալ եղբայր Կիրակոս Զօշկանց երեցի, որ օրինակեց Ճառընակը Աղքամարում 1467 թ.—Նոտարք 230:

— 596. Ստեփաննոս եղիսկոպոս, առաջնորդ Մենծեկերտ վագոսի Միրունքար անապատի 1468 թ.—Թորոս ազգ. Բ. 378:

— 597. Ստեփաննոս քահանա, որդի Ամերի. Հերմանի վանքում, Անանիս արեղային գրել ավեց մի Աւետարան, 1469 թ.—Զեռ. Թաւր. 132 թ:

— 598. Ստեփաննոս քահանա, հայր Գրիգոր քահանայի, որ

Տայշաղ դյուղում կազմեց ու ծաղկեց Յովիաննէս քահանայի Աւետարանը 1469 թ.—Զեռ. Սեր.-ՀԱ 1925, 259:—Հմմտ. Ա. 503, Վենետ. թ. 1114:

— 599. Ստեփաննոս քահանա Բիւրականի, 1469 թ.—Զեռ.

Վենետ. թ. 1114:

— 600. Ստեփաննոս, հայրապետ Տիւրիկի Վաւարք դյուղի Աստուածածին վանքի, գրիչ. նույն վանքում, Նորմանուկի պատվերով արտապրեց Աւետարանը, 1469 թ.—Զեռ. Վենետ. Ա. 751:—Թորոս ազգ. Բ. 363:—Հմմտ. Ա. 618:

— 601. Ստեփաննոս, որդի Նորմանուկի, որ Տիւրիկի Վաւարք դյուղում գրել ավեց մի Աւետարան, 1469 թ.—Զեռ. Վենետ. Ա. 752:—Թորոս ազգ. Բ. 363:

— 602. Ստեփաննոս, միարան Կիպանի Գամաղիէլ վանքի, 1468—9 թ.—Զեռ. Վասպ. 452, 455:

— 603. Ստեփաննոս, կինն է Եղապել, Տնողներն են Մարգարտիկ՝ կնոջ տանուտեր Առաքելի, որ գրել ավեց մի Աւետարան՝ Կիպան 1469 թ.—Զեռ. Վասպ. 453:

— 604. Ստեփաննոս արենցիսկոպոս, մականուն Գողալ (գեղեցիկ). Իրը առաջնորդ Սալնապատի վանքի հիշված է 1457 թ. (Նոտարք 186). Որա քրոջ որդին է Յովիաննէս կրնավորը, որ նեց մի հին Շարակնոց և նորոգել ավեց 1465 թ. (Rapport Belgique 145). Ստեփաննոսը իրեւ առաջնորդ հիշված է նաև 1470 թ. (Զեռ. Վասպ. 460):

— 605. Ստեփաննոս, որդի Թորոսի և Եղբայր Կիրակոս կրոնավորի, որ եկեղեց զավատի Կայիփոսի վանքում գրել ավեց մի Սաղմոս, 1470 թ.—Թորոս ազգ. Բ. 305:

— 606. Ստեփաննոս մանուկ Կոստանդնուպոլսեցի. Խահապակեց հավատքի համար «1471 թ».—Զամշ. Գ. 515> Նոր գկ. 305, 727—8 (որի մասունքը իրը թե պահպամ է Վիեննայի Ս. Ստեփաննոս հոյակապ Մայր Եկեղեցում):

— 607. Ստեփաննոս մահաեսի. գրիչ. օրինակել է Աւետարանը 1471 թվին.—Զեռ. Կարին. 18:

— 608. Ստեփաննոս, հայր Թումա կրոնավորի. Երկուսն էլ մերձավոր Փաշայի, որ Թովմա առաքյալի վանքում գրել ավեց Աւետարանը 1471 թ.—Զեռ. Վասպ. 463:

— 609. Ստեփաննոս, շինեց Աստերում Ս. Աստուածածին եկեղեցին՝ 1472 թ.—Ակինեան՝ Գւղնդիրք 117:

— 610. Ստեփաննոս վարդապետ, ուսուցիչ էր Եղղնկայի Կայփոսի վանքում, 1473 թ.—Թորոս ազգ. Բ. 328:

— 611. Ստեփանոս, որդի Մկրտչի և եղբայր ուս Մարտիքոսի, որ Բերգելում գրել տվեց մի Աւետարան 1473 թ.—Զեռ. Վասպ. 467:

— 612. Ստեփանոս, հայրն է Կարապետ Վարդապետ Բաղիշեցու (Ճն. շուրջ 1475 թ.), որ էր գրիչ, տաղասաց, ապա և առաջնորդ Մշտի Առաքելոց վանքի—Ակինեան, Մտան. հետազ. Դ. 311, ՀԱ 1937, 320:

— 613. Ստեփանոս, հայր Վարդանի և պապ Եղիշահի, որ ստացավ մի Աւետարան, 1475 թ.—Զեռ. Վասպ. 473:

— 614. Ստեփանոս, եղբայր Եղիշապարի և հորեղբայր Գրիգոր Կրոնավորի, որ Արծէկում, Ղաղար քահանային գրել տվեց մի Յայամառուրք, 1475 թ.—Զեռ. Մալն. 36:

— 615. Ստեփանոսու արեգա, եղբայրն է Վայոց Ձորի Յովհաննէս արքեպիսկոպոսի և թոռն մեծին Պոօշի. հիշված է 1475—8 թ.—Կարապետ եպու.՝ Դօփեանք 94:

— 616. Ստեփանոս Դոնիկ, գրել է տվել մի Աւետարան, 1477 թ.—Զեռ. Սեր. —ՀԱ 1925, 261:

— 617. Ստեփանոս Կրոնավոր, հորեղբայր Մելքիսեդ գրչի, որ Հայէպում, Ժահտեսի Ֆարանձի համար օրինակեց Աւետարանը 1478 թ.—Զեռ. Հայէպի, Ա. 96:

— 618. Ստեփանոս Վարդապետ առաջնորդ Տիւրիկի՝ 1480 թ.—Թորոս աղբ. Ա. 231:—Հմմտ. № 600:

— 619. Ստեփանոս Եպիսկոպոս, գրիչ. օրինակեց Աւետարանը՝ ի յիշատակ Գրիգորին աւագ սարկաւագի և նվիրեց նրից մանկանց եկեղեցուն, 1480 թ.—Զեռ. Կես. արդ. 11 ա:

— 620. Ստեփանոս Կրոնավոր, հոգևոր. Եղբայր Խաչատուրի, որին օգնում էր թուղթ կոկելով, երբ նա օրինակում էր Աւետարանը Կոռոց անապատում, 1481 թ.—Զեռ. Վասպ. 488:

— 621. Ստեփանոս աշակերտ Տէր Յովհաննէ Նազաշի, որին օգնեց արտագրելու համար ծաշոցը՝ Կեսարիայում 1481 թ.—Ալղօյաճեան, Պատմ. հայ Կես. Բ. 1848:

— 622. Ստեփանոս արեգա, գասավար, միարան Բուրբիկը անապատի 1482 թ.—Խաղբակեանք 236:

— 623. Ստեփանոս Եպիսկոպոս, որ Յովհաննէս է կաթուղիսը հետ գնացել էր Կամենից 1485 թ.—Ալիշան՝ Կամենից, էջ 135:

— 624. Ստեփանոս, որդի Ռոտանի քահանա Ատում գիլիսքանի (երաժիշտ), 1486 թ.—Զեռ. Վասպ. 502:

625. Ստեփանոս արքեպիսկոպոս Տաթեկի, յազատ առանձ, հզրուրողի և հաջորդ Նմաւոն արքեպիսկոպոսի Տաթեկի, Մի աղքարկած լինելով՝ Թաւրիզի աթարէկ Սոփի Խալիլի վրիժառության զոհ գարձավ, Խալիլը խարդախությամբ հրավիրեց նրան մոտ և առաջարկեց հավատքը ուրանալ. Մերժում ստանալով, քեռորդի հպիսկոպոսին խաչելով և մորեղբարբարզի արեղասին 5 տարի չարաշար տանջեց, բայց հետո իշխանությունը միշտարի հետո ուժտաք զնաց Երուսաղէմ և Տաթէ վերագրածին վախճանվեց («1478 թ»), Ստեփանոս 5 տարի չարաշար տանջեց, բայց հետո իշխանությունը արձակությամբ ազատ արձակեց («1483 թ»), Ստեփանոսը միշտարի հետո ուժտաք զնաց Երուսաղէմ և Տաթէ վերագրածին վախճանվեց «1485 թ»:— Նոր վկ. 313—9, Աղպապ. 2198, Սիսական 21 ա, 528 (գնում է 1453 թ):

— 626. Ստեփանոս գրիչ, Արծէկում, Միքանաւոր Ս. Աստածածին վանքում, ի հիշատակ Մուրադի գրել է մի Աւետարան, 1486 թ.—Զեռ. Վասպ. 499—500:

— 627. Ստեփան Եպիսկոպոս, առաջնորդ Կեսարիայ Ս. Գր. Նիւսացու վանքի, 1486 թ.—Ալղօյաճեան, Պատմ. հայ Կես. Բ. էջ 1849:

— 628. Ստեփանոս, հայր Մովսէս արեգայի, որ Բարերդի Անլոց վանքում օրինակեց Աւետարանը, 1486 թ.—«Եջմիածին» 1944, էջ 36 թ:

— 629. Ստեփանոս, որդի Երկիրի և Եղբայր Չաքարայ արեգայի, որ Յակոբ քահանայից զնեց մի Շարակնց, Երզնկայձև, 1487 թ.—Զեռ. Հայէպի, Ա. 27 ար:

— 630. Ստեփանոս մերձավոր Աստուածատուրի, որ գնեց մի հին Աւետարան 1488 թ.—Զեռ. Վենետ. Ա. 492:

— 631. Ստեփանոս, որդի Յովհաննէս քահանայի, որ նրա համար օրինակել է ավել Աւետարանը Սարգիս գրչին, Բերկիրի Ասեղս գյուղում, 1488 թ.—Զեռ. Վասպ. 508—9:

— 632. Ստեփանոս Սարածորեցի, կաթուղիկոս Սոի «1477—1488 թ»: հաջորդել է Կարապետ Եւգոնիքացուն՝ ըստ Աղպապ. 2209, (իսկ ըստ Սիսուան 218 Ստեփանոս ի Սարածորոյ նասել է 1449 թ. իրեր հաջորդ Կարապետ Սուեցու և իրեն էլ հաջորդել է Յովհաննէս Ա. Անտիռքացի 1474 թ):

— 633. Ստեփանոս նորընծայ կրոնավոր Գողթան Բուտայ անապատում 1489 թ.—Մարտակեանց՝ Երնջակ 276:

— 634. Ստեփանոս Կրոնավոր, որդի Հոռմշահի. իր Եղբայր

Սարգիս կրոնավորի հետ միասին շինեցին Ա. Փեկիչը (Աղթամար), Ստեփանոս Դ կաթողիկոսի («1465—1489 թ») ժամանակի՝ Հաւաք. 43:

— 635. Ստեփանոս Դ կաթողիկոս Աղթամարի «1463—1489 թ» (կոչված է Մղայ 1488 թ. Զեռ. Վասպ. 510). հաջորդեց Զաքարիա Գ կաթողիկոսին, որի հորեղբար՝ Դուրջիկը գիտին էր. Մայրն է էմիա խաթուն. եղբայրն է Ներսէս եպիսկոպոս; Իբր կրոնավոր հիշվում է 1449 թ. Զաքարիան իր հետ էջմիածին տարավ նրան և արքեպիսկոպոս ձեռնադրեց 1461 թ. Զաքարիայի եղերական մահից հետո, վերադարձավ Աղթամար, ուր օծվեց կաթողիկոս (1485 թ). Շարունակելով իր նախորդի փառատենչ քաղաքականությունը և վայելելով Զիհանշահի բարեկամությունը, ուզեց մի նոր շուրջ տալ Աղթամարի աթոռին և Զաքարիա կաթողիկոսի եղբորորդի Մայրատին մեծ հանդեսով թագավոր օծեց. Մրանից հետո գնաց էջմիածին, իրրե Ամենայն Հայոց հայրապետ՝ 1467 թ (Խոտարք 229). Բայց նույն տարին մեռավ իր բարեկամը՝ Զիհանշահ (1444—1467 թ) և գահ բարձրացավ նրա որդին՝ Ուղուն-Հասան: Սա հետեւմ էր տարբեր քաղաքականության և չէր սիրում ոչ Զաքարիային և ոչ էլ Ստեփանոսին: Ուստի Ստեփաննուր ստիպվեց վերադառնալ Աղթամար և ամփոփվել նրա շրջանակում, ուր շինեց Առաքի եկեղեցին «1472 թ»: Մեռավ «1489 թ»: — Հաւաք. 41—43. Զեռ. Վասպ. 469 (հիշված 1474 թ), 459 (1470 թ), Խոտարք 127, 159, 222, 224, 225, 226 (հիշված իբր նորընծայ 1466 թ), Rapport Belgeque 146, Աղգապ. 2170, 2174, 2211 և մանրամասն՝ Ակինեան, Գւզնդիրք 94, 105—119: — Ըստ այլ ժամանակակից ձեռագրի մեռել է 1484 թ (տես Ալպօյաճեան, Պատմ. հայ կես. թ. 1848): — Այս բոլորին հակառակ է դալիս Ստեփաննոս կաթողիկոս Աղթամարի, հաջորդ Զաքարիայի, նստել է «1494—1495 թ»՝ ըստ Աղգապ. 2212, որին համաձայն է Թորոս աղբ. թ. 226 և 446 տրված հիշատակությունը Զե՞՞=1495 թ. (եղբայրն էլ կոչվում է Ներսէս արքեպիս): Այս անպատճենությունը հարթելու համար Ակինեան՝ Գւզնդիրք 115՝ թվականը Զե՞՞=1495 դարձնում է Զժ՞=1465 թ:

— 636. Ստեփանոս Տէր, Միաբան Ազրակու. Ս. Բարխուզի
մէռն վանցի, 1489 թ.—Զեռ. Դադեան, թ. 51 թ.
— 637. Ստեփանոս քահանա Բարեկրցի, «բղի Ներսէ» քա

Հանայի, որ Մավևէս արեղային զբել տվեց մի Յայսմաւուրք,
1489թ.—Manus. brit. mus. 165 p.
— 638 Ա-1. 3.

— 638. Ստեփանոս Քահանա, ամւասին Ալուրիաթունի՝ քրօջ
Խոնտքար տիկնոց, որ Խորոտկայ վանքում զբել ավեց Աւետա-
րանը, 1490 թ. Զեռ. Նոր-Բայազ. 23 ա.

— 639. Ստեփանոս հայր Խաթունմելէքի և պատ Դովլաթ-խաթունի, «ը Աղթամաքում օրինակել տվեց Աւետարանը, 1490թ.—Զիս. Նոր-Բայազ. 12,

— 640. Սաւէփաննոս, կինն է Սաղդաթ. որդիքն են տանու-
տեր Արարշահ, Յովհաննէս քահանա, Յակոբ և Սուլտանջահ,
որոնք Աղքակի Երնկանի գյուղում գրել տվին Տի Աւետարահ,
1490 թ. — Զեռ. Վասպ. 511:

— 641. Ստեփանոս, որդի Արարշահի, նախորդի թռոն է:
 — 642. Ստեփանոս Հայր Մկրտչի, մերձավոր Դովլաթիա-
 թունի, որ Ազթամարում Հայրապետ արեգային գրել տվեց Աւե-
 տարանը, 1490 թ.—Զեռ. Նոր-Բայազ. 12 թ.

— 642р. Ստեփաննոս Նորլնծա քահանա, սպասավոր Սակուաբերդ զյուղի Ա. Ստեփաննոս եկեղեցու 1491 թ.—Աւգեր. Լիոնկ. Վրք. սրբ. ԺԱ. Էջ եր.

— 643. Սալեփանոս առաջնորդ իլվովի. հաջորդեց Խաչատրութիւն. գահակալել է 1491 թ. և մեռել 1492 թին՝ ըստ Ալիշան, Կամենից, էջ է 135, REA 7, 40, Առաջ. 2375.

— 644. Ստեփանիս եպիսկոպոս Դեղաբգե. եղբայր Յավ-
հաննէսի. նստավ 1488 թ. մեռավ 1493 թ.—Բոքոս ազր. թ. 304,
Ալյարատ 346.

— 645. Ստեփանոս, որդի Միքայէկի?՝ եղբայր Յոհանէս
Եպիսկոպոսի, Պռջեանց ցեղից. նորընծայ արեցա էր 1475 թ.
ապա եղագ Եպիսկոպոս Կոստայից, ինչպես հիշված է 1488 թ.
Եղբորորդի Զումայ Բ.ի Պռջեանց. Վերջին հիշտակությունը
1493 թվից է. — Խաղբակեանը 232—4, 236, 239, 240.

— 846. Սանիկարնու, որդի խոջա Միքայելի, որ Ազգամա-
րտում, Յակոբ Կրոնավորին գրել ավեց մի Աւետարան, 1493 թ.—
Ձեռ. Վասպ. 520,

— 647. Ստեփանոս, որդի Սուքիասի՝ եղբար Յակոբ Կրոնա-
վորի, «ը Ազթամարում օրինակեց Աւետարանը 1493 թ.—2եռ.
Վասպ. 520,

— 648. Սահման արեգա Այբի վանից. գրիչ. Համանգուէ

կույսի համար գրեց մի Աւետարան, 1493 թ.—Թորոս աղբ. Բ.
էջ 304:

— 649. Ստեփանոս քահանա, հայր Մովսէս երեցի, որ
Աւագ վանքում Գրիգոր արեղային գրել տվեց մի Աւետարան,
1494 թ.—Զեռ. Բուլգ.՝ ՀԱ 1937, 576.

— 650. Ստեփանոս, գրիչ, օրինակեց Մաշտոց ձեռնադրու-
թեան, 1494 թ. Առնօւոյ վանքում.—Զեռ. Կարին. 141.

— 651. Ստեփանոս, որդի Մովսէս երեցի, որ Աւագ վան-
քում Գրիգոր արեղային գրել տվեց մի Աւետարան, 1494 թ.—
Զեռ. Բուլգ.՝ ՀԱ 1937, 576:

— 652. Ստեփանոս որդի Գրիգորի. Աղթամարում Գրիգոր
գրչին գրել տվեց մի Աւետարան, 1497 թ.—Bodleian 11.

— 653. Ստեփանոս Որմակի, գրել տվեց մի Աւետարան
1497 թ.—Տաշեան, Ծուց. 284 թ:

— 654. Ստեփանոս վարդապետ, վահանայր Խարտիշարի
վանքի, հիշված է 1491 թ. (Bodleian 29) և 1497 թ. (Թորոս
աղբ. Բ. 305):

— 655. Ստեփանոս, կինն է մահաեփ Հուսին. Ճնողներն
են Տէր Աւագ քահանայի, որ Երուսաղէմում, Վրթանէս արեղա-
յին օրինակել տվեց Գանձարանը 1497 թ.—Զեռ. Հալէպի՝ Ա. 150.

— 656. Ստեփանոս, որդի Տէրպարոնի և եղբայր Ցովիան-
ետս վարդապետի, որ Մանահինում գրել տվեց մի գեղեցիկ Շա-
րակաց. 1497 թ.—ՀԱ 1887, 56 ա:

— 657. Ստեփանոս (գրզած է Ստեփաննես); հայր Հարիբը
(Ա. 4), կնջ Առամի, որ Աղրակի Երնկանի գյուղում. գրել տվեց
մի Աւետարան 1498 թ.—Զեռ. Վասպ. 526:

— 658. Ստեփանոս, Կորեզրայր Յավհաննէս քահանայի, որ
Երզանում, Ծուզ որինաց պատմիրով գրեց մի Աւետարան, 1499
թ.—Զեռ. Վենետ. Ա. 577:

— 659. Ստեփանոս, որդի Մովսէսի. Արծէկում մի Աւետա-
րան գրել տվեց Յակոբ եղիսկողոսին, 1499 թ.—Ակինեան,
Մասեն, Էնտագ. Դ. 198:

— 660. Ստեփան Դ. կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Ստ-
եփան Բ.-ի և Նախորդ Յավհաննէս Զ.-ի (ժե դար).—Հաւաք. 61 (կեղծիք):

— 661. Ստեփանոս Ե. կաթուղիկոս Աղթամարի, հաջորդ
Օսմանի և Նախորդ Աննա Զ.-ի (ժե դար).—Հաւաք. 61 (կեղծիք):

— 662. Ստեփանոս Զ. կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ

Սահակ Գ.-ի և նախորդ Դաւիթ Զ.-ի (ժե դար).—Հաւաք. 61
(կեղծիք):

— 663. Ստեփան է կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Յո-
հան Է.-ի և նախորդ Սիոնի (ժե դար).—Հաւաք. 62 (կեղծիք):

— 664. Ստեփաննոս Ը կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ
Կարապետ Ա Խիզանցու և նախորդ Ներսէս Ե.-ի. Շայր առաքինի
յամենայն գործ բարիս (ժե դար).—Հաւաք. 62 (կեղծիք):

— 665. Ստեփաննոս Եպիսկոպոս. գրիչ. օրինակել է Հայոց
Տոմարը և Շիրակացու գործերը (ժե դար).—Շիր. տիեզ. յոջ. XV:

— 666. Ստեփաննոս քահանա, որդի Ամիրը էկի և եղբայր
Մանուէլ քահանայի, որ Գեղարքունեաց Կած գյուղում Յովհան-
նէս Արծկեցուն գրել տվեց մի Ճաշոց (ժե դար).—Զեռ. Սկան. 18.

— 667. Ստեփաննոս, որդի Ղահրամանի, գրիչ. օրինակեց
Գանձակում մի Աւետարան (ժե դար).—Զեռ. Սկան. 18 ա:

— 668. Ստեփաննոս Եպիսկոպոս, առաջնորդ Գանձակի Լե-
զանի Ս. Աստուածածին վանքի (ժե դար).—Զեռ. Սկան. 18 ա:

— 669. Ստեփաննոս որդի Խաչատորի, որ գրել տվեց մի
Աւետարան, 1500 թ.—Զեռ. Նոր. Բայազ. 29 թ:

— 670. Ստեփաննոս Եպիսկոպոս Ճալէթի, ի յաշխարհն
Աղուանից. որա հոգու համար գրվեց մի Աւետարան, 1499 թ.
ապա բերլից Արարատեան գավառի Հառնջոյ վանքը, ուր ոս-
կով և գունագեղ նկարներով զարդարվեց՝ 1505 թ.—Բարիստ. Աղուանից երկ. 247:

— 671. Ստեփաննոս Ուլուխալացի (մոտ Զմշկածագի), ընտ-
րըվեց պատրիարք Պոլսի, բայց պաշտոնանկ եղավ 1550 թ. գնաց
Լեհաստան, ուր գրել է մի Սազմու 1551 թ.—Bodleian 17:

— 672. Ստեփաննոս պատրիարք Պոլսի «1550—1561 թ.
հաջորդեց Աստուածատուր Եագուղեանի. իր օրով Անդրէան
Պարոնաէր պատրիարք Երուսաղէմի զնաց Պոլսի՝ կալվածական
խնդրով, որին օժանդակ եղավ Ստեփաննոսը»—Աղապ. 2260.
(Ալիշան՝ Կամենից 18 արդեն 1549 թվին պատրիարք է դնում
և այցելել է ասլիս Կամենից):

— 673. Ստեփաննոս Ե Սալմաստեցի, կաթուղիկոս Հայոց
«1545—1567 թ. հաջորդեց Գրիգոր ԺԱ-ին, որին նախապետ
աթոռակից էր՝ սկսած «1541 թվից»: Լեղվագետ անձ էր. զիտեր
նակ լատիներեն: Երիտասարդ Ժամանակ ճանապարհորդել էր
Ռուսաստան, Լեհաստան ևն: Հայ ազգի գրիտիյան երազով
«1548 թ. Զ. կաթուղիկոս Սալմաստեցի առաջնորդ պատրիարք Պոլսի»:

մոտ, ապա Գերմանիոյ Կարոլոս Ե կայսեր, բայց անհույս մնալով Հենաստանի և Խրիմի վրայով վերադարձավ Էջմիածին։ Կաթուղիկոսության ժամանակ իրեն աթոռակից էր Միքայէլ Սեբաստացին, որին ավելացրեց ապա Բարսեղ և Գրիգոր։ Գրել է ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ցովհաննու Աւետարանի և Նախերգանք չորից աւետարանչաց, որոնք նաև պարսկերենի է թարգմանել (Զամշ. Գ. 517).—Նաև տաղասաց է. իր տաղերից մեկը գտնում եմ Զեռ. Հալէպի, Ա. 165 նկարագրված Տաղարանում և հետեւյալ ձևով է սկզբում։

Եղուկ և վայ է ինձ որ ի յայս հասայ,
Եւթըն մահու չափ մեղաւք ես ազտեղացայ,
Եւ երկար ժամանակաւք...
ՄՎ Ստեփաննոս վատթար
Հնդէր դու մեղար,
Զպատուիրանն...,

Զեռ. Վասպ. 676 դնում է 1572 թվին Էջմիածնի կաթուղիկոս՝ Ստեփաննոս Զպլախ. այս անունով կաթուղիկոս չկա այդ թվին, Այդ շրջանից գիտենք Ստեփաննոս Ե Սալմաստեցի, որ նստել է «1545—1567 թ»։ և որին հաջորդել է Միքայէլ Ա Սեբաստացի «1567—1576 թ»։ Պետք է ենթադրել թե Զպլախը նույն Սալմաստեցին է, որի մահվան լուրը դեռ չէր հստել հիշատակագրին։—Կամենից, Էջ 135 էլ կարդում ենք, որ Էջմիածնի Ստեփաննոս կաթուղիկոսը գնացել է Հռոմ, հնագանդել Պապին, դարձել իլլով, ուր և մեռել է 1551 թ. Մեջ է բերում նաև նրա լատիներեն տապանագիրը, ուր թվականն էլ դրված է 1551 թ. «...animam suam Deo tradidit 1551»։ Սիալմհնք է, թի քարերին էլ են կեղծում։—Առաք. պատ. 337—8, Ալիշան՝ Հայ. Վենետ. 324—330. Կամենից 19. Հայապ. 592. Ազգապ. 2233—63. և Էջմիածնի, 1944, № 2, Էջ 48 և 1945, օգոստ. Էջ 56 (շատ կարես)։

— 674. Ստեփաննոս Զ Առնջեցի, որդի Պր. Խօճին, աթոռակալ Միքայէլ Սեբաստացի կաթուղիկոսի, որի մահվանից («1576 թ») առաջ արդեն վախճանվել էր։—Առաք. պատ. 338, Ազգապ. 2264, Ալիշան, Կամենից 32, 164, —հիշված է 1563 թ. Զեռ. Լվով (ՀԱ 1936, 509): Ճանիկեան, Հնութ. Ակնայ 70 (իր անթվ. հիշատակարանը իրեւ ստացող մի Շարտկանի)։

— 675. Ստեփանս երեց Եւղուկիացի կամ Թոխաթեցի, տաղասաց, երգիծարան. ծնվել է 1558 թ. Եւղուկիա քաղաքում։ Կրթությունը ստացել է իր քաղաքում. 1580 թվին ձեռնադրվում

է քահանա. 1589 թվին ուխտի է գնում երուսաղէմ և վերադառնում իր քաղաքը։ 1602 թվին Եւղուկիան ենթարկվում է Գարա Եազրձիների ասպատակության. Ստեփանոս քահանային էլ բոնում են և չարաչար տանջանքների ենթարկում։ Ապա կարծելով թե արդեն մեռել է, թողնում են ու հեռանում, Ասպատակների հեռանալուց հետո, շատերի հետ Ստեփանոսն էլ փախչում է Պոլիս (1603 թ), մի տարի հետո Կաֆա (Թէղողոսիա), ուր պարապել է ուսուցչությամբ և ձեռագրեր արտադրելով, Կյանքի վերջերքում դարձավ իր հայրենի քաղաքը, ուր գտնում ենք արդեն 1621 թ. մի քանի տարի հետո էլ վախճանվում է։ Ունի զանազան տաղեր, որոնց ամբողջական հավաքածուն դեռչէ հրատարակված։ Տաղերի մեջ նշանավոր են Ողբ և ոտանաւոր իշերայ Եւղուկիա մեծ քաղաքին (Ղարա Եազրձիների արշագանքի պատմությունն է), Գանդատ ի ձեռաց լուսոց և ճանճից (1614 թ), Գովասանութիւն Կաֆայի քահանայից (այս երկուսը զավեշական) ևն։ Ստեփանոս Թոխաթեցու կյանքի և գրական գործերի մասին տես Ակինեան, Հինգ պանդուխտ՝ տաղասացներ, Վիեննա 1921, Էջ 117—137.—ՀԱ 1924, 238, Նորայր՝ Բո. Փրանս. 52 ա, Տաշեան՝ Ցուց. 489, 987, Յուշիկը թ. 101. Կոստանեանց՝ Նոր ժող. Գ. Էջ զ. Հայապ. 583, 605. Զեռ. Վենետ. թ. 906, 943։

— 676. Ստեփաննոս կաթուղիկոս Աղթամարի. հիշված եմ գտնում ըստ ժամանակակից հիշատակարանների՝ 1608 թ. (Զեռ. Վասպ. 828), 1616 թ. (անդ 852), 1619 թ. (անդ 859, կոչված Աղթամարեցի), և 1621 թ. (անդ 866). Ընդամենը լինում է 1608—1621 թ.՝ 13 տարի. Նախորդ և հաջորդ մի քանի տարիներն էլ հաշվելով՝ բավական է մի անձ ենթադրելու. Այս շրջանի համար Ակինեան, Գւգնոցիրք, Էջ 130 ասում է թե ձեռագրաց մեջ կամ այլուր 1606—1608՝ 55 ամեայ շրջանին Աղթամարաւ, կաթողիկոս չէ յիշուած։ Մեր այս Ստեփաննոսը պատշաճօրեն կարող է լրացնել այդ թերին։

— 677. Ստեփաննոս, աշակերտ Ներսէս Մոկացու († 1627 թ), որի գրած «Պատմութիւն պատկերի Աստուածածնին» տաղի վրա ավելացրեց 300 տուն ևս—Զամշ. Գ. 565։

— 678. Ստեփաննոս տաղասաց, նախ քան 1647 թ. իր տաղերից նմուշներ տես Կոստանեանց, Նոր ժող. Ա. 46, թ. 10. հմմտ. և 682 և 690։

— 679. Ստեփաննոս կաթուղիկոս Աղթամարի. ժամանակակից Էջմիածնի Մովսէս (1629—1632 թ). կաթուղիկոսի. հա-

ջորդել է Գրիգորիս Գ-ին. իրեն հակաթոռ կամ աթոռակից է հիշվում Մարտիրոս Դուռըի 1645—1648 թ. երկուսին էլ մերժում է Ակինեան, Գւզնդիրք 131. Բայց Ստեփանոս կաթուղիկոսի գոյությունը Աղթամարում 1645 թվին անուրանալի է, որովհետև հիշված է Զեռ. Վասպ. 605.

— 680. Ստեփանոս կաթուղիկոս Աղթամարի, հիշված է 1654 թ. (Զեռ. Վասպ. 290). — Տես վերը № 676.

— 681. Ստեփանոս կաթուղիկոս Աղթամարի. հաջորդեց Բաղդասարին, որ նստել էր «1663 թ»: (Տես Ակինեան, Գւզնդիրք, էջ 196).

— 682. Ստեփանոս Կեղեցի կամ Ստեղեցի. տաղասաց. ունի տաղ «Փառք քեզ, թագաւոր փառաց» (օրինակված 1671 թ). — Տաշեան, Ցուց. 792 թ.

— 683. Ստեփանոս կաթուղիկոս Աղթամարի, հաջորդել է Գետրոսին 1670 թ. հիշված է 1671 թ. հայտնի չէ թե ելք է մեռել, բայց անշուշտ 1677 թվից առաջ. — Ակինեան, Գաւազանագիրք 136.

— 684. Ստեփան հայ, բաց արեց Պարիզում երկրորդ սրճարան՝ 1672 թ. — Ալիշան, Ցուցիկք Ա. 73.

— 685. Ստեփանոս Մեղրեցի, միաբան և նվիրակ էջմիածնի. պատրիարք Պոլսի. հաջորդեց Սարգսին «1670 թ». հանդարտությամբ կառավարեց աթոռը՝ սանձելով կուռակցական կորինքը մինչև իր մահը «1674 թ»: — Ազգապ. 2602:

— 686. Ստեփանոս Զուղայեցի. աշակերտ Դաւիթ Զուղայեցու. նստավ առաջնորդ Նոր-Զուղայի (1684 թ). մի ուրացյալ վարդապետի չարախոսությամբ բանտարկվեց մի տարի. հրավիրվեց էջմիածնին և կարգվեց կաթուղիկոս՝ Նահապետ կաթուղիկոսի փոխարեն «1695—6 թ»: Նահապետը կարողացավ գահընկեց անել նրան. Բանտարկվեց Երևանում, ուր և մեռավ «1698 թ» և թաղվեց Խոր-Վիրապում: — Ցուց. 148—153, Զքր. սարկ. Բ. կե. Այրարատ 439. Ազգապ. 2674. Ժամանակակից՝ մի հիշատակություն իր մասին տես Թորոս ազր. Բ. 410:

— 687. Ստեփանոս Լեհացի կամ Իլվովցի. Նիկոլի հայածանքից փախչելով եկավ էջմիածնին և իր հմտության պատճառով Փիլիպպոն կաթուղիկոսից վարդապետական աստիճան ստացավ. Գիտեր քաջ լատիներեն. սովորեց նաև հայերեն, և բատիներենից թարգմանեց զանազան գործեր. ինչ. Պատմութիւն Ցովսեպոսի (1680 թ. տես Սիսական 395 թ), Դիսնեսիոս Արք-

պաղացի և լուծմունք նորին (1682 թ), Վարք Դիսնեսիոսի և յիշատակարան իւր, Արիստոտելի մետաֆիզիկայն, Յաղագս մարդկային հոգւոյ (1668 թ. ըստ Թորոս ազր. Բ. 449), Պրոկոփի Պատմառաց զիբր, Հայելի վարուց, որ է Հարանց վարք Փրանկաց (թրգմ. 1660 թ. տպ. 1702 թ.—ըստ Միարանի ուսութիւնասիրության՝ Հայկականք, Վարչապատ. 1903, էջ 11—30 թարգմանված է լիներենից և ոչ թե լատիներենից), Պատմութիւն Հուրանի, Բուրաստան աղօթից, Հոգեաց գիրք, Սիրաքի զրքի նոր թարգմանությունը (որ տպ. Ուկանի Աստուածաշնչի մեջ), Ինքը նաև նկարիչ էր և նկարել է էջմիածնի տաճարի զանազան նկարները (տես այս մասին նաև Ակինեան, Յովնաթան Նաղաշ, Վիեննա, 1911, էջ 105 ևն), Երբ Յակոբ Բ կաթուղիկոսը գնաց Պոլիս, Ստեփանոսը նշանակվեց փոխանորդ, իսկ նրա մահից հետո տեղակալ («1680 թ»), Մեռել է 1699 թ. ըստ Զագչ. Գ. 620 կամ 1689 թ. ըստ Զեռ. Դաշեան, Ա. 92 թ.—Առաք. պտմ. 314—8, Զքր. սարկ. Գ. 37. Յովնաթ. 30. Կամենից, էջ 140, 144. Այրարատ 223, 241. Զարք. Նոր մատեն. 362—4. թրգմ. 391—4.—իր ինքնաձեռագիրը տես Շողակաթ 213:

— 688. Ստեփան Բ. կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Ներսէս Զ-ի և նախորդ Բաղդասար Բ-ի (Ժէ դար). — Հաւաք. 63 (Կեղծիք):

— 689. Ստեփանոս Ժ. կաթուղիկոս Աղթամարի. հաջորդ Բաղդասար Գ-ի և նախորդ Մարկոս Բլուրմակեցու (Ժէ դար). — Հաւաք. 63 (Կեղծիք):

— 690. Ստեփանոս Շատախցի, տաղասաց Ժէ դարի. — Ցուցիկք, Բ. 126.

— 691. Ստեփանօս Կաֆայեցի, կոչում է իրեն «տրուպ յետին բանաէր», Ալիշանը անվանում է «քահանայ»: գրել է Սահակ Բրուտնեցի († 1715 թ) նոր վկայի նահատակության սրտառուց պատմությունը, որ տպված է նախ Սիսական 345, 328 և ապա արտատպված նոր վկ. 552—9,

— 692. Ստեփանոս Ռոշքա Սարգսեան, Կամենիցացի, Օքիցեալ Ստանիսլաւովու. ծն. 1670 թ. † 1739 թ. Կամենից քաղաքի ավագերեցն էր: Ունի Ֆրամարանութիւն, Փիլիսոփայութիւն, Բարոյական Աստուածաբանութիւն, Նամականի, Ժամանակագրութիւն, բայց իր մեծագույն գործն է ընդարձակ Բառարան հայ-լատին և լատին-հայ, որ կոչվում է Գանձ հայեցին լեզուի. — Զարք. Նոր մատ. 366, Ցաշեան՝ Ցուց. 1152 գ.

— 693. Ստեփաննոս Շահումեան, Սիւնեաց Դաւիթ բէզի նշանավոր գորավարներից մին. Պապի գլխատումից հետո կարգվեց իշխան Գենուազի (1714 թ). Գերի ընկավ թուրքերի ձեռքը 1724 թվի մի պատերազմում, բայց մի թուրք բարեկամի միջոցով ազատվեց, Բայինտուր գորավարի հետ օգնության հասավ Մեղրեցոց, որոնց պաշարել էր Թուրքերի 18,000-անոց բանակը. հաղթեց նրանց և ետ քեց. Պատկանելով Շահումեան տոհմին, որոնք հարուստ առեւրական տուն ունեին Վենետիկում, ինչն էլ գաղթեց Վենետիկ. Այստեղ, Միլիթարեան վարդապետներից մեկին (Հ. Ղուկաս Ստեփանեան, Սերապոտացի. †1751) պատմեց Դաւիթ բէզի ապստամբության պատմությունը, որ և նույն վարդապետը գրի առավ և ապա տպվեց (Պատմութիւն մարտից Ղափանեցւոց). Մահվաղ թիվը հայտնի չէ: — Սիսական 277 բ և 301—302, ուր ընդարձակ տես իրենց ճյուղագրությունը: — Զամչ. Գ. 789—792 կոչում է «Վրթանիսեան»:

— 694. Ստեփաննոս Դաշտեցի (Նոր-Ճուղայից). գրել է Ընձեռութիւն վիճաբանության, Մահաղ փշրանաց (1700 թ), Կոչնակ ճշմարտութեան, Խնդիր ուղղութեան. բայց բոլորից ավելի կարեոր է ժամանակագրութիւն Օսմանեան սուլթանաց (ԺԷ դար). — Զամչ. Գ. 749, Այրարատ 404, Զարք. թրգմ. 213. Տաշեան, Ցուց. 1152 բ, Գիտ. Նյութերի ժող. № 1, էջ 216 բ:

— 695. Ստեփաննոս Զաքարեան, Պրուսացի, մականունը՝ Ազաւի. պատրիարք Պոլսի (1831—39 թ). հաջորդեց Կարապետ Գ Պայտիցուն: Նախապես Արմաշի և Նիկոմիդիոյ առաջնորդն էր: Պատրիարքության ժամանակ զարկ տվեց ուսումնարանական գործին. իր օրով բացվեց Կուսկիտարի ճեմարանը («1838 թ»). Այս ժամանակ սկսվում է բոդրականության մուտքը հայոց մեջ. Ստեփաննոսը անընդունակ զգալով իրեն կովել գրա ղեմ, դահից հրաժարվում է («1839 թ»): Հաջորդ տարին նորից է դահակալում («1840 թ»), բայց ամիրաների դեմ ժողովրդական պայքարի ժամանակ գահնկեց է լինում («1841 թ»), որից հետո քաշվում է Արմաշ, որ արգյունավետ կերպով կառավարում է մինչև իր մահը «1853 թ» — Ազգապ. 3559, 3722, 3732.

— 696. Ստեփաննոս-Կորոս Ժ Ազարեան, կաթողիկոս կաթոլիկ հայոց 1880—1899 թ, իրը հաջորդ Անտոն-Հասունի. — Ազգապ. 4496:

— 697. Ստեփաննոս վարդապետ Հին Զուղայեցի. ունի տագ

առ Դաւիթ Անյաղթ. (ժամանակն անհայտ). — Մանանդեան, Ցունար. դպր. 278:

— 698. Ստեփաննոս պատմիչ ոմնի որի Պատմությունը կորած է. Թվականն էլ անհայտ. — Այրարատ, 5 ծան:

— 699. Ստեփաննոս իմաստասէր, որի խնդրանոք Սամուէլ քահանան գրեց «Մեկնութիւն տոմարի», Թվականն անհայտ: Սրա մի օրինակը արտագրել է Եսայի գրիչը 1626 թ. — Զեռ. Ներս. 33ա:

— 700. Ստեփաննոս երեց, որդի Յովհաննէս քահանայի. տոմարագետ. գրել է «Յաղագս» ընթացութեան արեգական 28 ամաց և շրջագայութեան լուսնին իննետասներիակ ամաց: — Թվականը անհայտ է: — Զարք. Հին դպր. 790:

— 701. Ստեփաննոս գանձասամց. գրել է մի քանի գանձեր. ինչ. Սիրով վառեցար, Սոսկալի աւր ևն. հրտը. Ճռաքաղ 1859, 77—78, Բազմ. 1864, 169 և 1894, 211 ևն (ըստ Տաշեան, Ցուց. 1153 թ): — Ժամանակն անհայտ:

* ՍՏԵՓԱՆՈՒԻՀԻՀԻ, իգ. <Ստեփան անվան իգական ձեռն է, որ միենույն ժամանակ ունի Պատմութիւն ձեր, որ տես առանձին: Սրա հունական իգական ձեռն է Ստեփանի կամ Ստեփանիա, որ տես վերը:

* ՄՐԱՀԱՆԴ, ար. <պրս. Արքայի սարհաց գորավութիւն բառն է, որի վրա տես Սարհանդ: Վերի ձեռվ ունինք միայն մի անգամ հիշատակված:

— Սրտեանց, որդի Զաջուռի Ա., եղբայր Խաղբակ Բ.ի կամ հորեղբայր Զաջուռ Բ.-ի. երկու խաչքար ունի կանգնեցրած Հաւապտուկ լեռան կողին, 1173 թ. հիշված է նաև 1214 թ. — Ցուցանիքեան՝ Խաղբակեանք 31:

+ ՄՐԱՀԱՆԴ, ար. <հյ. սուրբ-հասանել բառերից բարգված, այն է «արագահաս», որ սրբերին տրված ածական է: Մի անգամ ունինք:

— Սրբայեաս, որդի խոջա Յովհաննէսի, որ ժառանգեց Տարոնի իշխան իր հորեղբորորդի խոջա Յովհէփի Մուշում գրել տված Աւետարանը 1488 թ. — Զեռ. Սեր. = ՀԱ 1925, 263.

* ՄՐԱԳԻՈՆ, ար. <հուն. Ըերաթիւն, ավելի լավ Ըարաթիւն անունից, որ ծագում է հույն-եգիպտ. Ծըրաթիւն, Ծարաթիւն աստուծու անունից, որ ընդունել էին նաև Հոռվմայեցրիթ. = լտ. Տերաթիւն: Այս անունը հայտնի են՝ Սրբային հույն բանաստեղծը, Սրբային՝ եղիպտացի կուսակալ Կիպրոսի, Սրբային բժիշկ Ալեքսանդրացի, Սրբային նկարիչ, նաև մի քանի հայրեր և վկաներ,

որոնցից նշանավոր է Սրապիոն արքա՝ ճղնավոր եզիպտացի, որի վարքը մտած է Հարանց վարքի մեջ. Գրվում է Սրապիոն, Սարտապիոն, Սերեպիոն, որոնց մեջ ավելի սովորականն է Սրապիոն. Գործածված է մեր մեջ ժբ դարից և կա նաև այժմ. Կրծատ ձեն է Սրապ (կա և Սիրոտ 1716 թ, Տաշեան, Ցուց 703). Սրանից են Սրապեան, Սրապիօնեան ազգանունները:

— 1. Սրապիոն, նվիրատու ձեռագրի, Տարօն, 1205.թ.—Զեռ. Վենետ. Բ. 473, Հայապ. 450.

— 2. Սրապ, որդի պարսն Ասլան Սերաստացու, որ ստացավ ձառք Եպիփանու, 1350 թ.—Տաշեան, Ցուց. 107 թ:

— 3. Սրապիոն որդի հոստանդինի և եղբայր Յովհաննէս Քահանայի, որ Գրիգոր արեգային օլինսկի տվեց Աւետարանը 1484 թ.—Զեռ. Թաւր. 16:

— 4. Սրապիոն արեղա, Զագավանից վանքին նվիրեց Դաւիթ Անյաղթը (ժե դար).—Այրարատ 291:

— 5. Սրապիոն Օձտեղացի, մեծ զարդապետ, որ ՌԾԲ=1603 թվին ուսուցանում էր Բաբերդի Վահանչինու վանքում.—Գրիգ. Ժմ. 203. Նշի. մատ. 71. (Ա. Տէր-Միքէլեան, հրտր. Սամ. անեց. էջ 301 համարում է հաջորդի հետ նույն բայց չի կարող լինել, որովհետև 1603 թվին Ուռուայեցին կաթողիկոս է օծվել, իսկ նրանից առաջ էլ Տիգրանակերտի առաջնորդն էր):

— 6. Սրապիոն Եղեսացի կամ Ուռայեցի, կաթուղիկոս հաւայց «1603—1606 թ»: Աշակերտն էր Ղուկաս Կեղեցու, որից բնդունց վարդապետական գավազան «1586 թ» (Ազգապ. 2292), Տիգրանակերտի առաջնորդն էր, հայտնի իր գիտությամբ, սըրբակեցիկ վարքով և հարսությամբ: Հասցրել է բազմաթիվ աշակերտներ: Դաւիթ և Մելքիսեդեկ կաթուղիկոսները ծանր պարտքերից նեղված, դիմեցին նրան և խնդրեցին գալ փրկել եղմիածինը: Սրապիոն վարդապետը 1602 թվին եկավ Զուղա (Հին), ուր գնացին նաև երկու կաթուղիկոսները, որոնք կշտամբվելով իրենց վարքի համար՝ քաշվեցին Տաթեկի վանքը: Զուղայեցիք տեսնելով Սրապիոնի բարեմասնությունները, տարին էջմիածին կաթուղիկոս օծեցին Գրիգոր ժֆ անունով («1603 թ»), Կաթուղիկոսները դիմեցին Շահարասին, որ ոչ միայն բռնի զանձեց պարտքերը նրանցից, այլ և նոր պահանջներ գրավ Սրապիոնի վրա: Նա հեռացավ Տիգրանակերտ, ուր և մեռավ մի տարի հետո «1606 թ»:—Առաք. պամ. 3—8, 14, 18—20, 25, 159, 184, 217, 19, 338, 340. Դրնդ. 367—370. Թորոս աղբ. Բ. 419, 430,

442, 464, 484. Զեռ. Հալեպի, Ա. 224 թ. Զեռ. Թեհր. 1 թ=ՀԱ 1935, 309. Ազգապ. Փ 2291—6.—Դրել է պատմական մի աշխատություն, որ հասցրել է մինչև 1601 թ. սրա համար Դարանաղցին ասում է թէ նախանձորդ մարդիկ անհետացրել են: Սրապիոնի աշակերտն է Գրիգոր վրդ. Կեսարացի, որ դրել է Պղը և 128 ար:

† ՄԵՐՈՒՀԻՆԻ, իգ. <հ. Սուրբ բարի իզականն է և Աստուածածնի 7 անուններից մեկն է (Սրբուհի, Ցիրուհի, Խոկուհի, Մաքրուհի, Մաքրուսի, Դշիրոյ, Մաքրամ), Կրծատ ձեերն են Սուրբիկ, Սրբուն: Հնագույն հիշատակություններն են՝ Սրբուհի/մայր Մոլդավիոյ Յովհաննէս Անգութ իշխանը՝ 1572—4 թ. բառ հան: Արեւել. հայք 27, Կրե միայն սուրյու է), Սուրբիկ (իմա Սուրբրիկ): Հիշված 1664 թ (Bodleian 252), Մրբուհի՝ 1782 թ. (Զեռ. Ազուր. — Արբ. 1911, 317), 1796 թ. (Էփր. 448),

ՄԵՐԵՄ, ար. ծագութ ինչ անայս:

— Սրեմ, ձիազողերի զիխագորն էր, որ իր բնկերներով միասին գողացավ Պարսից Սուրբն գորագորի երամակը. Մրեմը կավեց Պարսից զեմ և սպանվեց. իր Բաղգած տեղը կոչվեց Սրեմածոր: Ժամանակակից է Գայլ Վահանի որդի Սմբատին (603 թ), Մամիկ դ:

Սրմա և Սրբմա:

* ՄԵՐԱՆԴԱՐ, ար. <արար. Հայկական թագավորությունն է (ազելին ան Սպաններ): Անունն է Մակեդոնացի մեծ աշխարհակայի ան ևս Ա. 106: Պարսկական ասասպելը գարձրել է նրան որդի Եարեւել. որի կինն էր Անահետը՝ զուսար Փիլիպոս կայսեր հունաց (Հայն. հա. 5, էջ 44), Լեկենդը անունը առաջացել է ինչ որ բռյասի անունից, որ զործ զրին թօիշկները Անահետի հուսած չամչը բռմելու համար: Արար. ձեւ կազմված է նախ հունարենի Ա-Նախազանկը կրթանելով՝ իրը թե արարերենի որդիք չէ ազգը պահ աշխատիս: Թյամիր էկէտ. և որդինեւ արարերենամ երկու բաղաձայնով սկսվող բռերը ստանում են (Հ. 3) Նախազանկի զարդարը համար Բլատը՝ արար. Անահետ, Ֆրանց Վիլհելմ), ըստ ոյս էլ ձեռցել է Խաչունը: Սեր մեջ այս անգամ զարթածությունը մեծ գործից է սկսում. զրգած է Սքանզար, Ականզար, Խոկանզար, Խոկնաշեր, Խոցենաշեր, Խոցանզար, Խոցանասար, Խոցանգար, նաև Սքանզը Հոսուրը 160, 224, 282, ձերով Ընդ:

անվան այսքան ուշ հիշատակությունը մեր մեջ՝ ցույց է տալիս, որ փոխառությունը կատարված է Ղարա Իւսուֆի որդի Խաքենդելու Շահի-Արմէնի անունից, որ 17 տարի զիցազնարար կոիվ մղեց Լևնիթիմուրի որդի Շահուսի դեմ և մինչև վերջ անպարտելի մնաց (1421—37):

— 1. Սբանդար, որդի Թաճինի, որ Արճէշ քաղաքում, Կարապետ գրչին գրել տվեց մի Յայսմաւուրք 1437 թ.—Նօտարք 111—2:

— 2. Սկանդար բժիշկ, որի որդին՝ Յովհաննէս բժիշկը իւրմաղեց մի Բժշկաբան 1438 թ.—Տաշեան՝ Ցուց. 740:

— 3. Խօկանդար, երեք Փլորիսկ վաճառեց իր ունեցած Աւետարանը Յովհաննէս քահանային 1439 թ.—Ձեռ. Հալէպի, Ա. Էջ 83 բ:

— 4. Սբանթար խոջա, որդի պարսն Զաքարի և եղբայրանուտեր Արդլազիզի, որ Ոստանում, գերությունից փրկեց մի ծաշոց 1459 թ.—Նօտարք 194:

— 5. Սբանդար, ազգանունն է Ասլան-Մելքենց, հավատքի համար՝ հահատակվել է 1465 թվից հետո.—Նօտարք 220, Ազգապ. համ. Բ. Էջ 2172:

— 6. Խսկենդէր, որդի Սմբատ թագավորի (1466 թ) և հայր Գրիգոր (Ն. 704) Ա Ազքամարցի կաթուղիկոսի:—Ակինեան՝ Գրկնդիրք 108, 111:

— 7. Սբանդար, որդի Վարդանի և եղբայր Եղիշահի, որ ստացավ մի Աւետարան 1475 թ.—Ձեռ. Վասպ. 472:

— 8. Սկանդար, փեսա Ղարիպիսաթունի, որ գրել տվեց մի Աւետարան Բուստի անապատում 1489 թ.—Սմբատեանց՝ Երևանցակ 276:

— 9. Սբանդար ոսկերիչ, զարդարել է մի Աւետարան, որ նվիրվել է Սշոյ Ս. Կարապետ վանքին 1496 թ.—Յովսէփեան, Մի Էջ հայ արք. 43, 45:

— 10. Խսկենդար ոմն հիշած է ԺԶ դարում (տես Ֆ. Մուրատ, Յայտ. յովհ. Էջ լիսա):

— 11. Սբանթար տանուտեր Ուռհայեցի, որին նահատակեց Ղարայեազիճին՝ Արքահամ քահանայի հետ միասին «Ռեթ=1600 թ» հունվ. 22, գշ.—Սամ. անեց. շար. 176=Առաք. պտմ. 490 և Նոր վկ. 422: — Պատկեր աւուրն բոլորովին ճիշտ է դալիս:

— Ավելի ուշ հիշած են Խսկանդար 1655 թ. (Թորոս աղբ. Բ. 372), Ասբանդար 1808 թ. (Ձեռ. Վասպ. 389), անթվ. (անդ, Էջ 327):

† ՍՕԾ, որ և Սօսի, ար. <: յ. սօսի ծառի անունից. (հմմտ. պրս. Թրք. Ճնա Ծոնց, որ նշանակում է նույնպես «սօսի» և նույնպես մեր մեջ դարձել է անձնանուն, բայց այս անգամ իգական գործածությամբ, մինչդեռ Սօսի արական է. տես վերը՝ Էջ 213). գործածական է այժմ. անմահացած է Պոչեանի «Սօս և Կարդիթեր» գեղեցիկ վեպով. ավելի հնից ունինք Բեզոսի 1686 թ. (Խաղբակեանք 255):

† ՍՕՍՈՒԻՆ, իգ. <ժդ. սօսուն «գեղեցիկ» բառից. (այս բառը գործածական է միայն Խրիմի և Նոր-Նախիչևանի բարբառով և ուրիշ տեղ գործածություն չունի. տես իմ Գւռ. բռ. Էջ 978 ա. իսկ Վանեցոց բարբառով սոսուն կամ սուսուն նշ. «Ըեռնային մի գեղեցիկ ծաղիկ կարմիր գույնով»). իբրև անձնանուն հիշած է մի անգամ 1696 թ.՝ սեռ. Սօսընի ձեռվ (Տաշեան՝ Ցուց. 591 բ) և մի անգամ էլ սեռ. Սաւանին ձեռվ՝ անթվ. (Ձեռ. Վասպ. 150):

ՎԵՐՋ Դ ՀԱՑՈՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն	7
Ը	100
Ո	185
Զ	210
Պ	217
Ջ	286
Ռ	312
Ս	334

Հ. ԱԺԱՐԵԱՆ

ՀԱՅԻՑ
ԱՂՋԱՎԵԼՄԵՐԻ
ԲԱՐԱՐԱ

Դ. ՀԱՏՈՐ

Ա. տպագրութիւն՝ Երեւան 1948
Բ. տպագրութիւն՝ Պէյրութ 1972

هـ. اجاريان
قاموس أسماء
الأعلام الأرمن
الجزء الرابع

H. ADJARIAN
**ARMENIAN
PERSONS
NAME
DICTIONARY**

Forth Volume



دار كيليكيا CILICIA
محنة - تشر - قرطاسية
BOOKSTORE , STATIONERY & PUBLISHING HOUSE
SYRIA - ALEPO - SULEIMANIE TEL: 4642339 - FAX: 4600139 - P.O.Box: 6523
e-mail:cilprint@scs-net.org www.ciliciabooks.com